



ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ՀԱՆՁԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՄԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**
- **ԻՐԱՎԱԲԱԿԱՆ ԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ**
Ըմբռնման տիպաբանության հիմնահարցը
- **ՔՐԵԱԿԱՏՎԱՐԱԿԱՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**
- **ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՔՆԵՐԻ ՀԱՄԱՐԳԸ**
Ըստ <<քրեական դատավարության
օրենսգրքի նախագծի
- **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԸ**

ՆԵՐՈՒՄԱԿԴՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ ԱՐՎԱՆԻ ՍԵՓՅԱՆԸ և Հայաստանում ԱՄՆ դեսպան ԶՈՒ ՀԵՖԵՐՆԻ 2012թ. սեպտեմբերի 8-ին ստորագրել են ԱՄՆ-ի և ՀՀ-ի միջև դեռևս 2001թ. կնքված թմրամիջոցների հսկողության և իրավապահությունը համագործակցության նամակ-համաձայնագրի 14-րդ փոփոխությունը կատարելու մասին արձանագրությունը: Այս փոփոխությամբ մոտ 2,5 մլն դրամի լրացուցիչ աջակցություն է նախատեսվում, որն ուղղվելու է ՀՀ-ում դատարանական ոլորտում մի շարք ծրագրերին:



Նոր աջակցություն իրավապահ ոլորտին


ՀՀ գլխավոր դատախազը փաստաթղթի ստորագրումից հետո կայացած բրիֆինգում, մասնավորապես նշեց, որ այս համաձայնագրով առայսօր տրամադրված մոտ 18 մլն դրամ աջակցության շնորհիվ իրավապահ ոլորտում բազմաթիվ լուրջ ծրագրեր են իրականացվել, որոնք հանգեցնել են ոլորտի զարգացմանը, մասնավորապես՝ ձևավորվել և կայացել է դատավան փորձաքննությունների ազգային բյուրոն, որի շնորհիվ այսօր այն գործում է որպես անկախ փորձաքննությունների բյուրո: Ձևավորվել է ֆինանսական դիտարկումների կենտրոնը, ծրագրեր են իրականացվել փողերի լվացման, թրաֆիկինսգի և կոռուպցիայի դեմ պայքարի դաշտում: Այս նոր աջակցությունն ել, ըստ գլխավոր դատախազի, դարձյալ տրամադրվելու է իրավական ոլորտի զարգացմանը, մասնավորապես կավելացվի փորձաքննությունների տեսականին, կակտիվացվի թրաֆիկինսգի և կոռուպցիայի դեմ պայքարը: Աջակցությունը կտրամադրվի նաև քրեական դատավարական օրենսգրքի, քրեական

օրենսգրքի նախագծերի մշակմանը և դրանց հետագա կիրառման հետ կապված հարցերի լուծմանը:

Դեսպան ԶՈՒ ՀԵՖԵՐՆԻ մինչ կանդրադառնար ստորագրված փաստաթղթին, հարկ համարեց Հայաստանի շահմատի հավաքականի եռակի օլիմպիական չեմպիոն դառնալու կապակցությամբ ԱՄՆ ժողովրդի անունից շնորհավորել Հայաստանի ժողովունի:

«Ես ցավում եի իմ երկրի հավաքականի համար, բայց Հայաստանի թիմը ամերիկյան թիմին զախշախիչ պարտության մատնեց: Հիմա ես սրտանց շնորհավորում եմ ձեզ այդ տիտղոսը նվաճելու կապակցությամբ :»

Այնուհետև դեսպանը նշեց, որ այս համագործակցությունը կարևոր է հանցավորության դեմ միասին պայքարելու առումով: Համագործակցության շրջանակում հաջողություններ շատ են եղել, մասնավորապես՝ թրաֆիկինսգի դեմ պայքարում: Դեսպանը գոհունակությամբ նշեց համայնքային ուսումնական մոդելի կիրառման աշխատանքները Հայաստանում: Նա հոյս հայտնեց, որ համագործակցությունը ԱՄՆ իրավական ոլորտի և Հայաստանի իրավապահ ոլորտի միջև հաջողությամբ կշարունակվի նաև հետագայում:



№73

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՇԴԵՄ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 թՎԱԿԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՏԻԵԼՅԱՆ - նախագահ
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԱՏԻԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՐԴԱՄ ՇԱՐԻՆՅԱՆ
ԳԱՈՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
ՅՈՎՐԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գլխավոր Խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.
375010, ք. Երևան, Յանրապետության փ., 85
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72
www.genproc.am

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառածերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Ստորագրված է տպագրության՝
22.10.2012 թ.
Ֆորմատ՝ 70 X 100 1/16
Տպաքանակ՝ 500
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում
Երևան, գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2012 թ.

2012

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՅ)
կողմից ընդգրկված է թենածանուան (1999թ.)
և դրսորուական (2002թ.) ասենախտությունների
հիմնադրույթների հրապարակման համար բույլատրելի
գիտական պարբերականների ցանկում:

ՀԱՆՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՄ ՀԱՄԱՏԵՂ ՈՒԺԵՐՈՎ

Չնորհակալական նամակ Նիդերլանդներից

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ ԱԴՎԱՍ
ՀՈՎՍԵՓՅԱԼԵԼ, կոնկրետ քրեական գործով ՀՀ դատախազության և
Նիդերլանդների թագավորության ազգային ուստիկանության
համագործակցության արդյունքում իրականացված արդյունավետ
գործունեության համար շնորհակալական նամակ է ստացել
Նիդերլանդների ազգային ուստիկանության քրեական հետաքննության
ծառայության գլխավոր տնօրենից, որում ասված է.

«Հարգարժան պարոն Աղվան Հովսեփյան, թույլ տվեք Ձեզ երախտագիտություն հայտնել TOLLING-ի գործով հետաքննության ընթացքում արդյունավետ համագործակցության համար: Ձեր աջակցության և արոֆեսիոնալիզմի շնորհիվ կասկածայլ ձերբակալվել է Երևանի օդանավակայանում:

Նիդերլանդների ուստիկանության բարձր տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի բաժնի աշխատակիցների և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում մենք զգացել ենք համատեղ աշխատելու և գործը դատարան ուղարկելու հայկական կողմի մտադրությունը:

Նիդերլանդների ազգային ուստիկանության բարձր տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի բաժնի կրոմից իրականացված միջոցառումների ընթացքում համագործակցել ենք Հայաստանի գլխավոր դատախազության վարչության պետ պարոն Արթուր Գրյունյանի, դատախազ պարոն Գրիգոր Տիգրանյանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների հետ: Երանք աշխատել են սերտորեն համագործակցելով Նիդերլանդական կողմի ներկայացուցիչների հետ, ինչը թույլ է տվել մեզ հաջողությամբ գործն ուղարկել դատարան:

Մենք դրական ենք գնահատում այն փաստը, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի Նիդերլանդների և Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունները բավականաչափ նման են: Դա զգալիորեն ավելի պարզեցնում է մեր համագործակցությունը:

Ինչպես վերցերս տեղեկացանք, հիշյալ գործով մեղադրյալ դատապարտվել է չորս տարվա ազատազրկման: Այդ փաստը կարող է մեր սերտ համագործակցության օրինակ ծառայել: Ես հուսով եմ, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների լեզվացման փաստով պարոն Ավանեսովի դեմ հարուցված քրեական գործը ևս հաջողությամբ կավարտվի:

Մենք հոյս ունենք մոտ ապագայում շարունակել քրեական գործերի հետաքննության աշխատանքները ինչպես համակարգչային տեխնոլոգիաների, այնպես էլ այլ ոլորտներում: Խնդրում ենք Ձեզ դիմել Նիդերլանդների ազգային ուստիկանության քրեական հետաքննությունների ծառայություն բոլոր այն դեպքերում, երբ մենք կարող ենք օգտակար լինել»:

ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Եվրոպայի խորհրդի փորձագետին

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանն 2012թ. օգոստոսի 22-ին ընդունել է «Վատ վերաբերնունքի և անպատճելիության դեմ պայքարի ուժեղացման» ծրագրի շրջանակուներում Եվրոպայի խորհրդի փորձագետ երիկ Սվանիձեն: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ Թամացյանը և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Միլվիա Զեհեն:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մասնավորապես քրեական գործերով ոստիկանության բաժիններում վկաների, բերման ենթարկվածների, ծերեակալվածների նկատմամբ բռնությունների կամ այլ վատ վերաբերնունքի վերաբերյալ դիմում բողոքների քննարկման առանձնահատկանություններին առնչվող հարցեր: Կողմերը կարևորել են այդորինակ ահազանգերով հատկապես անկողմնակալ և բազմակող-



մանի քննության իրականացումը՝ անկախ քննչական մարմնի մասնագիտացված ստորաբաժանման կողմից:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակել փոխգործակցությունն ու օրենսդրական դաշտի զարգացման ուղղությամբ աշխատանքները՝ հաշվի առնելով Եվրոպական չափանիշները:

Բարեփոխումների նոր հայեցակարգ

**ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանն ընդունել է
Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի
նեկավար Ռոնալդ Մանգումին**

Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխգործակցությանը վերաբերող հարցեր՝ կարևորելով համագործակցությունը հատկապես դատադիրակական համակարգի բարեփոխումների իրականացման ընթացքում: Ներկայացնելով Հայաստանի դատախազության համակարգում իրականացված բարեփոխումների նախորդ փուլերը՝ Ա. Յովսեփյանը նկատել է, որ ուսումնասիրվել են արդյունքները, արձանագրված բացքություններն ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ նիշազգային փորձը, որի հիման վրա մշակվել է բարեփոխումների նոր հայեցակարգը: ՀՀ գլխավոր դատախազը տեղեկացրել է նաև, որ դատախազության առաջարկությամբ ԵԱՀԿ

փորձագետ Զնն Պերսոնն ուսումնասիրել և գնահատել է բարեփոխումները՝ ներկայացնելով առաջարկությունների փաթեթ: Առաջիկայում ԵԱՀԿ-ն պաշտոնապես կներկայացնի փորձագետի եզրակացությունը, որում ներառված առաջարկությունները և կընդգրկվեն դատադիրակական բարեփոխումների՝ 2012-2016թ. ռազմավարության ծրագրի՝ դատախազությանը վերաբերող բաժնում:

Ռոնալդ Մանգումը, բարձր գնահատելով նախորդ տարիներին ծևավորված համագործակցության փորձը, հավաստել է իր պատրաստակամությունը՝ աջակցել ռազմավարության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

ՀՀ գլխավոր դատախազն ու Մեծ Բրիտանիայի դեսպանը քննարկել են համագործակցության հարցեր



ՀՀ գլխավոր դատախազ Ալվաճ ՇՈՎ-ՍԵՓՅԱՆ ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Քերին Լիչին:

Հանդիպման ընթացքում քննարկվել

են փոխգործակցությանը վերաբերող հարցեր՝ հատկապես դատաիրավական հանձնակարգի բարեփոխումների վերաբերյալ: Ջուրի խնդրանքով գլխավոր դատախազը ներկայացրել է դատախազության համակարգը՝ ներկայիս գործառույթներն ու կառուցվածքը, իրականացված բարեփոխումների ուղղվածությունը և նոր մարտահրավերները:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել առաջիկայում ևս շարունակել քննարկումները՝ մասնավորապես դատաիրավական առաջնահերթ բարեփոխումների՝ 2012-2016 թթ. ռազմավարության ժրագրի իրականացման ընթացքում համագործակցության ուղիները նախանշելու վերաբերյալ:

Կզարգացվել փոխգործակցության մեխանիզմները

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Դանիելյանը 2012թ. հոկտեմբերի 4-ին ընդունել է Հայաստանում ԱՄՆ դեսպանության նորանշանակ մշտական իրավախորհրդատու Ջոն Լուլեջյանին: Հանդիպմանը մասնակցում էր նաև Մթիվ Կես-լերը, ով ավարտում է մշտական իրավախորհրդատուի իր առաքելությունը Հայաստանում:

Ողջունելով հյուրին՝ Ա. Դանիելյանը հաջողություն մարդեց նրան՝ իր առաքելություն իրականացնելու ընթացքում՝ հույս հայտնելով, որ կշարունակվեն ծևալորված արդյունավետ համագործակցության ավանդույթները: Արձանագրելով պետությունների միջև իրավական համագործակցության բնագավառը կարգավորող համաձայնագրերի բացակայությունը՝ կողմերը բարձր գնահատեցին երկուստեղծ դրսևովով պատրաստակամությունը՝ հանագործակցելու հանցավորության դեմ պայքարում, որի շնորհիվ ծևավորվել է դրական փորձ, և հույս հայտնեցին, որ առաջիկայում ևս կպահպանվեն ու ավելի կզարգացվեն փոխգործակցության մեխանիզմները:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Դանիելյանը շնորհակալություն է հայտնել Ս. Կեսլերին՝ անցած մի քանի տարիների ընթացքում բեղմնավոր ու արդյունավետ աշխատանքի համար:

ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհուրդն անհանգստություն է հայտնել **Սաֆարովին Ադրբեջանում հերոսացնելու կապակցությամբ**

**ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մնացական Սարգսյանի գլխա-
վորած պատվիրակությունը 2012թ հոկտեմբերի 2-ին մասնակցել է Ռուկ-
րաինայում կայացած ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատա-
խազների համակարգող խորհրդի հերթական նիստին:**

Ի թիվս այլ հարցերի՝ նիստի օրա-
կարգում ընդգրկված է եղել նաև հանցա-
վորության դեմ պայքարի վերաբերյալ
միջազգային պայմանագրերի կատար-
ման պրակտիկայի և այդ ուղղությամբ
աշխատանքների կատարելագործմանը
վերաբերող հարցը, որի ժամանակ ՀՀ
գլխավոր դատախազի տեղակալը ԱՊՀ
անդամ-պետությունների գլխավոր դա-
տախազների ուշադրությունն է հրավի-
րել Ադրբեջանի կողմից միջազգային
պարտավորությունները խախտելու
փաստի վրա:

Ս.Սարգսյանը նախ տեղեկացրել է
ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովի
կողմից կատարած ոճրագործության
մասին, ով, Բուդապեշտում մասնակցե-
լով ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հա-
նուն խաղաղության» ծրագրի շրջանակ-
ներում կազմակերպված դասընթացնե-
րին, 2004 թվականի փետրվարի 19-ին
կացնով սպանել է քնած հայազգի սպա
Գուրգեն Մարգարյանին՝ նրա ազգային
պատկանելիության, հայ լինելու համար
և ընդգծել, որ Հունգարիայի դատարա-
նի կողմից 2006 թվականի ապրիլի 12-ին
Սաֆարովը դատապարտվել է ցմահ
ազատազրկման:

«Ադրբեջանական և հունգարա-
կան իշխանությունների գաղտնի գոր-
ծարքի արդյունքում Հունգարիան
2012թ օգոստոսի 31-ին Ռամիլ Սաֆա-
րովին հանձնել է Ադրբեջանին: Բաքու
ժամանելուն պես Ադրբեջանի նախա-

գահ Իլհամ Ալիևը հանցագործին նե-
րում է շնորհել, նրան ազատել պատ-
ժի հետագա կրումից: Բացի այդ,
ավագ լեյտենանտի կոչում ունեցող
հանցագործին շնորհվել է մայորի կո-
չում, վճարվել 8 տարվա աշխատա-
վարձը՝ այն տարիների համար, որոնք
նա անցկացրել է Հունգարիայի բան-
տում, նվիրել են բնակարան: Իրավա-
կան տեսանկյունից Ադրբեջանի նա-
խագահը ոչ թե ներում է շնորհել, այլ
գործնականում արդարացրել է Սա-
ֆարովին՝ փոխհատուցելով այն
վճասները, որոնք նա կրել է պատժի
կրման ընթացքում: Այդպիսով, քաջա-
լերել է եթնիկ հողի վրա կատարված
սպանությունը, ինչը նպաստավոր
պայմաններ է ստեղծում այսօրինակ
հանցագործությունների կրկնության
համար ոչ միայն Ադրբեջանում, այլ
նաև այլ երկրների տարածքում», - իր
ելույթում նշել է ՀՀ գլխավոր դատախա-
զի տեղակալը՝ արձանագրելով, որ այդ-
պիսով Ադրբեջանը խախտել է միջազ-
գային կոնվենցիաներով ստանձնած
պարտավորությունները: «ԱՊՀ անդամ-
պետությունների գլխավոր դատա-
խազների համակարգող խորհրդությունը կարող համարժեք գնահատական
չտալ Ադրբեջանի գործողություններին, այլապես խորհրդի շրջանակնե-
րում ստորագրվող փաստաթղթերը՝
որոշումները, համաձայնագրերն ու
պայմանագրերը կորցնեն իրենց

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԵՐ

գործնական նշանակությունը», - հայ- րել 4 կետից բաղկացած բանաձև, որում տարարել է Ս.Մարգարյանը և ներկայաց- մասնավորապես ասվում է.

«... Յաշվի առնելով, որ Ադրբեյջանի իշխանությունները ներում շնորհելով հանցագործին, նրան տալով մայորի կոչում, վճարելով աշխատավարձ և նվիրելով բնակարան կոպտորեն խախտել են «Դատապարտված անձանց հանձնելու մասին», «Սարդու իրավունքների և իիմնարար ազատությունների մասին» կոնվենցիաների պահանջները, համամարդկային արժեքներն ու խրախուսել էթնիկ հողի վրա կատարվող սպանությունները և ըստ այդմ պարարտ հող են ստեղծել այդօրինակ հանցագործությունների կրկնության համար՝ ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհուրդը»:

1. Դատապարտում է Յունգարիայի դատարանի կողմից դատապարտված հանցագործ Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելու մասին Ադրբեյջանի նախագահի որոշումը:

2. Դատապարտում է Ռամիլ Սաֆարովին Ադրբեյջանում հերոսացնելու, ինչպես նաև նրան մայորի կոչում տալու, ութ տարվա աշխատավարձ վճարելու ու բնակարան նվիրելու փաստը:

3. Գտնում է, որ Ադրբեյջանի իշխանությունները կոպտորեն խախտել են դատապարտված անձանց հանձնելու մասին կոնվենցիայի պահանջները:

4. Անհանգստություն է հայտնում, որ քնած հայ սպային էթնիկ հողի վրա սպանած հանցագործին Ադրբեյջանում խրախուսելը կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել նմանատիպ հանցագործությունների կրկնության համար»:

Բանաձևը ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների համար կարգող խորհրդի կողմից ընդունվել է ի գիտություն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՀՀ ՆԱԽԱԳԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻԿ

Հայաստանի Հանրապետության
անկախության հոչակման 21-րդ
տարեդարձի կապակցությամբ
«Հ նախագահի իրամանագրով
ՄԽԻԹԱՐ ԳՈԾԻ մեդալով պարգևատրվել է
Հ գլխավոր դատախազության ավագ
դատախազ, արդարադատության
հռաջին դասի խորիրդական
Հարություն ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵՑԱԾԵ:



ՊՈԿՏՈՐԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական խորհուրդների որոշումներով, ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունների արդյունքում, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ԱՐՄԱՆ ԹԱՍՍԱՉՅԱՆԻ և ՀՀ գլխավոր դատախազության հրավական ապահովման և եվրափառեգորման բաժնի պետ ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆԻ շնորհվել են հրավարանական գիտությունների դոկտորի գիտական աստիճաններ:

Ընդհանուր մեր պարբերականի երկարամյա հեղինակներին և գործընկերներին ատենախոսությունների փայլուն պաշտպանության հաճելի առիթով, մաղթում ենք նորանոր հաջողություններ և ակնկալում են ավելի սերտ համագործակցություն «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» գիտագործնական հանդեսի հետ:

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ

ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿ ԶԻՎԱՆԻ

Ծնվել է 1971 թվականին, Սևան քաղաքում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը և ՀՀ Կառավարման ակադեմիան:

Բանակում պարտադիր գինվորական ծառայությունն անցնելուց հետո, 1994 թվականից աշխատանքի է անցել ՀՀ դատախազության համակարգում. Սևանի ապա Երևանի կայագործների գինվորական դատախազությունների քննիչ, ավագ քննիչ, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության ՀԿԳ քննիչ, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի դատախազ, ավագ դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, արժանացել է խրախուսանքների և պարզմերի:

ՀՀ գլխավոր դատախազի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի հրամանով ՀԱՅԿ Ասլանյանը նշանակվել է Երևանի կայագործ գինվորական դատախազ:

Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման հիմնական ուղղությունները

Արմեն ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Կրդարադատության առաջին դասի պետական խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Մեր նախորդ իրապարակումներում, որոնք լուս են տեսել սոյն ամսագրի անցյալ տարիների տարբեր համարներում¹, անդրադարձել ենք Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության մշակման անհրաժեշտության հիմնավորմանը, այդ տեսության մշակման հիմքերի հասկացությանն ու տեսակներին, տեսության առարկային, եռորդական, մեթոդաբանությանը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի ընդիհանուր հիմնահարցերի գիտական արդյունքները իրավապահ մարմինների գործունեության մեջ ներդնելուն առնչվող հիմնահարցերի լուսաբանմանը:

Եերկա իրապարակման շրջանակներում կիրքածել հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման հեռանկարներին առնչվող հարցերի շրջանակը, մասնավորապես բացահայտել քննարկվող տեսության զարգացման հիմնական ուղղություններին վերաբերող հարցերը:

Յուրաքանչյուր տեսություն ունի իր ճակատագիրը և զարգացման ապագան, որոնք որոշվում են տեսության գործառնական հնարավորություններով, որպիսիք, բնականաբար, կարող են ի հայտ բերվել միայն տեսության ստեղծման և գործողության ընթացքում: Տեսության նման հնարավորություններից մեկն էլ դրա զարգանալու ունակությունն է², որը կանխորոշում է տեսության կենսունակությունն ու ստեղծագործական ուժը:

Ասվածի լույսի մերքո, խոսելով հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության հերանկարների մասին, հարկ է նկատի ունենալ առաջադրված գաղափարի հետագա զարգացման հնարավորությունների բացահայտումը: Կասկածից վեր է, որ գիտական տեսությունը պետք է ծառայի հասարակության շահերին, նրա հարածուն պահանջնունքների բավարարմանը և որ-

պեսզի տեսությունը ի վիճակի լինի իրականացնելու իր այդ սոցիալական կոչումը, այն պետք է համարժեքորեն արտացոլի ռեալ իրականությունը, հասարակության համապատասխան պահանջնունքները: Այստեղից էլ ձևավորվում է հասարակության օբյեկտիվ պահանջնունքը տեսության մշտական կատարելագործման և զարգացման հարցում: Տեսության և պրակտիկայի հարաբերությունների դիալեկտիկան այնպիսին է, որ քարացած տեսությունը դադարում է լինել ծշմարիտ, իրականության զարգացման օրինաչափությունների և նիստունների համարժեք արտացոլումը: Այն կարող է ապակողմնորոշել մարդկանց պրակտիկ գործողությունները, որանց հաղործի ռեալ պահանջնունքներին չհամապատասխանող ուղղվածություն և այդպիսով դառնալ սոցիալական առաջադիմության արգելակ: Քետևաբար, տեսության զարգացումը օրենկ-

¹ Տե՛ս, Օրինականություն, 2005, թիվ 34, էջ 10-14, 2006 թիվ 35, էջ 2-7, թիվ 36 էջ 2-5, թիվ 37, էջ 2-8, թիվ 38, էջ 2-11:

² Տե՛ս, Ստեպին В.С. Структура и эволюция теоретических знаний. Природа научного познания. Логико-методологический аспект. Минск, 1979, էջ 179-258:

տիվ, սոցիալապես օգտակար և անհրաժեշտ գործընթաց է:

Նկատենք, որ գիտության մեջ «գոյություն չունեն ծևական չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս սահմանել տեսության կիրառելիության սահմաները»³: Մշակված չեն նաև տեսության զարգացածության մակարդակը որոշող չափանիշները: Չնայած դրան, մեզ հետաքրքրող հիմնահարցերից շատերը կարելի է որոշել ելնելով կոնկրետ և արդյունավետ բովանդակային չափանիշներից: Քանի որ տեսության ճշմարտության չափանիշը պրակտիկան է,

թյան համար կարևոր մի հետևողություն, որ հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության առարկայի մեջ մտնող կոնկրետ փաստերի լրիվ, բազմակողմանի և իրական բացատրությունը բացառում է համապատասխան մասով դրա զարգացման հնարավորությունը, քանի որ տեսության զարգացումը ենթադրում է ուսումնասիրվող իրավական իրականության երևույթների ու փաստերի վերաբերյալ նոր գիտելիքի ձեռքբերում:

Եվ, իսկապես, եթե մեզ հետաքրքրի են հանցավորության դեմ պայքարի սուրյեկտները կամ այդ պայքարում նրանց լիազորությունների սահմանները, ապա դրանց լիարժեք սահմանումն ու լիազորությունների ծգգրիս որոշումը կվկայի այդ հարցերի սպառիչ ճանաչողության մասին, հարցեր, որոնք ընդգրկված են հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության առարկայի մեջ:

Որքան էլ որ հետագայում նոր տվյալներ բացահայտենք, որոնք հաստատեն հանցավորության դեմ պայքարի սուրյեկտների վերաբերյալ ավելի վաղ ունեցած գիտելիքները, այդ մասով տեսությունը չի կարող զարգանալ, այլ ընդհանուր կստանա նոր հավաստումներ եղած գիտելիքների ծգմարտացիության վերաբերյալ:

Ասվածը, սակայն, հիմք չէ եզրակացություն անելու տեսության զարգացման որոշակի փուլում արդեն հայտնի, կամ հետազոտված երևույթների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու անօգտակարության մասին: Վերջիններս, մեկ անգամ ևս հաստատելով արդեն հայտնի փաստը, ավելի վաղ ստացված գիտելիքի նկատմամբ կատարում են յուրօրինակ հավաստագրող գործառույթ: Սա, ինչ խոսք, բարձրացնում է ավելի վաղ ստացված գիտելիքի համոզչությունը և դրանով իսկ հաստատում է տեսության զարգացման համապատասխան որույթների ու ուղղությունների ծգմարտացիությունը:

«...Տեսության և պրակտիկայի հարաբերությունների դիալեկտիկան այնպիսին է, որ քարացած տեսությունը դադարում է լինել ծշմարիտ, իրականության զարգացման օրինաչափությունների և միտումների համարժեք արտացոլումը...»

ապա բնական է, որ մեր պարագայում հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության հետագա հարստացման և զարգացման հիմքում պետք է ընկած լինի համապատասխան պայքարի պրակտիկան: Հետևաբար, ակնհայտ է, որ պրակտիկայի տվյալներից դուրս հնարավոր չէ մատնանշել քննարկվող տեսության զարգացման բոլոր հեռանկարները, ինչը սակայն չի նշանակում, որ տեսության ծևակորման ներկա փուլում հնարավոր չէ ուրվագծել դրա զարգացման հիմնական ուղղությունները և սահմանները: Ընդ որում, «տեսության զարգացում ասելով նկատի ունենք հանցավորության դեմ պայքարի բնագավառում առարկայական գործումներթյան նոր փաստերի և տեսական բացատրությունների ստացումը»⁴: Այս տեսակետից, «գիտական տեսության զարգացումը նշանակում է բացարձակ ծշմարտության պահերի կուտակում»⁵: Հենց նման ինացությունն է բնութագրական զարգացած և հասուն տեսությանը:

Ասվածից բխում է ներկա հետազոտու-

³ Տե՛ս, Մամչուր Ե.Ա. Проблема выбора теории. М., 1975, էջ 96:

⁴ Տե՛ս, Попович М.В. Выявление пределов теории в ходе ее развития // Логика научного исследования / Под ред. П.В. опнина и М.В.Поповича. М., 1965, էջ 202:

⁵ Տե՛ս, Коршунов А.М. Теория отражения и творчество. М., 1971, էջ 221:

ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ընդգծենք, սակայն, մեկ ամգամ ևս, որ կրկնորդող /հավաստագրող/ տեղեկատվության ողջ օգտակարության պարզաբանման վերջինս չի կարող դիտարկվել հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման տեղեկատվական գործունի դերում: Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ ստացված տեղեկատվության հիմնան վրա, արդեն իսկ եղածի հետ միասնության մեջ, տրվի տեսության կամ դրա առանձին հիմնական դրույթների նոր՝ մինչ այդ անհայտ մեկնաբանություն: Միայն նման դեպքում «փորձնական մեկնաբանությունը կարող է դիտարկվել իբրև տեսության զարգացում»⁶:

Դարկ է միմյանցից տարբերակել տեսության զարգացման նյութական և իդեալական գործոնները: Առաջինը նշտապես փոփոխվող և զարգացող իրականությունն է, որն ուսումնասիր-վում է հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության կողմից, երկրորդը՝ այդ տեսության ստեղծման մասին գաղափարը:

Եթե նշված գաղափարը օբյեկտիվորեն կենսական է, ապա իր որակով այլպիսին կլիմի նաև դրա հիմնան վրա ստեղծվող տեսությունը: Վերջինս իր ստեղծման ընթացքում ոչ միայն հիմնվում է ելակետային գաղափարի վրա, այլև իր միջոցներով զարգացնում է դրա մեջ առկա գործառության կարելիությունները:

Ընդգծելով գաղափարի և տեսության հարաբերակցության նշված բնույթը, կարող ենք փաստել, որ գաղափարը որոշակի ամբողջություն է, որը բացահայտվում է դեպի նոր բարձունքներ տեսության շարժման ճանապարհին: Այդ պատճառով գաղափարը ներունակ տեսություն է, իսկ տեսություն՝ զարգացած և ծավալված գաղափար: Այդ դիալեկտիկայի մեջ դրանք հանդես են գալիս որպես գիտական իմացության զարգացման միասնական գործընթացի բևեռներ:

Ընդ որում, եթե հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության ստեղծման գաղափարը բովանդակում է այդ տեսության ձևավորման անհրաժեշտության և

հնարավորության մասին ելակետային իմացություն, ապա այդ տեսության հիմքերի մշակումը գոյություն ունեցող հնարավորության արտացոլումն է պրակտիկայում և, միևնույն ժամանակ, տվյալ տեսության ստեղծման անհրաժեշտության փաստացի իրացումը:

Ասվածք լիովին վերաբերում է նաև հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության ստեղծման գաղափարի բնութագրությանը: Վերջինս հարկ է դիտարկել որպես հեռանկարային ոչ միայն զուտ գիտական, այլև գործնական իմաստով, քանի որ դրա մշակման արդեն իսկ սկզբնական

«...Ընդգծելով գաղափարի և տեսության հարաբերակցության նշված բնույթը, կարող ենք փաստել, որ գաղափարը որոշակի ամբողջություն է, որը բացահայտվում է դեպի նոր բարձունքներ տեսության շարժման ճանապարհին...»

փուլում հնարավոր է դարձել նոր գիտելիք ձեռք բերել հանցավորության դեմ պայքարի ընդհանուր հիմնահարցերի շրջանակի մասին: Ընդ որում, առանց նշված ընդհանուր հիմնահարցերի լուծման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհնարինության գիտակցման փաստը, ինչպես նաև այդ հիմնահարցերը համապատասխան միասնական տեսության կառուցվածքի մեջ նշակելու անհրաժեշտության ընթացումը հանդես են գալիս որպես նշված հիմնահարցերի գիտական մշակումը և դրանց գործնական լուծումը խթանող հանգամանքներ:

Զարգացումը միշտ տեղի է ունենում որոշակի ուղղությամբ, որպիսի հաստատումը միանգամայն արդարացված է նաև քննարկվող տեսության առումով: Տեսության կայացման ելակետային փուլում անհնար է թվարկել դրա զարգացման բոլոր ուղղությունները կամ դրանց գերակշիռ մասը: Սակայն, որքան էլ զարմանալի չէ, հնարավոր է առանձնացնել այդ տեսության զարգացման հիմնական կամ առավել իրատապ ուղղիները: Դրանք ներկա փուլում կարող են դիտարկվել իբրև տեսության զարգացման

⁶ Տե՛ս, Պոպովիչ Մ.Բ. Նշված աշխատությունը, էջ 202:

գլխավոր ուղղություններ և իրականացվել ընդլայնական կտրվածքով և խորությամբ:

Ընդլայնական կտրվածքով տեսության զարգացում ասելով նկատի ունենք հանցավորության դեմ պայքարի օրինաչափությունների հետազոտության գործընթացում պայքարի նորանոր կողմերի ընդգրկումը: Այլ խոսքով, տեսության զարգացման այս տեսանկյունը կոչված է ապահովել տվյալ տեսության առարկայի մեջ մտնող հաճապատասխան օրյեկտների մշակման բազմակողմանիությունը:

Տեսության զարգացումը խորությամբ ենթադրում է հանցավորության դեմ պայքարի օրինաչափությունների հետազոտության գործընթացում ներթափանցում բոլոր հետազոտվող երևույթների եռթյան մեջ:

Տեսության զարգացման նշված երկու ուղղությունները հարաբերականորեն ինքնուրույն են, քանի որ ռեալ հետազոտական գործընթացում դրանք ոչ միայն փոխկապակցված են, այլև փաստական և անխօնելի

**«...Տեսության զարգացումը
խորությամբ ենթադրում է
հանցավորության դեմ պայքարի
օրինաչափությունների
հետազոտության
գործընթացում ներթափանցում
բոլոր հետազոտվող
երևույթների եռթյան մեջ...»**

Փոխկախվածության մեջ են: Տեսության զարգացման նշված ուղղությունների միայն օրյեկտիվ միասնալությունը կարող է ապահովել դրա լիիվությունն ու հավաստիությունը:

Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացում ասելով պետք է նկատի ունենալ դրա բովանդակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների այնպիսի ուղղվածությունը, որն օժոված է ստացված գիտելիքը կոնկրետացնելու, դրա հավաստիությունը բարձրացնելու հարավորությամբ: Ինչ խոսք, կարելի է տեսության զարգացումը նաև դիտարկել դրա մեջ ի հայտ բերված սխալական դրույթները շտկե-

լու տեսանկյունից: Բայց դրան էլ նշանակալի չկամ ի հայտ բերված սխալները, դրանք եականորեն չեն փոխում տվյալ տեսությունը, չեն վերացնում դրա հիմնարար հիմքերը: Այդ պատճառով կարծում ենք, կարելի է լիովին համաձայնել Զ.Օրուչիկի հետ, որի կարծիքով «տեսության զարգացումը ոչ թե դրա առանձին դրույթները և ելակետային գաղափարները շտկելու ... այլ յուրաքանչյուր անգամ գիտության նոր կատեգորիայի անցնելու մեջ է»⁷:

Այս տեսակետից կատեգորիաների յուրաքանչյուր նոր համակարգ հարկ է կապել տեսության զարգացման նոր փուլի հետ: Այս առումով քննարկվող տեսության հայեցակարգային հիմքերի մշակումը կարելի է դիտարկել իրեն ապագայում հանցավորության դեմ պայքարի ամբողջական և ավարտուն միասնական տեսության ստեղծման առաջին կամ ելակետային փուլ: Վերջինս իր զարգացման ընթացքում պետք է անցնի միշտաք հարաբերականորեն ինքնուրույն փուլը: Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման հերթական փուլը որոշումը ենթադրում է նշված տեսության միջջուղային և պրակտիկ-կիրառական հիմքերի համալիր մշակման ռեալ գոյություն ունեցող անհրաժեշտության փաստագրում⁸: Այդ հիմքերի մշակմանը էլ պայմանավորված են քննարկվող տեսության զարգացման մերձակա հեռանկարությունը:

Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսությունը կարող է զարգանալ ոչ միայն նոր փաստերի հիմնան վրա, այլև գիտությունների և, մասնավորապես, հատուկ տեսությունների համակարգի, նվաճումների հաշվին: Անդադարձալով տեսության զարգացման նման աղյուրների խմբին, բուլղարացի փիլիսոփա Գ.Գիրգինովը նշում է, որ «գիտական տեսությունը կարող է զարգանալ և հարստացվել դրա համեմատ ելակետային համարվող այլ դրույթներից դուրս բերման և ապացուցման ճանապարհով ստացված անփոփումների և ընդհանրացումների ներառման միջոցով»⁹:

⁷ Տե՛ս, Կոմփ Փ., Օրուջև Յ. Դialectical logic. M., 1979, էջ 208:

⁸ Նույն տեղում:

⁹ Տե՛ս, Գրցինով Գ. Նշված աշխատությունը, էջ 139:

Ասվածից ակնհայտ է դաշնում, թե որք առ կարևոր են բոլոր մասնավոր տեսությունների նվաճումները հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման համար: Եվ չնայած դրանցից յուրաքանչյուրի ավանդը միասնական տեսության զարգացման խնդրում խիստ տարբեր է, այդուհանդերձ, կարելի է ամենայն որոշակիությամբ հաստատել, որ առանց բոլոր մասնավոր տեսությունների նվաճումների օգտագործման անհնարին է հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության ստեղծումը:

Տեսության զարգացումից հարկ է տարբերել դրա կատարելագործումը: «Վերջինս իրականացվում է նոր փաստեր բացատրող, նախկին օրենքներն ու տեսության հասկացությունները ծզգրտող հասկացությունների ներմուծման ճամապարհով»¹⁰: Միանգամայն հասկանալի է, որ տեսության կատարելագործման գործնթացը չի ընթանում դրա զարգացման գործնթացից մեկուսի: Եթե հանապատասխան տեսության կառուցվածքում գոյություն ունեցող սխալական դրույթները ժամանակին չշտկվեն, ապա դրանց կուտակումը կհանգեցնի այն հիմքերի ձևախեղմանը, որոնց վրա հիմնվում է տեսությունը և, նշանակում է, առաջադրված գաղափարի եռթյան աղավաղմանը: Ոչ ճիշտ դրույթների առկայության դեպքում տեսության հետագա մշակումը կիրականացվի սխալ ուղղությամբ, ինչը բացասականորեն կանդրադառնա դրա զարգացման ընդհանուր ընթացքի վրա: Այսպիսով, հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման համար էական նշանակություն ունի այն, թե ինչ ուղղությամբ և որքանով հաջող կզարդանա այս կամ այն մասնավոր /հասուլ/ տեսությունը: Ավելին, բոլոր նշված տեսությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունի այն, թե ինչ ուղղությամբ և ինչպիսի ընթացքով կզարդանա հանցավորության դեմ պայքարի պրակտիկան:

Հանցավորության դեմ պայքարի տեսության և պրակտիկայի միջև նշանական տեսական առաջարկությունը կատարելագործումը նոր տեսական տվյալների կուտակումը կիսանգեցնի դրանց փոխադարձ զարգացմանը, հետևաբար՝ այն ընդհանուրի ամրողացմանը, ինչը կպայմանավորի հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացումը: Կերպինս իր մեջ կուտակելով գիտության և պրակտիկայի նվաճումները կզարգանա պվելի բարձր նակարողակում, ինչը կիանցքեցնի հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության կառուցվածքում ամբողջացմանը, ինչը կպայմանավորի հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացումը: Այսպիսով կարելի է հիմնվելով գիտության մեջ մշակված գիտական իմացության սիմթեզի ընդհանուր ձևերի վրա,

թյուն չունենալ դիալեկտիկական կապ և փոխկախվածություն: Այն իրացվում է ամենատարբեր տեսանկյուններում, բայց ամենից առաջ պետք է դրսնորվի, մի կողմից, գիտական հետազոտությունների արդյունքները պրակտիկայում ներդնելով, իսկ, մյուս

«...Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացում ասելով պետք է նկատի ունենալ դրա բովանդակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների այնպիսի ուղղածությունը, որն օժտված է ստացված գիտելիքը կոնկրետացնելու, դրա հավաստիությունը բարձրացնելու և նարավորությամբ...»

կողմից, տարբեր գիտությունների կողմից պրակտիկայի վերջին նվաճումները ժամանակին ամփոփելով՝ նպատակ ունենալով մշակել և ապա պրակտիկայում ներդնել հանցավորության դեմ պայքարի առաջեցները:

Հանցավորության դեմ պայքարի պրակտիկայի կատարելագործումը, տարբեր գիտություններում նոր տեսական տվյալների կուտակումը կիսանգեցնի դրանց փոխադարձ զարգացմանը, հետևաբար՝ այն ընդհանուրի ամրողացմանը, ինչը կպայմանավորի հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացումը: Կերպինս իր մեջ կուտակելով գիտության և պրակտիկայի նվաճումները կզարգանա պվելի բարձր նակարողակում, ինչը կիանցքեցնի հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության կառուցվածքում ամբողջացնող գործնթացմանը կատարելագործմանը: Նման նոտեցումը նշված գործնթացմանը բնութագրությամբ լիովին համահունչ է դիալեկտիկայի սկզբունքներին:

Այս տեսակետից կարելի է, հիմնվելով գիտության մեջ մշակված գիտական իմացության սիմթեզի ընդհանուր ձևերի վրա,

¹⁰ Տե՛ս, Կոմպֆ Փ., Օրույք 3. Նշված աշխատությունը, էջ 208:

մատնանշել հանցավորության դեմ պայքարի մասին գիտելիքների ամբողջացման ձևերը, որոնցից յուրաքանչյուրը կհաճապատասխանի այդ պայքարի մասին գիտության մեջ ամբողջացնող գործնթացների զարգացման որոշակի փուլի: Առաջին փուլը բնութագրվում է հանցավորության դեմ պայքարի մասին գաղափարի առաջացմամբ: Երկրորդը՝ այդ պայքարի մասին ելակետային պատկերացումների մշակմամբ: Երրորդ փուլում հանցավորության դեմ պայքարի մասին գիտելիքների ամբողջացումը բերում է նրան, որ պայքարի այդ տեսակը, նախ, քն-

գիտելիքի ընդհանուր միտումը դեպի միասնականացում, կարելի է միայն փաստել, որ հետագայում հանցավորության դեմ պայքարի մասին գիտական տվյալների ամբողջացման գործնթացը կանցնի ևս մի քանի յուրօնինակ փուլեր, որոնք վերջին հաշվով կիանգեցնեն հասարակության մեջ ավելի բարձր մակարդակի՝ հակաօրինական երևույթների դեմ պայքարի միասնական տեսության, ստեղծմանը: Վերջինս կլինի հանցավորության դեմ պայքարի մասին գիտելիքների ամբողջացման հերթական փուլը:

Հարկ է նկատի ունենալ, որ հակաիրավական երևույթները ծագում և զարգանում են ոչ մեկուսի այլ հակահասարակական և, մասնավորապես, հակաբարոյական երևույթներից: Դրանց դեմ պայքարի օրինաչափությունները պետք է մշակվեն ոչ միայն առանձին՝ համապատասխան տեսությունների կառուցվածքում, այլև այլ տեսությունների հետ փոխկապվածության մեջ, այսինքն՝ համալիր: Այդ մոտեցումը պետք է իր արտացոլումը ստանա ավելի բարձր մակարդակի տեսության մեջ, որը կարելի է պայմանականորեն անվանել հասարակության մեջ բացասական երևույթների դեմ պայքարի տեսություն:

Այսպիսով, «գիտության ամբողջացման, գիտական տվյալների սինթեզի ձևերի ու միջոցների բացահայտումը, ամբողջանող գործնթացների հիմնահարցերի ու հեռանկարների ուսումնասիրությունը մեր ժամանակների ամենակենսական պահանջներից մեկն է»¹¹: Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսությունը սոցիալական պայքարի հատուկ տեսակի մասին գիտական տվյալների ամբողջացման ձևերից է: Դրա ստեղծումը ժամանակի հրամայականներից է, որի պատճառով էլ տվյալ տեսության մշակումը կարելի է դիտարկել որպես հասարակության մեջ հակահասարակական երևույթների դեմ պայքարի մասին գիտելիքների ամբողջացման ընդհանուր գործնթացի էական ու անհրաժեշտ փուլերից մեկը:

«...Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսությունը կարող է զարգանալ ոչ միայն նոր փաստերի հիման վրա, այլև գիտությունների և, մասնավորապես, հատուկ տեսությունների համակարգի, նվաճումների հաշվին...»

Արարկում է իբրև հասարակության մեջ գոյություն ունեցող միտում, և ապա՝ բարձրացվում օրենքի աստիճանի, որն արտացոլվում է քրեական, քրեական դատավարական, քրեակատարողական օրենսդրության նորմատիվ ակտերում: Չորրորդ փուլը բնութագրվում է հանցավորության դեմ պայքարի մասնավոր տեսությունների համակարգի ստեղծմամբ: Դիմումներուն փուլի բովանդակությունը հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության ստեղծման գաղափարի առաջադրումն ու դրա մշակումն է:

Սրանով, իհարկե, հանցավորության դեմ պայքարի մասին գիտական տվյալների ամբողջացման ձևերը չեն սպառվում: Գործունեության քննարկվող բնագավառում գիտական իմացության օրինաչափ ուղղվածությունը դեպի միասնականացում կդրսւորվի նաև հետազույթ՝ որպես օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստ և հանրային անհրաժեշտություն, սակայն ներկա փուլում դեռևս մշակված չեն բավարար գիտելիքներ, որպեսզի արդեն այսօր հնարավոր լինի կանխատեսել հանցավորության դեմ պայքարի մասին գիտելիքների հետագա առավել բարձր մակարդակները: Արտացոլելով

¹¹ Տե՛ս, Կեպիկով Մ.Գ. Նշված աշխատությունը, էջ 11-12:

Իրավաբանական ազատականության ըմբռնումը իրավաբանական տիպաբանության տեսանկյունից

Վարդան ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության
քննօպերատոր ապօրինի շղանառության
հանգագործությունների գործերով բաժնի պետ

Իրավունքի մասին ցանկացած ուսմունքի համար ելային և որոշիչ նշանակություն դրա հիմքում ընկած հասկացության տիպը: Հենց իրավահասկացման տիպն է բնորոշում իրավաբանական ձևաչափական պարադիգմը (իմաստային մոդելը, սկզբունքն ու օրինակը), իրավունքի մասին համապատասխան ուսմունքի գիտա-իրավական բուն բովանդակությունը, առարկան և մեթոդը:

Դա պայմանավորված է ցանկացած հետևողական, սխստեմատիկորեն հիմնավորված, զարգացած ու կազմակերպված տեսության շրջանակներում գտնվող հասկացության գիտա-ձևաչափական կարգավիճակով ու նշանակությամբ: Ինչպես սերմի մեջ արդեն պարունակվում է ապագա որոշակի բույսը, այնպես է իրավունքի հասկացության մեջ գիտական-վերացական տեսքով պարունակվում է որոշակի իրավական տեսություն, իրավունքի մասին ուսմունքի որոշակի հայեցակարգի (և տիպի) տեսական-իրավական իմաստն ու բովանդակությունը:

Այսպիսով, եթե իրավունքի հասկացությունը իրենից ներկայացնում է իրավունքի սեղմ տեսություն, ապա իրավական տեսությունը դա իրավունքի ծավալուն հասկացությունն է: Չէ՞ որ միայն իրավունքի մասին որոշակի ամբողջական ուսմունքն է կարող տալ (իրավունքի փիլիսոփայության կամ իրավագիտության կոնկրետ հայեցակարգի տեսքով) իրավունքի հասկացության սխստեմատիկ և լիակատար բացահայտում՝ համապատասխան գիտական տեսության տեսքով:

Իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման հակադարձ երկու տիպերի պայքարով: Իրավունքի հասկացողության մեկնման և իրավունքի հասկացման այս երկու տիպերը պայ-

մանականորեն կարելի է անվանել իրավահասկացման և իրավունքի հասկացման իրավաբանական և լեգիստական տիպեր¹:

Իրավահասկացման այս երկու տիպերի ներսում գոյություն ունեն իրավունքի հասկացողության տարրեր հայեցակարգեր և մեկնման ուղղություններ: Իրավունքի մասին այս կամ այն ուսմունքներն միջտիպաբանական տարրերությունների և ներտիպաբանական առանձնահատկությունների հաշվառումը էական նշանակություն ունի դրանց տեսական-իրավական բովանդակության կոնկրետ բնութագրման համար:

Բնական-իրավական մոտեցման թերությունների հետևողական հաղթահարումը հանգեցնում է ոչ թե պողիտիվիզմի և լեգիզմի, այլ իրավաբանական իրավահաս-

¹ Տե՛ս. Ներսեսյան Վ. Ս. Различение и соотношение права и закона как междисциплинарная проблема // Вопросы философии права. М., 1973; նույնի. Из истории правовых учений: два типа правопонимания // Политические и правовые учения: проблемы исследования и преподавания. М., 1978; նույնի Право и закон. М., 1983.

կացման տեսականորեն ավելի զարգացած ձևի, իրավունքի, հասկացության, օրենքի արժեքային իրավական նշանակության ու պետության համապատասխան մեկնաբառության:

Այս կապակցությամբ բուն իրավաբանական տեսակի իրավահասկացման շրջանակներում մենք առանձնացնում ենք երկու տարբեր մոտեցումներ: **Առաջինը** բնական իրավական մոտեցումն է, որը ել-

սկզբունքի (իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև հարաբերությունների իրավական ձևի) տարբեր դրսնորումներ: Իրավունքի վերաբերյալ նման ձևական-իրավաբանական մոտեցումը, որը հետևողականորեն անջատում է իրավական ձևը (իրավունքը որպես ձև) այդ կերպ միջնորդայնացված փաստական (ենպիրիկ) բովանդակությունից, հանդիսանում լիբերտար (լիբերտար-իրավաբանական), քանզի իրավունքը (իսկ դրա հետ նաև պետությունը) այստեղ հասկացվում ու մեկնաբանվում են ազատության հանդիսանուր և անիրաժեշտ ձև:

Որպես իրավահասկացման տարբեր ձևեր, բնա-

«...Իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման հակադարձ երկու տիպերի պայքարով...»

նում է պողիտիկ իրավունքին հակադրվող բնական իրավունքի ճանաչումից («պողիտիկ իրավունք») տերմինն առաջացել է միջնադարյան իրավագիտության մեջ): **Երկրորդը՝** իրավահասկացման ընդհանուր տեսության լիբերտար-իրավաբանական (ազատական-իրավաբանական) մոտեցումն է, որը ելնում է իրավունքի և օրենքի (պողիտիկ իրավունքի) տարբերակման սկզբունքից և իրավունքի տակ նկատի ունի ոչ թե բնական իրավունքը, այլ ձևական հավասարությունը: Ընդ որում, ձևական հավասարության սկզբունքը մեր կողմից մեկնվում ու բացատրվում է որպես իրավական ձևի երեր հիմնական բաղադրիչների ամբողջականություն: Դրանք են. արստրակտ-համընդհանուր հավասարությունը (բոլորի համար հավասար նորմ և չափ), ազատությունը և արդարությունը: Որպես ձևական հավասարության սկզբունքի բաղադրիչ պահեր (և այդ պատճառով նաև հարաբերությունների իրավական ձևերի բաղադրիչներ) այս եռամիության բոլոր տարրերը ազատական-իրավաբանական իրավահասկացման շրջանակներում կրում են զուտ մաքուր և հետևողականորեն ձևական բնույթ, քանի որ իրավունքը, որպես հարաբերությունների ձև, չպետք է շփորթել այդ հարաբերությունների փաստացի բովանդակության հետ: Նշված տարրերը ոչ միայն փոխլրացնում են մեկը մյուսին, այլև ենթադրում են իրար, քանի որ հանդիսանում են միասմական իրավական սկզբի՝ ձևական հավասարության

կան-իրավական մոտեցումը և լիբերտար մոտեցումը, հանձնայն մեր մեկնության, իրենցից ներկայացնում են իրավունքի հանդեպ տեսական մոտեցման առաջացման, խորացման ու զարգացման փուլեր ու աստիճաններ, պատմական առաջընթաց տեսական-իրավական մտքի բնագավառում:

Լիբերտար մոտեցումը ենթադրում է (և ներառում է) իրավունքի ու օրենքի տարբերակման և հարաբերակցության բոլոր հնարավոր ձևեր՝ անջատումից ու նրանց միջև հակամարտությունից (ոչ իրավական օրենքի դեպքում) մինչև դրանց համընկնում (իրավական օրենքի դեպքում): Նույն տրամաբանությունն է գործում նաև իրավունքի ու պետության վերաբերյալ, ընդ որում, լիբերտար-իրավաբանական տեսակետից պետությունը մեկնվում է իր իրավական ու հակամարտավական դրսնորումների ողջ դիավազոնում (իրավախախտ պետությունից մինչև իրավական պետություն):

Համաձայն լիբերտար-իրավաբանական (ձևական-իրավաբանական) իրավահասկացման, իրավունքը հավասարության, ազատության ու արդարության հարաբերությունների ձև է, բնորոշված հարաբերությունների տվյալ ձևի մասնակիցների ձևական հավասարության սկզբունքով: Ամենուր, որտեղ կա, գործում է ձևական հավասարության սկզբունքը (և դրան կոնկրետացնող նորմերը), այնտեղ կա (գործում է) իրավունքը, հարաբերություն-

ների իրավական ձևը: Զեական հավասարությունը որպես իրավունքի սկզբունք կազմում է բուն իրավական սկիզբը և հանդիսանում է իրավունքի տարբերակի հատկություն և սպեցիֆիկ հատկանիշ: Իրավունքում չկա ոչինչ, բացի ձեւական հավասարության սկզբունքից (և այդ սկզբունքի կոնկրետացումներից): Այն ամենը, ինչը դուքս է գալիս այդ սկզբունքի շրջանակներից և հակասում է նրան, ոչ իրավական է և հակադրավական:

Դավասարությունն իրենից ներկայացնում է որոշակի արստրակցիա, այսինքն, հանդիսանում է գիտակցական (մտածողական) վերացարկնան արդյունք այն բոլոր տարբերությունների, որոնք բնորոշ են հավասարեցվող օբյեկտներին: Դավասարեցումը ենթադրում է հավասարեցվող օբյեկտների տարբերությունները և, միաժամանակ՝ այդ տարբերությունների աննշանությունը (այսինքն, այդ տարբերություններից վերացարկնան հնարավորություն և անհրաժեշտություն) հավասարեցման համապատասխան իհմքի (չափանիշի) տեսակետից:

Այսպես, տարբեր օբյեկտների հավասարեցումը ըստ դրանց թվական իհմքի, վերացարկվում է դրանց բովանդակային զանազան տարբերություններից (անհատական, սեռային, տեսակային և այլն): Այս հունով է ձևավորվել մաթեմատիկան, որտեղ հավասարությունների կազմումն ու լուծումը առանցքային դեր է խաղում և որտեղ հավասարությունը, հասցված է քանակական բնորոշումների արստրակցիայի:

Իրավական հավասարությունը այնքան արստրակտ չէ, որքան, թվային հավասարությունը մաթեմատիկայում: Տարբեր մարդկանց իրավական հավասարության իհմք (և չափանիշը) է հանդիսանում հասարակական հարաբերություններում նրա ազատությունը, ճանաչված և հաստատված իրավունակության և իրավասությեկտության տեսքով: Դրանում է կայանում իրավական հավասարության և ընդհանրապես իրավունքի սպեցիֆիկան:

Ազատության մեջ իրավական հավասարությունը, որպես ազատության հավասար չափ, նշանակում է համաչափություն, համարժեքություն իրավունքի սուբյեկտ հանդիսացող ազատ անհատների հարաբերություններում:

Իրավական հավասարությունը դա ազատ և իրարից անկախ իրավունքի սուբյեկտների հավասարություն է՝ ըստ բոլորի համար ընդհանուր մասշտաբի, միասնական նորմի, հավասար չափի: Խսկ այնտեղ, ուր մարդիկ բաժանված են ազատների ու անազատների, վերջիններս դասվում են իրավունքի ոչ թե սուբյեկտների, այլ օբյեկտների շարքին և իրավական հավասարության սկզբունքը նրանց վրա չի տարածվում:

Իրավական հավասարությունը ազատ-

«...Ազատության մեջ իրավական հավասարությունը, որպես ազատության հավասար չափ, նշանակում է համաչափություն, համարժեքություն իրավունքի սուբյեկտ հանդիսացող ազատ անհատների հարաբերություններում...»

Ների հավասարություն է և ազատության հավասարություն, անհատների ազատության ընդհանուր մասշտաբ և հավասար չափ: Իրավունքը խոսում և գործում է այդ հավասարության լեզվով և միջոցներով և շնորհիվ դրա հանդես է գալիս որպես մարդկանց համատեղ կյանքի ազատության գոյնի, դրսկորման և իրականացման համընդհանուր և անհրաժեշտ ձև: Այս իմաստով կարելի է ասել, որ իրավունքը ազատության մաթեմատիկան է²:

Ընդ որում կարելի է, թերևս, ենթադրել, որ մաթեմատիկական հավասարությունը, որպես առավել արստրակտ գոյակցություն, ունի պատմական ավելի ուշ ծագում և ածանցյալ է իրավական հավասարությունից: Դավասարության սկզբունքների հետագա զարգացումը և գիտական մշակումը հանգեցրել է այն պատկերացման,

² Այս մասին ավելի մանրամասն տես՝ Հերսեսյան Վ. Ս. Право - математика свободы. М., 1996.

թե հավասարության գաղափարը իրավունքի մեջ է ներմուծվել մարեմատիկայից:

Նման մեկնության կարելի է հանդիպել արդեն այութագորասցիների մոտ, որոնց լուրջ հետաքրքրությունը մարեմատիկայով զուգակցվում էին թվային միստիկայով իրապուրվելով և հավասարության մասին մարեմատիկական պատկերացումները հասարակական այութագորասցիների, այդ բոլում նաև իրավունքի վրա տարածելու հետ: Դամաձայն այութագորասցիների, աշխարհի էությունը (Փիզիկական և սոցիալական) իրենց ներկայացնում է թիվ, և աշխարհում ամեն ինչը ունի թվա-

յին բնութագիր և արտահայտություն: Մեկնելով հավասարությունը որպես որոշակի (և իր բնույթով թվային) համամասնության պատշաճ չափ, նրանք իրենց սոցիալական մարեմատիկայի ոգով արտահայտում էին արդարությունը «չորս» թվի տեսքով:

Դավասարության մասին թվային (մարեմատիկական) պատկերացումների տարածումը հասարակական հարաբերությունների վրա արտացոլում էր իրավունքի մասին ոչ այնքան զարգացած հայացքները և, ըստ էության, անտեսում էր հավասարության յուրահատկությունը մարդկանց սոցիալական կյանքում հենց որպես ազատ մարդկանց ձևական-իրավական

և անհավասարության մասին ուսմունքի իմաստով):

Սոցիալական ոլորտում հավասարությունը՝ միշտ իրավական հավասարություն է, ձևական-իրավական հավասարություն: Չէ՞ որ իրավական հավասարությունը, ինչպես ցանկացած հավասարություն, վերա-

«...Իրավունքում չկա ոչինչ, բացի ձևական հավասարության սկզբունքից (և այդ սկզբունքի կոնկրետացումներից): Այն ամենը, ինչը դուքս է զայիս այդ սկզբունքի շրջանակներից և հակասում է նրան, ոչ իրավական է և հակաիրավական...»

ցարկված է (ըստ սեփական հիմքի ու չափանիշի) փաստական տարբերություններից և այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար և ըստ բնորոշման կրում է ձևական բնույթը:

Հավասարության վերաբերյալ գոյություն ունեն բազում թյուրղմբռնումներ, սիսական և կեղծ պատկերացումներ: Վերջնական հաշվով դրանց հիմքում ընկած է չհասկանալը այն բանի, որ հավասարությունը ունի ռացիոնալ իմաստ, որ այն տրամաբանորեն ու գործնականորեն սոցիալական աշխարհում հենց որպես և միայն իրավական (ձևական-իրավական, ձևական) հավասարություն է:

Այսպես, հավասարությունը հաճախ (ինչպես անցյալում, այնպես էլ այսօր) շփորվում է տարբեր տեսակի էգալիտարական (իսկ փաստորեն հավասարիչ) պահանջների, համահարթեցման և այլն հետ: Կամ էլ, ընդհակառակը, նրան հակադրում են այսպես կոչված

«...Իրավական հավասարությունը լա ազատ և իրարից անկախ իրավունքի սուբյեկտների հավասարություն է՝ ըստ բոլորի համար ընդհանուր մասշտարի, միասնական նորմի, հավասար չափի...»

հավասարության: Ունենալով ձևական հավասարության այդ սկզբունքը, իրավունքը ինքնին հանդիսանում է յուրատեսակ սոցիալական մարեմատիկա (հասարակական հարաբերություններում հավասարության

«փաստացի հավասարությունը»: Նման խառնաշփոթը այսպես թե այնպես, բայց միշտ կրում է հակաիրավական բնույթը: Չէ՞ որ «փաստացի հավասարությունը» ռացիոնալ բնույթ ունի միմիայն որպես բացա-

ռում (այսինքն, որպես ձևական, իրավական հավասարության բացառում), իսկ որպես պնդում (որպես ինչ-ինչ պոգիտիվ բան) այդ «փաստացի հավասարությունը»

«փաստական») իրականության չափիչ: Նույնկերպ և ձևական-իրավական հավասարությունը:

Իրավունքի պատմությունը դա ձևական (իրավական) հավասարության բովանդակության, ծավալի, մասշտաբի ու չափի առաջադիմող է վոլյուցիայի պատմություն է՝ բուն այդ սզկրությունի պահպանումով որպես իրավունքի ցանկացած համակարգի և ընդհանրապես իրավունքի սկզբունքի: Մարդկանց հարաբերություններում ազատության և իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերին բնորոշ է ազատության սեփական մասշտաբը և սեփական չափ, ազատության ու իրավունքի հարաբերությունների և սուբյեկտների սեփական շրջանակ, մի

իրացիոնալ մեծություն է, բառային հորինվածք, ինչպես ասենք, «փայտե երկաթը», և ենթադրում է բոլորովին այլ բան, քան հավասարությունը:

«Փաստացի հավասարությունը» դա «փաստական» և «ոչ փաստական» (ձևական) հասկացությունների խառնուրդ է և «հավասարություն» բուն հասկացության հակասություն: Որպես հասկացություն, որպես կարգավորիչ սկզբունք, չափնան մասշտաբ, հարաբերությունների ծև և տեսակ «հավասարությունը» իմաստունի միայն «փաստականի» և «ձևականի» տարբերակնան համատեքստում ու միայն որպես ինչ-ինչ «ձևական» բան, անջատված (վերացարկված) ինչ-ինչ «փաստական» բանից, ինչպես բառերն են անջատ նրանցով նշվող իրերից, թվերը՝ նրանցով համրվող առարկաներից, կշեռքը՝ կշռվող զանգվածից և այլն: Ծնորիկվ իր հենց այդ ձևականության («փաստականից» վերացարկվածության) հավասարությունը կարող է դառնալ և իրապես դառ-

«...Իրավունքը ազատության մաթեմատիկան է...»

խոսքով, ձևական իրավական հավասարության սկզբունքը իրենից ներկայացնում է իրավունքին մշտապես բնորոշ սկզբունք՝ պատմականորեն փոխվող բովանդակությամբ:

Ձևական հասարակության սկզբունքի բովանդակության, ծավալի, գործողության ոլորտի պատմական էկուսուցիան ընդհանուր առնամբ ոչ թե հերքում, այլ ընդհակառակը՝ ամրապնդում է տվյալ սկզբունքի նշանակությունը որպես իրավունքի տարբերակիչ հատկանիշի սոցիալական կարգավորման այլ տեսակների հետ հարաբերակցություններում և տարրակարծություններում: Հաշվի առնելով այս ամենը, կարելի է ասել, որ իրավունքը՝ ազատության և արդարության արտահայտման ֆորմալացված նորմատիվ-իրավական ծև է:

«...Իրավական հավասարության սկզբունքը իրենից ներկայացնում է իրավունքին մշտապես բնորոշ սկզբունք՝ պատմականորեն փոխվող բովանդակությամբ....»

Նույն է «փաստականի» կարգավորման եղանակ, միջոց, սկզբունք, յուրատեսակ ձևական և ձևականացված «լեզու», «հաշիվ», «կշեռք», արտաձևական (այսինքն

այս ամենը, կարելի է ասել, որ իրավունքը՝ ազատության և արդարության արտահայտման ֆորմալացված նորմատիվ-իրավական ծև է:

Քրեական արդարադության սկզբունքների համակարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով

Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և
եվրահիմունագործման բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

«Ակզրունք» հասկացությունը, որպես փիլիսոփայական կատեգորիա, նշանակում է նախասկիզբ, դեկավար գաղափար: Տրամաբանական առումով սկզբունքը համակարգի կենտրոնական հասկացությունն է, իհմունք, որը իրենից ներկայացնում է որևէ դրույթի ընդհանրացումը և տարածումը այն բնագավառի բոլոր երևույթների վրա, որից տվյալ սկզբունքը վերացարկված է¹: Չանդրադանալով Սահմանադրական իրավունքի և դատավարական իրավունքի գիտության մեջ արդարադատության սկզբունքի բնորոշման վերաբերյալ առկա մոտեցումներին², այն բնորոշենք որպես ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ուղղակի ամրագրված կամ նրանցից բխող, ժողովրդավարական և հումանիստական բովանդակության ընդհանուր, դեկավար և համապարտադիր գաղափարներ են, որոնք խսացված ձևով արտահայտում են արդարադատության բնույթը և էությունը, կոչված են երաշխավորելու արդարադատության մասնակիցների իրավունքների և ազատությունների իրականացումը:

Դատավարագիտության մեջ օգտագործվում են «արդարադատության սկզբունք» և «դատավարության սկզբունք» հասկացությունները, որոնց հարբերակցության վերաբերյալ Տ. Դորովովիսկայան նշել է, որ քրեական, քաղաքացիական դատավարությունների և վարչական իրավախմբումների վերաբերյալ վարույթի սկզբունքներից դուրս արդարադատության սկզբունքներ գոյություն չունեն³: Ընդհանուր առմանը, կարելի է ներդունել, որ արդարադատության և դատավարության սկզբունքները նույնական հասկացություններ են, սակայն քրեական դատավարությունում իհմնարար ելակետային դրույթները կարող են որակվել որպես քրեական դատավարության սկզբունքներ, եթե դրանք իրացվում են քրեական դատավարության կենտրոնական՝ դատական քննության փուլում:

Սույն հոդվածում կներկայացնենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (Նախագծով) քրեական արդարադատության սկզբունքների համակարգում կատարված փոփոխությունները՝ համեմատելով 1998թ. քրեական դատավարության օրենսգրքի հետ:

Սկզբունքներ, որոնք ամրագրված չեն Նախագծի՝ քրեական դատավարության սկզբունքներ գլխում (2-րդ գլուխ)

Որպես ընդհանուր նկատառում նշենք, որ Նախագծում նկատվում է սկզբունքների միտում, օրինակ՝ բնակարա-

նի անձեռնմխելիությունը, գույքի անձեռնմխելիությունը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հե-

¹ Տե՛ս. Փիլիսոփայական բառարան: Եր.:1975, էջ 376:

² Տե՛ս. Ղամբարյան Ա. Արդարադատության սահմանադրամիրավական իհմունքները ՀՀ-ում: Եր., ՈՀՅ հրատ., 2006, էջ 75:

³ Տե՛ս. Добрковольская Т.Н. Советское правосудие на современном этапе развернутого строительства коммунизма. Автореф. докт. юрид. наук. М.: 1965, С. 18:

ԴԱՏԱՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸՆԵՐԻ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ

ռագդական և այլ հաղորդումների գաղտնիությունը, ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը միավորվել են Նախագծի՝ մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության սկզբունքի ներքո:

Նախագծի 2-րդ գլխում, ի տարբերություն գործող քր. դատ. օր-ի նախատեսված չեմ՝ օրինականության, դատական սխաներից տուժածների իրավունքների վերականգնման, արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից, ապացույցների ազատ գնահատման դրույթները⁴:

Օրինականության սկզբունք: Դատավարագիտության մեջ օրինականությունն առավելապես դիտվել է որպես արդարադատության սկզբունք և օրենսդրի կողմից այն կարգավորվել է առանձին հոդվածով, ուստի Նախագծի 2-րդ գլխում օրինականության առանձին հոդվածով չանդրադարձնալու առաջին հայցքից կարող է թվայ անհիմն: Կարծում ենք, Նախագծի հեղինակների նման մոտեցումը ունի բավարար հիմնավորում և տրամաբանություն: Դատավարագիտության մեջ օրինականությունը բնորոշվել է քրեական դատավարության սուրբեկտների կողմից դատավարական նորմերի կատարման, պահպանման պահանջ: Օրինականության նման լայն մեկնաբանությունը գործնականում նշանակում էր, որ այն ըստ էության կլանում է դատավարության մյուս սկզբունքները: Դեռևս խորհրդային ժամանակ Ս. Ստրոգովիչը օրինականությունը չէր դիտում որպես քրեական դատավարության սկզբունք⁵: Ա. Կորլիկովան նշում էր, որ օրինականությունը քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք չէ, որը դրսուրպում է նյութական և դատավարական իրավունքների պահպանման մեջ⁶: Կ. Կալինովսկին նշում է, որ քրեական դատավարության սկզբունքները կազմում են օրինականության բովանդակությունը, այլ սկզբունքներն արտահայտում են օրինականության էությունը և կոնկրետացնում այն⁷:

Կարծում ենք, Նախագծի 2-րդ գլխում

օրինականության մասին դրույթ չնախատեսվելը ինքնին չի նշանակում, որ այն քրեական դատավարությունում բացակայում է: Բանն այն է, որ օրինականությունը սահմանադրական նշանակության համարական պահանջ է (Սահմանադրության 5-րդ հոդված), որը գործում է հանրային կյանքի բոլոր ոլորտներում:

Գործի արդարացի քննության սկզբունք: Գործող քր. դատ. օր-ի 17-րդ հոդվածում ամրագրված՝ գործի արդարացի քննության սկզբունքի տարրերն արտացոլվել են Նախագծի դատական պաշտպանության ապահովման, քրեական վարույթի ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքներում: Այսպես, Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի դատական պաշտպանության իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով, իսկ Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունը և դատական քննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում:

Գործող քր. դատ. օր-ի 17-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակիրարմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Նշված դրույթը արտացոլված չէ Նախագծի 2-րդ գլխում, սակայն դա ինքնին չի նշանակում, որ մինչդրատական վարույթն իրականացնող մարմինն ազատվել է լրիվ, օբյեկտիվ, բազմակիրարմանի քննություն կատարելու պարտականությունից: Նախագծում նախատեսված են մի շարք իրավամորմեր, որոնք քննիչի վրա դնում են լրիվ, օբյեկտիվ և բազմակիրարմանի քննություն կատարելու պարտականություն: Այսպես՝ Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմինը պարտավոր է

⁴ Ապացույցների ազատ գնահատումը, կարծում ենք, չի հանդիսանում արդարադատության սկզբունք, և արդարացիորեն Նախագծում այն արտացոլված չէ: Նախագծի 140-րդ հոդվածը կարգավորում է ապացույցների գնահատման հետ կապված հարաբերությունները:

⁵ Струве М.С. Курс советского уголовного процесса. М.: Наука, 1968. Т.1. С. 124-125.

⁶ Струве А.С. Законность-конституционный принцип советского уголовного судопроизводства. М., 1979. С.19

⁷ Струве Калиновский К.Б. Законность и типы уголовного процесса. Дисс. ... канд. Юрид. наук. СПб, 1999.

ԴԱՏԱՐԱԿԱՎԱԾԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏՔԱՍՈՒՄ

համգամանորեն ստուգել ի պաշտպանություն մեղադրյալի բերված և պատշաճ ձևակերպված փաստարկները, Նախագծի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քննիչը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության համար ինքնուրույն ուղղություն է տալիս քննությանը, իսկ Նախագծի 140-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը, դատախազը, դատավորը, դեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:

Նախագծով նախատեսված են քննիչի կողմից լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն կատարելու պարտականության ապահովման մի շարք երաշխիքներ: Այսպես՝ Նախագծի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ վերադաս դատախազը մինչդատական վարույթի ընթացքում իր որոշմամբ վարույթը շարունակելով հանձնարարում է նախաքննության մեկ այլ մարմնի՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով, Նախագծի 213-րդ հոդվածի համաձայն՝ դատախազն ուսումնասիրում է մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը, որպեսզի ստուգի՝ կատարված է արդյոք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Նախագծի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելենով վարույթի բնույթից, նշանակությունից, վարույթի մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով դատախազի որոշմամբ ոչ մեծ կամ միջին ժամրության հանցագործության վերաբերյալ ցանկացած վարույթ կարող է իրականացվել ընդհանուր նախաքննության կարգով:

Արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից: Նախ նշենք, որ գործող քր. դատ. օր-ի 24-րդ հոդվածում (արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից) ամրագրված մի շարք դրույթներ արտացոլվել են Նախագծի այլ սկզբունքներում: Այսպես, գործող քր. դատ. օր-ի 24-րդ հոդվածի 2-րդ մասում

ամրագրված՝ «ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, ինչպես նաև ենթարկվել քրեական պատժի այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան» դրույթը կլանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքում, 4-րդ մասում ամրագրված՝ «դատարանի իրավասությունը, նրա կողմից քրեական դատավարության իրականացման կարգը չեն կարող կանայականութեն փոփոխվել առանձին գործերի կամ անձանց կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով» դրույթն արտացոլված է Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում (բոլորի հավասարությունը օրենքի առջև), 5-րդ մասում արտացոլված՝ «ոչ ոք չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելով իրավունքից, որոնց ընդհատությամբ այն վերապահված է օրենքով» դրույթն արտացոլված է Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասում (դատական պաշտպանության ապահովում), 6-րդ մասում արտացոլված՝ «քրեական գործով դատարանի դատավճիռը և այլ որոշումներ կարող են վերանայել միայն համապատասխան վերադաս դատարանները՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով» դրույթը վերածնակերպված է Նախագծի 14-րդ հոդվածի 4-րդ մասում:

Բացի այդ, կարծում ենք «արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից» դրույթն որպես քրեական դատավարության սկզբունք չղիտելը լիովին արդարացված է մեթոդաբանական տեսանկյունից: Բանն այն է, որ նշված սահմանադրական նորմը «արդարադատություն» հակացության իմանենտ և էական հատկանիշներ է: Արդարադատություն առանց դատարանի գոյություն չունի⁸: Նշենք, որ «Արդարադատության սահմանադրական հիմունքները ԱՐԴ-ում» մենագրության հեղինակներն արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից դրույթը քննարկում են ոչ թե մյուս սկզբունքների հետ միասին, այլ «Արդարադատության հասկացությունը և բովանդակությունը» պարագրքում⁹: Ընդ որում, ժամանակակից որոշ դասագրքերում քննարկվող սահմանադրական դրույթն որպես ընդգրկված չէ ար-

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս. Ղանքարյան Ա. Արդարադատության սահմանադրավական հիմունքները ՀՀ-ում: Եր., ՈՀՅ հրատ., 2006, էջ 75:

⁹ Տե՛ս. Կոնստитуционные основы правосудия в СССР. Под ред. В.М. Савицкого. М.: 1981, С.7.

ԴԱՏԱՐԱԿԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏՔԱՍՏՈՒՄ

դարադատության սկզբունքների համակարգում¹⁰:

Դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնումը: Գործող քր. դատ. օր-ի 22-րդ հոդվածում որպես սկզբունք ամրագրված է դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնումը: Նշված դրույթի համաձայն՝ արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը ունի: Պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքը ունի նաև յուրաքանչյուր անձ, ով քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների կողմից անօրինական ենթարկվել է հարկադրամի միջոցների: Քրեական վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են իրականացնել սույն օրենսգրքով նախատեսված՝ արդարացվածի իրավունքների վերականգնման ուղղված բոլոր միջոցառումները: Նշված սկզբունքի հիման վրա գործող քր. դատ. օր-ը նախատեսում է ար-

դարացվածի ինստիտուտը և պատճառված վնասի հատուցման հետ կապված որոշ հարերությունների կարգավորում (ՅՅ քր. դատ. օր-ի 66 հոդված):

Պետք է նշել, որ Նախագծով նախատեսված է ռեարիլիտացիայի ինստիտուտը: Այսպես, Նախագծի 6-րդ հոդվածի 39-րդ կետի համաձայն՝ ռեարիլիտացիան Հայաստանի Հանրապետության անունից ի շահ արդարացվածի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կատարվող հատուցումն է, իսկ 153-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված է, թե որ հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերում է մեղադրյալը ստանում ռեարիլիտացիայի իրավունքը: Թեև Նախագծով տրված է ռեարիլիտացիայի բնորոշումը, սակայն ռեարիլիտացիայի ինստիտուտը համալիր կարգավորման չի ենթարկվել, ինչը կարող է պայմանավորված լինել նրանվ, որ ռեարիլիտացիան հանդիսանում է միջջուղային իրավական ինստիտուտ, ուստի այդ հարաբերությունները կարող են կարգավորվել առանձին օրենքով¹¹:

Սկզբունքներ, որոնք, գործող քր. դատ. օր.-ի համեմատությամբ, արտացոլված են Նախագծի՝ «քրեական դատավարության սկզբունքներ» գլխում (2-րդ գլուխ)

Նախագծում, որպես քրեական դատավարության սկզբունքներ, առաջին անգամ ուղղակի ձևով ամրագրվել են՝ քրեական վարույթի հանրայինության, քրեական վարույթի ողջամիտ ժամկետի, դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքները:

Քրեական վարույթի հանրայինությունը: Դեռևս խորհրդային ժամանակաշրջա-

նում առաջարկվել է քրեական դատավարության հանրայինությունը դիտել որպես քրեական դատավարության սկզբունք¹² և այն ամրագրել քրեական դատավարության օրենսգրքում¹³: Այս սկզբունքի բովանդակության վերաբերյալ եղել են տարաբնույթ մոտեցումներ: Ս. Աշիրբեկովան, Վերլուծելով հանրայինության սկզբունքի բովանդակության վերաբերյալ դատավարագիտու-

¹⁰ Տե՛ս. Բաշկատօվ Լ.Ն., Վետրովա Գ.Ն., Դօնցենկօ Ա.Դ., Զայսիկի Վ.Ի., Շեստակօ Վ.Ի. Սահմանադրության պատմությունը. Եղանակ 1.18. Կետում նշվում է, որ Նախագծով պետք է սահմանել ռեարիլիտացիայի ինստիտուտ, նախատեսել տվյալ քրեական վարույթի շրջանակներում արդարացվածի կրած վնասների հատուցման հնարավորություն:

¹¹ Տե՛ս. Ալեքսեև Հ.С., Ճաև Վ.Ղ., Կոկօրեվ Լ.Դ. Օչերկ զարգացման պատմության պատմությունը. Վորոնեժ, 1980. Ս. 40.

¹² Տե՛ս. Բանդուրին Ս. Գ. Պубличность как принцип уголовного судопроизводства и его действие в стадии возбуждения уголовного дела. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2004.

թյան մեջ արտահայտված մոտեցումներն, առանձնացրել է նշված սկզբունքի հետևյալ պահանջները՝ դատավարական գործունեություն իրականացնող պաշտոնատար անձանց և պետական մարմինների նախաձեռնողականության և ակտիվության գուգակցում, իրավասու սուբյեկտների պաշտոնական պարտականությունը հարուցել քրեական հետապնդում, իրականացնել քննություն և լուծել քրեական գործը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց պարտականությունը հետազոտել գործի բոլոր հանգամանքները և ապահովել գործին մասնակցող անձանց իրավունքները և օրինական շահերը, դատարանի և քրեական հետապնդման մարմնի պարտականությունը օգտագործել իրենց իշխանական լիազորությունները, իրենց գործունեության մեջ ցուցաբերել նախաձեռնողականություն, վարույթ իրականացնող պետական մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը դատավարական գործունեությունից առաջ և արդյունքների համար¹⁴:

Դանցավոր ուժնագործությունից անձին, հասարակությանը և պետությանը պաշտպանելը պետության սահմանադրական պարտականությունն է: ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածն սահմանում է, որ ՀՀ կառավարությունը պահպանում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության անրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանան ուղղությամբ: Դանրայնության սկզբունքը պահանջում է քրեական վարույթի հանրային մասնակիցներից արդյունավետորեն լուծել պետության առջև դրված՝ հանցավոր ուժնագործությունից անձին, հասարակության և պետության պաշտպանության խնդիրը:

Քրեական վարույթի հանրայնության սկզբունքն առաջին անգամ ուղղակի ամրագրում ստացավ Նախագծի 7-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվի և հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը: Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատությու-

նը, քրեական հետապնդումը, դատախազական հսկողությունը և հանրային այլ գործունեությունն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա ստեղծված իրավասու մարմինների կողմից: Այս դրույթից բխում է:

• Քրեական վարույթի հանրային մասնակիցներն իրենց գործառույթներն պարտավոր են իրականացնել անկախ քրեական վարույթի մասնավոր սուբյեկտի կամահայտնությունից: Այսպես, առերևույթ հանցանքի մասին հաղորդման առկայության դեպքում դատախազը կամ քննիչն իրենց իրավասության սահմաններում պարտավոր են քրեական վարույթ նախաձեռնել՝ անկախ վարույթի մասնավոր սուբյեկտների կամքից: Դատախազը, բավարար իմբերի առկայության դեպքում, պարտավոր է հարուցել քրեական հետապնդում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնել) անկախ տուժողի ցանկությունից, և նույնիսկ նրա կամքին հակառակ:

• Արդարադատությունը, քրեական հետապնդումը և դատախազական հսկողությունը հանրային գործունեություններ են և դրանք իրականացնող սուբյեկտները դեկավարվում են ոչ թե մասնավոր շահերով, այլ իրավունքի պահանջներով: Եթե հանրային գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք քրեական վարույթում ունեն անձնական շահագրգովածություն, ապա դա քրեական վարույթի հանրային մասնակիցի բացարկի կամ ինքնաբացարկի հիմք է:

• Դանրային գործառույթների իրականացման ոլորտում իրավունքի շահը պահանջում է, որ հատկապես քրեական հետապնդման հարուցման, քննության, դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության հանրային գործառույթներն իրականացնող պետական մարմինները և պաշտոնատար անձինք, առանց մեղադրական հակվածության, ձեռնարկեն օրենքով նախատեսված բոլոր միջոցները գործի օբյեկտիվ և ամբողջական հանգամանքները պարբելու ուղղությամբ: Օրինակ՝ դատախա-

¹⁴ Տե՛ս. Աշիրբեկովա Մ. Տ. Принцип публичности уголовного судопроизводства: Понятие, содержание и пределы действия. Автореф. дисс.... док. юрид. наук. Екатеринбург, 2009. С.61.

ԴԱՏԱՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ

զը քրեական հետապնդում հարուցելիս, դատարանում մեղադրանք պաշտպանելիս պարտվող է ծեռնարկել բոլոր օրինական միջոցներն՝ ապահովելու, որ քրեական գործով ծեռք բերվեն հնչպես արդարացնող, այնպես էլ մեղմացնող ապացույցներ, որոշում կայացնի օրենքի խախտմանը ծեռք բերված մեղադրական ապացույցն անբույլատրելի ձանաչելու մասին, եթե նույնիսկ այդ ապացույցը մեղադրանքի հիմնավորման համար ունի կարևոր նշանակություն:

Մինույն ժամանակ, պետք է նշել, որ հանրայնությունը հանդիսանալով քրեական դատավարության հիմնարար ակունք, չի բացառում քրեական դատավարությունում դիսպոզիտիվության՝ որպես քրեադատավարական գործունեության կազմակերպման լրացուցիչ տարրերի առկայությունը: Դայտնի դատավարագետ Ի. Լ. Պետրովինը նշում է, որ ուժեղ հանրային ակունքները բնութագրական են իմկվիզիցիոն և ոստիկանական պետությանը, իսկ դիսպոզիտիվության գերակայությունը հատուկ է հասունացած քաղաքացիական հասարակությանը և ժողովրդավարական պետությանը¹⁵: Քրեական դատավարության որոշ հեղինակավոր դասագրքերում քրեական դատավարության սկզբունքների շարքում, հանրայնության սկզբունքի հետ միասին, նշվում է նաև դիսպոզիտիվությունը¹⁶: Քրեական դատավարության դիսպոզիտիվության դրսևորումներ են հանարվում օրինակ՝ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը, քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում, միջնորդություններ և բողոքներ ներկայացնելը¹⁷, տուժողի

հետ հաշվվելու հիմքով հանրային քրեական հետապնդումը դադարեցնելը, սուրսիդիար մեղադրանքի, արագացված դատական քննության (Նախագծով՝ համաձայնեցման վարույթ) հնատիտուտները¹⁸:

Քրեական վարույթի ողամիտ ժամկետը¹⁹: Ա. Լարինը քրեական դատավարության արագությունը որակել է որպես ողջ քրեադատավարական գործունեության կառուցման և իրականացման հիմնարար պայմաններից և առաջարկել այն դիտել որպես քրեական դատավարության սկզբունքը²⁰: Նման սկզբունքը նախատեսված է նաև Սոլդովայի Հանրապետության N 122-XV 14.03.2003 քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածում:

Գործերը ողջամիտ ժամկետում քննելու դրույթն ունի ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական հիմքեր: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եկրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, որպես արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս, ամրագրված է գործերը ողջամիտ ժամկետում քննելու դրույթը: ՀՀ դատարանների նախագահների խորհուրդի 2006թ.-ի հունիսի 13-ի «Գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման մասին» թիվ 98 որոշմամբ, նույնպես արձանագրվում է այս դրույթի կարևորությունը և օրենսդրական կատարելագործման անհրաժեշտությունը:

Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը: Իրավագիտության մեջ նշակել է դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքի տեսական հիմ-

¹⁵ Տե՛ս. Петрухин И.Л. Публичность и диспозитивность в уголовном процессе. Российская юстиция. N 3, 1999, С. 24.

¹⁶ Տե՛ս. Уголовный процесс. Общая часть. Под ред. В.П. Божева, М.: Спарт, 2000, Уголовный процесс. Под ред. И.Л. Петрухина. М.: 2001, С. 70.

¹⁷ Տե՛ս. Штоль Д. С. Диспозитивность и ее отдельные проявления в уголовном процессе Российской Федерации. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Челябинск, 2009.

¹⁸ Տե՛ս. Касаткина С. А. Публичность и диспозитивность в Российском уголовном процессе. Автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2002.

¹⁹ Կարծում ենք որպես սկզբունք պետք է դիտել ոչ թե քրեական վարույթի ողջամիտ ժամկետը, այլ ողջամիտ ժամկետում քրեական վարույթի իրականացումը:

²⁰ Տե՛ս. Ларин А.М. Расследование по уголовному делу. Планирование и организация. М.: Юрид.лит. 1970. С. 15, 25; Նման դիրքորոշում հայտնել է նաև Ս. Սոլդովիչը, տե՛ս. Строгович М. С. урс советского уголовного процесса. Т. 2. М.: Наука. 1970. С. 63-64.

ԴԱՏԱՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԵՐԻ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ

թերը²¹: Իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը թեև ձևավորվել է որպես քաղաքացիական իրավունքի ինստիտուտ, սակայն ներկայումս այն հանդիսանում է ոչ միայն համատեսական, այլ նաև այլ ճյուղային գիտությունների, հատկապես դատավարագիտության ուսումնասիրության առարկան: Տեսության մեջ նշվում է. «հաշվի առնելով սուբյեկտիվ իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքի համատեսական բնույթը և այն դատավարական իրավունքի բոլոր ճյուղերում օրենսդրության ամրագրելու միտունը, անհրաժեշտ է քրեական դատավարական իրավունքում նույնպես ձևակերպել իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը»²²:

Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը ունի սահմանադրական հիմքեր: ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի համաձայն յուրաքնայշուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ յուրաքնայշուր ոք իրավունք ունի կատարելու այն ինչ արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները: Սույն նորմից բխում է, որ անձանց վերապահված իրավունքների իրականացումը սահմանափակված է այլ անձանց իրավունքներով և օրինական շահերով: Քրեական դատավարությունը հանդիսանում է կոնֆլիկտոգեն գործունեություն, որտեղ առկա են տարաբնույթ շահերի բախում, և կողմներից մեկը, որպես կանոն, իր իրավունքներն իրականացնելիս, խոչնորություն է քրեական դատավարության այլ օրինական շահերի իրականացնանք:

Իրավունքների չարաշահման անթույ-

լատրելիության սկզբունքը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դատավարական պատասխանատվության ինստիտուտի ընդիանուր գաղափարական - փիլիսոփայական հիմքը: Նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձի նկատմամբ կարող է կիրավել չարաշահմանը համաշափ՝ օրենսգրքով նախատեսված դատավարական ներգործության միջոց, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը: Նախագծի համակարգային վերլուծության արդյունքում, կարելի է, մասնավորապես, առանձնացնել իրավունքի չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ դատավարական ներգործության հետևյալ միջոցները.

• Դատավարական սանկցիաներ,

• Պաշտպանին և անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի, տուժողի կամ վկայի օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելը,

• Եյութերին ծանոթանալու ժամկետի սահմանափակում և նոր պաշտպանի նշանակում,

• Զերրակալված անձի և պաշտպանի տեսակցության տևողության սահմանափակում և այլն:

Այսպիսով, քրեական դատավարության օրենսգրքի նախագծով արդարադատության սկզբունքների համակարգը ենթարկվել է եական փոփոխությունների. մի կողմից քրեական դատավարությունում ավանդական համարվող մի շարք դրույթների և նախագծով այլս որպես առանձին սկզբունք ամրագումած չեն, մյուս կողմից՝ քրեական արդարադատության սկզբունքների համակարգ ներմուծվել են առանձին դրույթներ:

²¹ Տե՛ս. Գաջիև Գ. Ա. Конституционные принципы добросовестности и недопустимости злоупотребления субъективными правами. Государство и право. 2002. N 7. С. 54 - 62, Хмель М.М. Принцип недопустимости злоупотребления правом (теоретико-правовые аспекты). Автореф. дис... канд. юрид. наук., 2005, Зайцева С. Г. "Злоупотребление правом" как правовая категория: Вопросы теории и практики. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Волгоград, 2003, Дурново Н. А. Злоупотребление Правом как особый вид правового поведения (Теоретико-правовой анализ). Дисс. ... канд. юрид. наук, Шебанова Н. А. Злоупотребление процессуальными правами. Арбитражная практика. 2002. N 5, Малиновский А. А. Недопустимость злоупотребления правом как общеправовой принцип. Право и политика, N 9, 2006.

²² Տե՛ս. Багаутдинов Ф.Н. Принцип незлоупотребления процессуальными правами в уголовном судопроизводстве. Пятьдесят лет кафедре уголовного процесфа УрГЮА(СЮИ): Материалы Международного науч.-практ. Конф., г., Екатеринбург, 27-28 янв. 2005г.: В 2ч. 2005. Ч.1.

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՔՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ

Շուշան ԻՄՐԱՅԵԼՅԱՆ

Երևան քաղաքի դատախազության դատախազ

Մինչև քրեադատավարական պատասխանատվության հետ կապված հիմնահարցերին անդրադառնալը, հարկ ենք համարում քննարկել իրավաբանական պատասխանատվությունը, քանի որ քրեադատավարական պատասխանատվությունը պետք է հիմնվի դրա ընդհանուր սերային հասկացության վրա:

Իրավաբանական գրականության մեջ իրավաբանական պատասխանատվությունն ընկալվում է պողիտիվ (պատասխանատվություն՝ ապագա վարքագծի համար) և նեգատիվ (պատասխանատվություն՝ անցյալում կատարված հակաօրինական վարքագծի համար) իմաստներով, սակայն երկու առումներով է չկա պատասխանատվության ընդհանուր բնորոշում:

Պողիտիվ պատասխանատվության վերաբերյալ հիմնավորումները բազմաթիվ քննադատությունների են արժանացել:

Պարտքի զգացումը պատասխանատվություն չէ, այլ միայն իրավաչափ և պատասխանատու վարքագծի սուբյեկտիվ կողմն է: Պատասխանատվությունը չի կարող վրա հասնել միայն սուբյեկտիվ հիմքի առկայությամբ: Դրա համար անհրաժեշտ նախապայման է օբյեկտիվ հիմքը՝ հակաօրինական վարքագիծը:

Պարտականությունը և պատասխանատվությունը նույնական հասկացություններ չեն: Պատասխանատվությունը պարտականության կատարումն ապահովող միջոց է: Այս առումով էլ պատասխանատվությունը կատարում է կանխիչ ֆունկցիա: Պողիտիվ պատասխանատվության կողմնակիցների տեսանկյունից պատասխանատվությունը և կանխիչ ֆունկցիան, կոպիտ ասած, նույնանում են, ինչն անթույլատրելի է ծևական տրամաբանության տեսանկյունից:

Եթե իրավաբանական պատասխանատվության իրականացման կանավոր ձևի վերաբերյալ հարցն իրավաբանական գրականության մեջ բանավեճային է, ապա բոլոր գիտնականները միանշանակ ընդունում են իրավախախտման համար իրավաբանա-

կան պատասխանատվության գոյությունը¹: Չնայած «իրավախախտման համար իրավաբանական պատասխանատվության» հասկացության վերաբերյալ հարցի քննարկումն առկա է արդեն հիմնական տասնամյակից ավելի, սակայն մինչ օրս չկա նաև նեգատիվ առումով իրավաբանական պատասխանատվության ընդհանուր բնորոշում:

Սույն հոդվածում քրեադատավարական պատասխանատվության հետ կապված հիմնահարցերը քննարկելիս կերպենք նեգատիվ պատասխանատվության կոնցեպցիայից:

Հասարակական հարաբերությունների բնականոն զարգացման համար կարևոր նշանակություն ունի այդ հարաբերությունների մասնակիցների վրա դրված պարտականությունների բարեխիղճ կատարումը:

¹ Տե՛ս. Խաչատրով Ռ.Լ., Լիպինսկի Դ.Ա. Общая теория юридической ответственности: Монография. — СПб.: Издательство «Юридический центр Пресс», 2006. Էջ 182:

Պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով կարող են խախտվել ինչպես տվյալ իրավահարաբերության մասնակիցների, այնպես էլ ողջ հանրության իրավունքներն ու ազատությունները:

Պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում անհրաժեշտություն է գգացվում իրավախախտում կատարողների նկատմամբ կիրառել այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն վերջիններիս նկատմամբ պատշաճ ներգործություն և նրանց կիարկադրեն կատարելու իրենց պարտականությունները: Դենց այդպիսի միջոցների ամբողջությունը կազմում է պատասխանատվությունը:

Վերջին հաշվով, կարելի է պատասխանատվությունը ընդհանուր ձևով բնորոշել որպես իրավունքի նորմի պահանջը խախտելու համար վրա համոր ամբարենպաստ իրավական հետևանք, որն արտահայտվում է իրավունքների կամ ազատությունների սահմանափակմամբ կամ գրկմամբ:

Նման սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, ինչը բխում է յուրաքանչյուր պետության հիմնական օրենքից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը սահմանում է մարդու և քաղաքացու այն իրավունքները և ազատությունները, որոնք կարող են սահմանափակվել և նախատեսում դրանց սահմանափակման հիմքերը: Չոդվածում, մասնավորապես, նշվում է, որ իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով:

Այսնքան՝ պատասխանատվությունը կարող է սահմանվել իրավունքի որոշակի ճյուղի կողմից կարգավորվող իրավական նորմերով: Այս հանգամանքի հիման վրա էլ իրավաբանական գրականության մեջ իրավաբանական պատասխանատվությունը ճյուղային հատկանիշով դասակարգվում է

հետևյալ տարրեր տեսակների:^{2,3,4}

Հասարակական հարաբերությունների և օրենսդրության զարգացումն առաջ են բերում իրավաբանական պատասխանատվության նոր տեսակներ:

Վերջին շրջանում իրավագիտության մեջ տարածում է գուել այն նոտեցումը, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղ ունի պատասխանատվության իր միջոցները⁵: Իրավունքի ոչ մի ճյուղ չի կարող բնականոն գործել՝ առանց սեփական իրավաբանական պատասխանատվության հնատուտի առկայության: Դժվար է պատկերացնել իրավունքի ճյուղ, որը չունի իրավական պահանջների ապահովման սեփական միջոցներ: Չէ որ ճյուղային օրենսդրությանը պարտականություն նախատեսելն, առանց պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար համապատասխան անբարենպաստ իրավական հետևանքներ սահմանելու, իրավունքի տվյալ ճյուղը կիարձնի անբովանդակ և անկենսունակ:

Քրեական դատավարությունը նույնապես, որպես իրավունքի ճյուղ, ունի պատասխանատվության իր միջոցները: Չնայած, որոշ հեղինակներ հերքում են դատավարական, հետևաբար նաև քրեադատավարական պատասխանատվության գոյությունը⁶: Որպես նման նոտեցման հիմնավորում՝ նրանք ներկայացնում են այն փաստարկը, որ դատավարական հարկադրանքի միջոցները հանդիս են գալիս կամ որպես խափաննան միջոցներ կամ վարչական պատասխանատվության միջոցներ: Սակայն խափաննան միջոցները կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կամնելու և դատավճորի կատարումն ապահովելու նպատակով կիրավող հարկադրանքի միջոցներ են⁷, իսկ վարչական պատասխանատվության միջոցների տակ

² Տե՛ս. Շինդյապինա Մ.Դ. Стадии юридической ответственности: Учеб. Пособие. М., 1998. Էջ 23-25:

³ Տե՛ս. Լեյստ Օ.Զ. Основные виды юридической ответственности за правонарушения // Правоведение. 1977. № 3. Էջ 32:

⁴ Տե՛ս. Самошенко И.С. Фарукшин М. Х. Ответственность по советскому законодательству. М., 1971. Էջ 178:

⁵ Տե՛ս. Проблемы конституционно-правовой ответственности. Вестник Московского университета. Серия 11, Право, 2001/3, Էջ 124:

⁶ Տե՛ս. Самошенко И.С., Фаркушин М.Х. Оветственность по советскому законодательству. Москва 1971. Էջ 176:

⁷ Տե՛ս. Դիլբանդյան Ս. Դարությունյան Ա. և ուրիշներ Դայաստանի Դանրապետության քրեական դատավարույուն, Երևան 2002, Էջ 357:

հասկացվում է իրավասու պետական մարմինների կամ պաշտենատար անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով վարչական իրավախախումների համար կիրավող վարչական տույժ⁸: Մինչդեռ, քրեադատավարական պատասխանատվության միջոցներն ունեն ոչ թե կանխարգելիչ կամ պատշաճ վարքագիծն ապահովող բնույթ, ինչպես խափանման միջոցներն են, այլ արդեն իսկ կատարված իրավախախումնան (քրեական դատավարության օրենսդրության պահանջների խախտման) կամ իրավունքի չարաշահման հետևանքով կիրավող անբարենպաստ հետևանքներ են, բացի այդ, քրեադատավարական հարաբերությունները չեն կարող կրել վարչաիրավական բնույթ:

Պ.Ս. Ելկինդը գտնում է, որ քրեադատավարական պատասխանատվությունը լրացուցիչ քրեադատավարական պարտականությունների խախտման համար իրական հանձնարարական է, այս կամ այն դատավարական իրավունքներից զրկում կամ լրացուցիչ պարտականությունների սահմանում և համապատասխան դատավարական իրավունքից զրկում⁹:

Վ.Մ. Կովալյովը դատավարական պատասխանատվությունների խախտման համար իրական հանձնարարական է, որպես քրեադատավարական օրենքով նշված իրավախախումնան համար մեղավոր անձի նկատմամբ քրեադատավարական նորմի սանկցիայով նախատեսված ազդեցություն¹⁰:

Ն.Ա.Գրոմովը և Ս.Ա.Պոլումինը քրեադատավարական պատասխանատվությունը դիտարկում են որպես քրեադատավարական իրավունքի նորմերը խախտելու համար քրեադատավարական սանկցիայով նախատեսված հակաիրավական վարքագիծի նկատմամբ պետական պարասավանքն արտահայտող ազդեցություն¹¹:

Քրեական և քաղաքացիական դատավարության գիտության մեջ վաղուց քննարկվում էր դատավարական պատասխանատվությունը որպես իրավաբանական

**«...Քրեական դատավարությունը
նույնականացնեն, որպես իրավունքի ձյուղ,
ունի պատասխանատվության իր
միջոցները: Չնայած, որոշ
հեղինակներ հերքում են
դատավարական, հետևաբար նաև
քրեադատավարական
պատասխանատվության
գոյությունը...»**

պատասխանատվության ինքնուրույն տեսակ դիտելու և այն իրավական համակարգավորման ենթարկելու մասին հարցը¹²: Դատավարագիտության մեջ դեռևս 1970-ականներին դատավարական պատասխանատվությունը որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ դիտելու վերաբերյալ իրենց հիմնավոր մոտեցումն են արտահայտել քրեական և քաղաքացիական դատավարության մասնագետներ և Զեշինան և Պ. Ելկինդը¹³:

1998թ. հոկտեմբերի 30-ին Սանկտ Պե-

⁸ Տե՛ս. Ղամբեյան Գ. Վարչական պատասխանատվություն, «Լույս» իրատարակչություն, 2002, էջ 82:

⁹ Տե՛ս. Էլյանդ Պ.С. Цели и средства их достижения в советском уголовно-процессуальном праве. – Л.: Изд-во ЛГУ, 1976. – էջ 96:

¹⁰ Տե՛ս. Կովալյով Վ.Մ. Проблемы уголовно-процессуальной ответственности // Проблемы юридической ответственности и совершение законодательства в свете новой Конституции СССР. – Рязань: РВШ МВД СССР, 1979. – էջ 138–139:

¹¹ Տե՛ս. Գրոմով Հ.Ա., Պոլունին Ս.Ա. Санкции в уголовно-процессуальном праве России. – М.: Городец, 1998. – էջ 47:

¹² Տե՛ս. Ղամբարյան Ա., Շաթիրյան Ե. Իրավաբանական պատասխանատվության նոր տեսակները: Օրինականություն 2007, թիվ 39:

¹³ Տե՛ս. Չечина Հ. Ա., Էլյանդ Պ. Ս. Об уголовно-процессуальной и гражданской процессуальной ответственности. Сов. ГиП., 1973, №9.

տերրուրի պետական համալսարանում «Քաղաքացիական դատավարության տեսության և պրակտիկայի արդիական խնդիրները» թեմայով կազմակերպված կոնֆերանսում Վ.Բուտում արդարացիորեն նշել է, որ դատավարական գիտությունն ապացուցել է ռուսական իրավունքում դատավարական պատասխանատվության՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի առկայությունը¹⁴:

ՀՀ-ում դատադիրավական բարփիխումների երկորոր փուլում օրենսդրական ամրագրում ստացավ դատական սանկցիաների ինստիտուտը: Դրանով պաշտոնապես ճանաչվեց քրեադատավարական պատասխանատվության գոյությունը:

Ինչ խոսք, դատական սանկցիաների իիմքերի, տեսակների սպառիչ ցանկի նախատեսումը դրական քայլ էր ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տվյալ ինստիտուտի կարգավորման իրավաբանական տեխնիկայի առումով, այլ նաև այն տեսանկյունից, որ «չկա պատասխանատվություն, եթե այն նախատեսված չէ օրենքով» արտենատիկ դրույթը այդպիսի կարգավորումը դարձնում է պարտադիր:

Պետք է նշել, որ դատադիրավական բարփիխումների հաջորդ փուլը պետք է ընթանա այն ուղղությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով առանձին գլխով նախատեսվեն նաև քրեական դատավարության մինչդատական փուլում կիրավող սանկցիաների իիմքերը և տեսակները, քանի որ դրանք փաստացի առկա են, ամրագրված, սակայն որպես պատասխանատվության տեսակներ պետք է ինստիտուցիոնալ առումով համապարփակ կարգավորում ստանան, ինչպես դա արվել է դատական սանկցիաների դեպքում:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ մասի 10-րդ կետը դատախազի լիազորությունների շարքում նախատեսում է նաև գործի քննության ընթացքում օրենքի խախտում թույլ տալու դեպքում հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելը: Նշվածը ոչ այլ ինչ է, քան հետաքննության մարմնի աշխատակցի և քննիչի նկատմամբ մինչ-

դատական վարույթի ընթացքում կիրառվող քրեադատավարական սանկցիա, քանի որ առկա են պատասխանատվության բոլոր տարրերը՝ օբյեկտիվ իիմքը, այսինքն՝ օրենքի խախտումը և անբարենպաստ իրավաբանական հետևանքը. տվյալ քրեական գործի շրջանակներում դադարեցվում է այն անձանց լիազորությունները, որոնք թույլ են տվել այդ խախտումը:

Սեկ այլ օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ»: Նոյն հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ դրված պարտականությունները և նախատեսված սահմանափակումները մեղադրյալի կողմից խախտելիս գրավը որպես խափանման միջոց կարող է փոխարինվել կալանավորումով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրաված խափանման միջոցի պայմանները, քրեական վարույթն իրականացնող մարմնին իրավունք ունի դրոշում ընդունել տվյալ անձին ծերբակալելու մասին՝ միաժամանակ նրա կալանավորման մասին միջնորդություն ներկայացնելով դատարան:

Նշվածները նույնապես հանդես են գալիս որպես մինչդատական վարույթում կիրավող քրեադատավարական պատասխանատվության տեսակներ, քանի որ երկու դեպքում էլ քրեադատավարական նորմով սահմանված սանկցիան վրա է հասնում քրեադատավարական նորմը խախտելու հետևանքով:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մինչդատական վարույթի ընթացքում կիրավող քրեադատավարական սանկցիաներն առկա են, սակայն, մեր կարծիքով, անհրաժեշտ է դրանց իիմքերն ու տեսակների սպառիչ ցանկը ենթարկել ինստիտուցիոնալ կարգավորման՝ դրանք նախատեսելով առանձին գլխով:

¹⁴ Տե՛ս. Ակтуալիստ և թագավորության պատմություն. 1999. № 1.

ՀՀ Փինանսական գործունեության տնտեսական և իրավական մեթոդները և դրանց կատարելագործման հիմնախնդիրները

Նազելի ՍՈՒԳԵԱՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ֆինանսների միջոցով տեղի է ունենում ոչ միայն տնտեսության իրական հատվածում ստեղծված սկզբնական եկամուտների բաշխումը, այլ նաև ազգային եկամտի վերաբաշխման գործոքացը: Վերջինս կատարվում է տնտեսական և իրավական մեթոդով: Պետության ֆինանսական գործունեության տնտեսական մեթոդները կարելի են համարել.

• Փինանսական և

• բանկային վարկավորման մեթոդը:

Առաջին մեթոդի եռթյունը կայանում է նրանում, որ դրամական միջոցները տրամադրվում են անվերադարձելիության, իսկ երկրորդ մեթոդի դեպքում՝ վերադարձելիության սկզբունքով: Առաջին դեպքում վերաբաշխումը կրում է վերջնական բնույթ, իսկ երկրորդ դեպքում՝ միջանկյալ բնույթ: Դրանով է պայմանավորված է ֆինանսական և վարկային համակարգերի միջև եղած ենական տարբերությունը:

Ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման գործընթացին մասնակցում է նաև բնակչությունը: Բաշխման գործընթացին մասնակցում են այն չափով, որ չափով նրանք ստանում են աշխատավարձ, ծերնարկատիրական եկամուտներ և շահաբաժններ: Վերաբաշխման գործընթացին բնակչության մասնակցությունը պայմանավորված է նրանով, որ կատարում են հարկային և այլ բնույթի պարտադիր վճարումներ՝ դրանով իսկ մասնակցելով պետության կենտրոնացված դրամական ֆոնդերի կազմավորմանը, ինչն էլ հանդիսանում է վերաբաշխման աղյուր:

Ցանկացած երկրի համար ազգային եկամտի վերաբաշխումը պարտադիր պայման է, առանց որի, կարծում ենք, պետությունը չի կարող կատարել երկրի առջև ծառացած հետևյալ խնդիրները.

1. ապահովել անարտադրողական ոլորտի կարիքները անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, որտեղ, ինչպես հայտնի է, ազգային եկամուտ չի ստեղծվում, բայց որի զարգացումը խիստ կա-

րևոր նշանակություն ունի հասարակության համար:

2. իրականացնել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխում երկրի առանձին տարածքների միջև, ինչը կարևոր նշանակություն ունի, ամբողջությամբ վերցրած տնտեսության զարգացման, ինչպես նաև բնակչության կենսապայմանների բարելավման համար,

3. ապահովել տնտեսության և հատկապես արդյունաբերության նոր, առաջավոր ճյուղերի զարգացման առաջնահերթությունները,

4. ամրապնդել երկրի պաշտպանունակությունը,

5. իրականացնել արդյունավետ սոցիալական քաղաքականություն:

Պետության ֆինանսական գործունեության տնտեսական մեթոդները իրենց բովանդակային արտացոլումն են ստանում ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների կողմից ընդունված իրավական ակտերում, որն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ըստ Էռլյան պետության իրավաստեղծ գործունեության մի մասն է:

Իրավական հետևանքների տեսանկյունից ֆինանսական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքը կարելի է բաժանել երկու խմբի՝

ա) իրավական

բ) ֆինանսական գործունեության ապահովման կազմակերպական-օժանդակ:

Ֆինանսական գործունեության իրավական ձևերը սկզբունքային նշանակություն ունեն բոլոր մարմինների համար և այսպիսի գործառույթով օժտված են իշխանության համակարգի մեջ մտնող բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

Ֆինանսական գործունեության մեջ ընդհանուր ճանաչում ստացած տեսությունների համաձայն, ֆինանսական պահանջանքը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ֆինանսների ոլորտում իրավական հետևանքները պարունակող կամքի դրսերումն են, որն արտացոլվում է իրավական ձևերով և պայմանավորված է այդ մարմիններին վերապահված իրավասությամբ:

Օժանդակ կազմակերպական գործունեությունը իր բնույթով իրավական չէ, վարչագծի համապարտադիր կանոններ չի սահմանում, սակայն, նպաստում է դրամական միջոցների հավաքագրման, բաշխման և օգտագործման գործընթացների ձևավորմանը: Գործունեության այս ձևերը հիմնականում արտահայտվում են իրահանգչական բնույթի միջոցառումների կազմակերպմամբ (ժողովների և հավաքների կազմակերպում, ֆինանսկան և հարկային օրենսդրության ոլորտում պարզաբանումների անցկացում, տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և բյուջետային ֆինանսավորման ուղղությունների ամփոփում):

Պետական մարմինների գործունեության օժանդակ-կազմակերպական ձևերի միջոցով, կուտակված հարուստ փորձի և նյութերի հիման վրա պետական իշխանու-

թյան և կառավարման մարմինները, օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, կիրառում են ֆինանսական գործունեության իրավական ձևերը, որտեղ կոնկրետ իրենց արտահայտությունն են ստանում օրենսդիր և գործադիր մարմինների կամքի դրսերման պետախիսական հատկանիշները:

Պետության ֆինանսական գործունեությունը կյանքի է կոչում պետական մարմինների իրավաստեղծիչ գործառույթների կիրառումը, որոնց շնորհիվ սահմանվում, փոփոխվում կամ դադարեցվում է ֆինանսական մարմինների գործունեությունը:

Պետության ֆինանսական գործունեության մարմինները:

«...Պետության ֆինանսական գործունեության տնտեսական մեթոդները իրենց բովանդակային արտացոլումն են ստանում ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների կողմից ընդունված իրավական ակտերում, որն ըստ Եռության պետության իրավաստեղծ գործունեության մի մասն է...»

թյան ոլորտում իրավական այս կամ այն ձևի կիրառումը մեծ նասամբ պայմանավորված է հասարակական շահերի տեսանկյունից իրավական կարգավորման ենթակա հիմնահարցերի բնույթով: Օրինակ. ՀՀ պետական բյուջեն, որը ամրագրում է հանրապետության սոցիալտնտեսական զարգացումը, սահմանում է բյուջետային եկամուտների աղբյուրները և ծախսերի ուղղությունները, հաստատվում և իրականացվում է օրենքի տեսքով:

Բյուջեից կատարվող ֆինանսավորման այլ պահանջները կարող են լուծվել իրավական մեկ այլ ձևի որոշումների կարգվով:

Ֆինանսական գործունեությունը արտացոլող իրավական ակտերում դրսերմվող առանձնահատկությունները դասակարգվում են ըստ՝

ա) իրավական հատկանիշի,

բ) իրավական բնույթի:

Ինչպես իրավունքի ցանկացած ճյուղում, այսպես էլ այստեղ, ֆինանսակա-

ՖԻՆԱՆՍԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վական ակտերը իրենց ներհատուկ հատկանիշների շնորհիվ հանդես են գալիս նորմատիվ և անհատական իրավական ակտերի ձևով:

Նորմատիվային ֆինանսահրավական ակտերը հանդես են գալիս իրավական նորմի տեսքով, վարդագիրի համապարտադիր իրավական կանոններ են, կարգավորում են համասեր հասարակական հարաբերություններ և կյանքի են կոչված գործելու տևական ժամանակի համար: Գործնականում այս բնույթի ֆինանսահրավական ակտերով սահմանվում են հարկային պարտավորությունները, պարտադիր վճարումների հաշվարկների կարգը, նախատեսված պետական ֆինանսական միջոցների ծախսան կարգը, ֆինանսական հսկողության իրականացումը և գործունեության այլ տեսակները:

«...Պետության ֆինանսական գործունեության իրավական յուրօրինակ ձևեր են ֆինանսապահանային ակտերը...»

Անհատական ֆինանսահրավական ակտերը կյանքի են կոչվում կարգավորելու կոնկրետ ֆինանսական խնդիրներ: Կարող են հանդես գալ ինչպես նորմատիվային ակտերում պարունակվող ընդհանուր կանոնների կենտրոնացված կամ անհատականացված վարդագիրի համապարտադիր կիրառման ակտեր, այնպես էլ որպես ինքնուրույն ֆինանսական հարաբերություններ կարգավորող իրավական նորմեր:

Չնայած իրավաբանական գրականության մեջ անհատական իրավական ակտերը որպես իրավաբանական փաստեր չեն ընդունվում, այնուամենայնիվ, ֆինանսահրավական անհատական ակտերը ուղղված են դրամական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման փուլերում ծագող հասարակական՝ ֆինանսական հարաբերությունների կարգավորմանը: Դետևաբար, կարգավորման առարկայի առանձնահատկություններից ենթելով, պետության կամքով, անհատական ֆինանսահրավական ակտերի գործադրմանը ֆինանսական գործունեության ոլորտում իրավահարաբերությունների սուբյեկտների փոխհարաբերություններում ծագում, փոփոխվում և դադարեցվում

են համարժեք իրավական հարաբերություններ: Օրինակ, ՀՀ «Եկանտահարկի մասին» 27.12.1997թ. օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, հանախառն եկամուտը նվազեցվում է նաև ձեռնարկատիրական գործունեությունից և քաղաքացիահրավական պայմանագրեր կատարելուց ստացած եկամուտների գծով, ֆիզիկական անձի կողմից ներկայացվող հայտարարագրի հիման վրա: Դայտարարագրի սահմանված ժամկետներում ներկայացնելը նոր իրավական հարաբերությունների ծագման հիմք է հանդիսանում, քանի որ փոփոխման է ենթարկվում հարկի ծավալը, դույըքը, հարկվող եկանտի չափը, հետևաբար հարկային տեսչության կողմից հարկի վճարման մասին հիշեցումը նոր բովանդակությամբ է համարվում, որը և ինձ է տալիս դատելու, որ վերջինս ոչ թե հիմնական օրենքի կիրառմանը ուղղված անհատական ակտ է, այլ իրավաբանական նոր փաստ, որի ուժով դադարում են եկանտահարկի գանձման մասին նախորդ իրավունքները և պարտականությունները, կյանքի են կոչվում նորացված բնույթի հարկային իրավական հարաբերություններ: Դժվար չէ հանզանակել, որ այս դեպքում անհատական ֆինանսահրավական ակտը հանդես է գալիս ոչ որպես ֆինանսահրավական նորմի կիրառման ակտ:

Պետության ֆինանսական գործունեության իրավական յուրօրինակ ձևեր են **ֆինանսապահանային ակտերը**, որոնք իրենց բովանդակությամբ և կարգավորման առանձնահատկություններով տարբերվում են ցանկացած ֆինանսահրավական ակտերից:

Ֆինանսապահանային ակտերը արտահյուսում են պետության ֆինանսական գործունեության ռազմավարությունը որոշակի տևական հատվածի համար: Պլանային ակտերը ուղղված են կոնկրետ մեծածավալ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ դրամական ռեսուրսների հավաքագրմանը, բաշխմանը և վերաբաշխմանը: Պլանային ակտերը միաժամանակ հանդես են գալիս որպես պետական այս կամ այն մարմնին ուղղվող պարտադիր հանձնարարականներ:

Ֆինանսապահանային ակտերը բազմա-

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գան են: Արանց թվին են դասվում հանրապետության իշխանական ֆինանսական պլանը, նախարարությունների, տնտեսավարող կազմակերպությունների եկամուտների և ծախսերի ֆինանսական պլանները, բանկային մարմինների վարկային և դրամարկային պլանները, պետական և տեղական ինքնակառավարման նպատակային ֆոնդների ֆինանսական պլանները, նախահաշիվները և այլն:

Ֆինանսապահանային ակտերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք արտահայտվում են համապատասխան պետական մարմինների կողմից ընդունած իրավական ակտերի ձևով և իրենց կիրառման ընթացքում, իրավական հետևանքների տեսակետից, ապահովում են պետական հարկադրանքի ուժով, որով և հավասարեցվում են ֆինանսահիրավական ակտերին:

Անդրադառնալով պետության ֆինանսական գործունեության մեթոդներին, որոնք գործնակամում դրսկողվելով որպես տնտեսական հարաբերությունների ամբողջություն նպատակային կիրառում կարող են ունենալ միայն այն դեպքերում, եթե իրենց ամրագրումն են ստացել ֆինանսահիրավական ակտերում:

Վերլուծությունների և տեսական ընդհանրացումների հիմնան վրա կարելի է հանգել այն եղրակացության, որ պետության ֆինանսական գործունեության մեթոդ ասելով պետք է հասկանալ իրավական հնարքների, ձևերի և եղանակների այնահիմքի համալիր միջոցների ամբողջություն, որոնք կենտրոնական և տեղական իշխանության մարմինները կիրառում են պետության ամփոփելու միջոցների հնչանական մարմարան, այնպես էլ ծախսերի կատարման գործընթացում:

Հետևաբար, պետության ֆինանսական գործունեությունը, խնդիրները, որոնք ժամանակի ընթացքում վեր են ածվում հասարակական-պետական կյանքի պահանջների, ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմինների պետության ֆինանսական գործունեության բարելավմանը ուղղված իրավաստեղծ գործունեության առարկա պետք է հանդիսանան.

1. Յարկերի, գանձույթների և այլ հարկային եկամուտների սահմանումն ու գանձումը: Այս մեթոդի կիրառման անհրաժեշտությունը բխում է պետության տնտեսական անվտանգության և հզորության,

երկրի պաշտպանության կազմակերպման շահերից: Յարկերին և այլ պարտադիր վճարումներին ներհատուկ են հարկադրանքի կիրառման անհրաժեշտությունը, որը տնտեսվարող սուրյեկտներին և քաղաքացիներին գրկում է հարկերը վճարելուց խուսափելու հնարավորություններից: Յարկերը պարտադիր վճար լինելուց բացի անհատույց և անվերադարձ են, ունեն անհատական բնույթ և որպես կանոն գանձվում են դրամի տեսքով, ուղղվում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների և գործառույթների հրականացմանը:

2. Քաղաքացիների և կազմակերպությունների դրամական միջոցների հավաքագրման կամավորության ամփոփումը:

Պետությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության դրամական միջոցները հավաքագրում և կենտրոնացնում են ըստ անհրաժեշտության բնակչության հետ համագործակցելու և անհատական հանգանակության ճանապարհով:

3. Կամավոր և պարտադիր ապահովագրության սահմանումը:

Պետությունը և տեղական ինքնակառավարման մարմինները դրամական միջոցների հավաքագրման գործընթացը կազմակեցում են ապահովագրության և ապահովագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

Ապահովագրությունը որպես դրամական միջոցների հավաքագրման գործիք, հավաքագրման գործընթացում լուծում է երկու կարևոր խնդիր:

ա. Յավանական ռիսկերից առաջացած պատահարների և եղելությունների դեպքում քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի ապահովում,

բ. Բնակչության և կազմակերպությունների ժամանակավորապես ազատ դրամական միջոցների հավաքագրում և դրամը որպես ֆինանսական ներդրումներ պետության և համայնքային իշխանությունների խնդիրների և գործառույթների հրականացման նպատակով օգտագործում:

4. Դրամի էնիսիա, պետության ֆինանսական գործունեության այն իրավական մեթոդներից մեկն է, որի նպատակը դրամական միջոցների հավաքագրումն է շրջանառության մեջ նոր դրամի բաց թղթնաման ճանապարհով: Ենիսիոն իրավունքը

ՖԻՆԱՆՍԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վերապահված է միայն ՀՀ ԿԲ, որն համրի-սանում է բանկի բացառիկ իրավունքը:

Պետության ֆինանսական գործունեության հաջորդ մերողը ունի դրամի նպատակային ծախսնան ուղղվածություն:

Պետության ֆինանսական գործունեության ուսումնասիրությունների հիման վրա դրամի ծախսնան ուղղությունները կարելի են կոնկրետացնել բյուջետային ֆինանսավորման, վարկավորման, ապահովագործյան, կենսաթոշակների վճարման, փոխհատուցումների, սուբսիդիաների, սուբվենցիաների, դուտացիայի, կանխիկ և անկանխիկ հաշվարկների, արժութային գործունեության, արժեքթերի իրացնան գործունեության, կազմակերպման մեթոդներով:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական գործունեության ոլորտում ծախսների նպատակային բաշխման ուղղվածության ոլորտների ծզգիտ հստակեցումը և դրանց իրավական կարգավորման առանձնահատկությունների բացահայտումը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական մեծ նշանակություն, քանի որ պետության և հատկապես առանձին իրավաբանական անձանց և հատկապես քաղաքացիների մասնակցությամբ որոշակի կոնկրետ ժամանակահատվածում կատարված համախառն բոլոր ծախսները պետք է կատարվեն ֆինանսական օրենսդրության և օրինականության ապահովման սկզբունքների պահանջներին համաձայն, որոնք գտնվում են հատկապես օրենսդիր և գործադիր իշխանությունների ամենօրյա վերահսկողության տակ:

Գիտական հիմնավորվածության նպատակով, կարծում ենք, պետության ֆինանսական ծախսերի ուղղությունները տեսանելի և վերահսկելի դարձնելու նպատակով այն կարելի է դասակարգել ըստ հասարակական և պետական կյանքի համար կենսական նշանակության հետևյալ ուղղությունների:

1. Բյուջետային ֆինանսավորում

2. Վարկավորում

3. Ապահովագրություն և ապահովագրական գործունեության կազմակերպում

4. Կենսաթոշակների և սոցիալական ապահովության վճարներ

5. Փոխհատուցումներ, սուբսիդիաներ, սուբվենցիաներ և դուտացիաներ

«...Վերլուծությունների և տեսական ընդհանրացումների հիման վրա կարելի է հանգել այն եզրակացության, որ պետության ֆինանսական գործունեության մեթոդ ասելով պետք է հասկանալ իրավական հնարքների, ձևերի և եղանակների այնպիսի համալիր միջոցների ամբողջություն, որոնք կենտրոնական և տեղական իշխանության մարմինները կիրառում են պետությանը անհրաժեշտ դրամական միջոցների ինչպես հավաքման, այնպես էլ ծախսերի կատարման գործընթացում...»

6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված փոխառությունների դիմաց վճարումներ

7. Կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների վճարումների կազմակերպում

8. Արժութային գործառնությունների կարգավորում

9. Արժեթերերի շուկայում արժեթերերի իրացնան կազմակերպում:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական գործունեության վերը հիշատակված իրավական մեթոդներից յուրաքանչյուրի կիրառումը կարծում ենք պետք է ունենա գիտական և գործնական փաստարկվող հիմնավորումներ, որոնցից յուրաքանչյուրի օգտագործումը պետք է բխի ժամանակի քաղաքական, տնտեսական և գործող իրավական համակարգի և օրենսդրության պահանջներից:

Ի մի բերելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական գործունեության իրավական յուրաքանչյուր մեթոդի գործնական նշանակությունը կարելի է

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հանգել այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսական գործունեության իրավական բովանդակությունը կազմում է դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացում առաջացող այն բազմաբնույթ հասարակական հարաբերությունները, որոնք կարգավորվում են ֆինանսական նորմերով:

Հետևաբար, որպեսզի ճիշտ արժեքավորվի ֆինանսական գործունեությունը և այդ գործընթացը կարգի կրչող իրավական մեթոդների համակցությունը, կարծում եմ, անհրաժեշտ է համակարգել և արժեքավորել այն բոլոր գործուները, որոնց համակցության ճիշտ արժեքավորման շնորհիվ հնարավոր կլիմի կատարելով գործել մեր հանրապետությունում ֆինանսական գործունեության դերը և նշանակությունը պետության տնտեսական համախմբված գործառույթների համակարգում, վերջինս սահմանազատելով ընդհանուր տնտեսական գործունեությունից:

Դժվար չէ նկատել, որ պետության ֆինանսական գործունեության իրավական մեթոդների ընտրությունը պայմանավորված են մի շարք այնպիսի գործուներով, ինչպիսիք են զարգացման տվյալ պահին պետության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավակազմակերպական կարգը, որը, կարծում ենք, նիսկ արդյունավետ չափանիշն է պետության ֆինանսական գործունեության բովանդակությունը սահմանազատելու համրային գործունեության այլ ուղղություններից: Այդ գործուները հատկապես արտացոլում են պետության կենտրոնական և տեղական իշխանությունների գործառույթների ուղղությունները, դրանց խնդիրները և նպատակները, ֆինանսական այն ռեսուրսները, որոնք գտնվում են պետական գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության ներքո, տնտեսական տվյալ պահի հզորությունը և կառուցվածքները, տնտեսվարման գերակա ուղղությունները և նպատակատղվածությունը:

Այս գործուները, բնականաբար, պահանջ են առաջարդում ապահովել միասնական պետական և հասարակական վերահսկողություն պետության ֆինանսա-

կան գործունեության իշխատակված բոլոր ոլորտներում, համակցելով պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթների անթերի իրավանացումը պետությանը անհրաժեշտ դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացում:

Պետության սոցիալ-տնտեսական գործնթացների ամրապնդման ամենահիմնական գործոնը պետությունների հզորության ամրապնդման գործում հանդիսանում է պետության ֆինանսական գործունեությունը:

Ժամանակակից աշխարհում, հատկապես բնակչության սոցիալական ապահովածության բարձր կենսամակարդակ ապահովող պետությունների փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ պետական իշխանությունը, նրա գործունեությունը կազմակերպող պետական մարմինների համակարգի սնուցումն ապահովող արյունատար անորմներով հոսող արյունը ֆինանս է (փողը), որը օժտված է ամփոխարինելի այնպիսի հատկանիշներով, ինչպիսին է հասարակության, որպես միասնական օրգանիզմի, բոլոր քիչների կենսունակության ապահովումը, նրանց փոխներգործությունը որպես միասնական մարմնի անքաշան մասերի: Այն իր կենսունակությամբ և ինքնակարգավորման օրյեկտիվ գործունեությամբ արձագանքում է ինչպես օրգանիզմի ներսում, այնպես էլ նրանից դուրս կատարվող փոփոխություններին: Ֆինանսների ինքնակարգավորման այս հատկանիշը հասարակության գոյաւթեան կենսական անհրաժեշտություն է, որի առանձին դրսերումների նկատմամբ կարելի է վիրաբուժական միջոցառումներ ծեռնարկել, սակայն, այն որպես հիմնական զարկերակ, անհնար է ամբողջովին փոփոխել:¹

Հետևաբար, ցանկացած պետության ֆինանսական գործունեության շրջանակները անսահմանափակ են: Դրանք ընդգրկում են այն պետությունների ոչ միայն ներպետական այլև արտաքին տնտեսական գործունեության բոլոր ուղղությունները, արտահայտելով տվյալ պետության ֆինանսական համակարգի կառուցվածքը և կայունության երաշխիքները:

¹ Սամրանասն տե՛ս, Մ.Ի. Պիսկուտին, Սոցիալիզմ և գումարության սահմանադրություն, Մ., “Наука”, 1988, էջ 268-269:

Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը

**կամ՝ Ինչ է ասում մեզ << Սահմանադրության
3-րդ հոդվածի երրորդ մասը**

Գոր ՀՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

Բեռլինի Հումքուղար-Համալսարանի դոկտորանու

Իրավունքի ընդհանուր տեսությունից հայտնի է, որ իրավունքը հասկացվում է երկու իմաստով՝ օրյեկտիվ և սուբյեկտիվ:

Օրյեկտիվ իրավունքը պետության իրավակարգում առկա բոլոր իրավանորմերի ամբողջությունն է, այն է՝ սահմանադրության, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի բոլոր դրույթները։ Այս իմաստով հիմնական իրավունքներն օրյեկտիվ իրավունք են։ Բայց նրանք միաժամանակ և ամենից առաջ սուբյեկտիվ իրավունքներ են։

Սուբյեկտիվ իրավունքն անձին (այդ իրավունքը կրողին) սորված և դատական կարգով պաշտպանության ենթակա իրավական ուժն է պահանջելու մեջ որիշից (այդ իրավունքի հասցեատիրոջից) որոշակի գործողություն, անզործություն կամ համբերություն։ Իրավակարգի կողմից երաշխավորված իրավունքներն անվանվում են սուբյեկտիվ իրավունքներ, որովհետև դրանք լիազորում են մի որևէ կրողի՝ իրավունքի սուբյեկտին։ Ընդ որում՝ խոսքը կարող է վերաբերել և ֆիզիկական, և հավաքանական անձանց։ Երկուսն է հավասարապես իրավունակ են։ Եթե ամփոփենք, ապա սուբյեկտիվ իրավունքը լիազորում է իրավունքի սուբյեկտին և պարտավորեցնում (կաշկանդում) է իրավունքի հասցեատիրոջը։

Սուբյեկտիվ իրավունքներն իրենց հերթին լինում են բացարձակ և հարաբերական։

Այսօրվա հայկական իրավունքում արմատացած թյուր կարծիքի համաձայն՝ բացարձակ իրավունքն անսահմանափակելի իրավունքն է։ Փորձեք նայել վերջերս լուս տեսած ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունները։ Օրինակ՝ 244-րդ էջի երկրորդ պարբերության առաջին նախադասությունն ասում է. «Այդուհանդերձ, պաշտպան ընտրելու իրավունքը բացարձակ չէ և ենթակ որոշակի հանգամանքներից՝ կարող է սահմանափակվել»։ Կամ՝ Սահմ. 28-րդ հոդ. Երրորդ մասի մեկնաբանության մեջ ասվում է. «Միավորվելու իրավունքը բացարձակ իրավունք չէ։ Այդ իրավունքը ենթակ է սահմանափակման Սահմանադրության 43 և 44-րդ հոդվածներում նախատեսված կարգով և հիմքերով» (Եջ 320, տես նաև 340, 477 էջերը)։

Իրավունքի բացարձակ լինելն իրակա-

նում ոչ մի կապ չունի դրա սահմանափակելիության հետ, որովհետև չկան անսահմանափակելի իրավունքներ, բացառությամբ մարդու արժանապատվության իրավունքի, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-649 որոշման VII կետում ասում է. «...քաղաքացիների որոշ կատեգորիաներ գրկում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված (ընդգծումն իմն է — Գ.Յ.) իրենց առանձին հիմնարար իրավունքների իրականացման հնարավորությունից...)։ Իրականում անհնար է ՀՀ Սահմանադրության մեջ գտնել թեկուզ մի դրույթ, որը որևէ հիմնական իրավունք ճանաչում է չսահմանափակվող (հիմնական իրավունքների սահմանափակելիության հարցն առանձին խոսակցության նյութ է և սույն հոդվածում չի քննարկվի)։

Բացարձակ իրավունքներն իրավունքի

սուբյեկտին տալիս են մի որոշակի բնագավառի նկատմամբ բացառիկ, իրավականորեն պաշտպանված իշխանություն, որը պետք է հարգեն բոլորը: Այսինքն՝ բացարձակ իրավունքները գործում են ընդդեմ բոլորի (ունեն *erga omnes* գործողություն), ի տարբերություն հարաբերական իրավունքների, որոնք սկզբունքորեն գործում են միայն իրավահարաբերության նաև կանոնակիցների միջև (ունեն *inter partes* գործողություն): Մեկընդիշտ հիշե՛ք՝ իրավունքի բացարձակ լինելու հարցը որոշվում է միմիայն նրա գործողության բնույթով՝ *erga omnes*, թե *inter partes*:

Քանի որ բացարձակ իրավունքները գործում են ընդդեմ բոլորի, այդ իրավունքները պետք է յուրաքանչյուրի համար ճանաչելի ու որոշակի լինեն: Դրա համար բացարձակ իրավունքների համար գործում է *numerus clausus* սկզբունքը, այսինքն՝ գոյություն ունի բացարձակ իրավունքների սպառիչ թվաքանակ, և չի կարելի անընդհատ նոր բացարձակ իրավունքներ հորինել ու ավելացնել արդեն եղածներին: Յուրաքանչյուրի համար բացարձակ իրավունքների ճանաչելիությունն ու որոշակիությունը երաշխավորվում է տարբեր գրանցամատյաններում դրանց գրանցմանը: Օրինակ՝ ապրանքային նշանի իրա-

վունքը բացարձակ իրավունք է և գործում է ընդդեմ բոլորի, այսինքն՝ այդ իրավունքի հասցեատեր է յուրաքանչյուր ոք, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել ու չխախտել այդ իրավունքը: Ու որպեսզի յուրաքանչյուր ոք ինանա այդ իրավունքի գոյության մասին (հակառակ պարագայում անհնար կլինի հարգել ու չխախտել այն), այն պարտադիր ենթարկվում է պետական գրանցման:

Դարաբերական իրավունքները, ինչպես արդեն տեսամք, իրավունքի սուբյեկտին լիազորում են՝ պահանջելու կոնկրետ անձից (իրավունքի հասցեատիրոջից) որոշակի վարքագիծ: Ի տարբերություն բացարձակ իրավունքների, հարաբերական իրավունքները լիազորում ու պարտավորեցնում են միայն իրավահարաբերության մասնակիցներին (գործում են *inter partes*):

Առանց բացառության բոլոր հիմնական իրավունքները հարաբերական իրավունքներ են, որովհետև նրանք գործում են ոչ թե ընդդեմ բոլորի, այլ ունեն կոնկրետ մեկ հասցեատեր՝ պետությունը: Բոլոր հիմնական իրավունքները գործում են միմիայն հանրային իրավահարաբերության կողմերի՝ պետության և քաղաքացիների միջև, ուստի գոյություն չունեն և չեն կարող ունենալ բացարձակ հիմնական իրավունքներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հիմնական իրավունքների հասկացությունը հայկական իրավունքում ձևական է, այսինքն՝ հիմնական իրավունքները ՀՀ-ում այն իրավունքներն են, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում:

Հիմնական իրավունքները սուբյեկտիվ հանրային իրավունքներ են: Նրանց հիմնական իմաստը մեկ ուրիշից որևէ գործողություն կամ անգործություն պահանջելու՝ անհատին տրված բողոքարկելի իրավական ուժին է: Նշանակում է՝ հիմնական իրավունքների միջուկն են կազմում պաշտպանության կամ ակտիվ գործողության պահանջները:

Իրավական տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական իրավունքները եռանդամ կառուցվածք ունեն՝

1. իրավունքի կրող (սուբյեկտ),
2. իրավունքի հասցեատեր և

3. իրավունքի առարկա կամ օբյեկտ:

Յուրաքանչյուր հիմնական իրավունք մատնացուց է անում (որոշակիորեն կամ անորոշ կերպով) «լիազորվածին», այսինքն նրան, ում պատկանում է հիմնական իրավունքը (իրավունքի սուբյեկտին):

ՀՀ Սահմ. 3-րդ հոդվածի երրորդ մասում նշված է «հիմնական իրավունքներով պարտավորվածը» (իրավունքի հասցեատերը), այսինքն՝ նա, ում դեմ լիազորվածները (իրավունքի սուբյեկտները) կարող են վկայակոչել իրենց հիմնական իրավունքները:

Հիմնական իրավունքների առարկան նկարագրվում է առանձին հոդվածներում: Ակնհայտ են զուգահեռները քաղաքացիական պահանջի հետ, որը կազմված է պահանջատիրոջից («ովք»), պարտապանից («ումից») և պահանջի բովանդակությունից («ինչ»):

ՈՒՍՈՒՄՆԱՎՈՒՐՈՒԹՅՈՒՆ

Որ հիմնական իրավունքները սուբյեկտիվ իրավունքներ են, երևում է հենց նրանց եռանդամ կառուցվածքից: Դա պարզ է դառնում, եթե առաջ է քաշվում մի վարկած, թե հիմնական իրավունքները միայն օրենսդրիվ իրավունք են. այս դեպքում կրացակացի անհատապես լիազորվածը (իրավունքի սուբյեկտը), այնպես որ հիմնական իրավունքները միայն երկանդամ կառուցվածք կունենան. «Անկը», այն է՝ պետությունը (և միայն ու միայն պետությունը՝ Սահմ. 3-րդ հոդ. Երրորդ մաս), կաշկանդված կվինի «մի բանվ», այն է՝ հիմնական իրավունքի բովանդակությամբ: Հակառակ դրան՝ եռանդամ կառուցվածքի դեպքում կարող է մեկը (սուբյեկտը) մեկ ուրիշից (հասցեատիրոջից) մի բան (իրավունքի առարկան) պահանջել:

Պետք է միաժամանակ ուշադրություն դարձնել, որ թեև հիմնական իրավունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխ, դա ամենակին չի նշանա-

կում, որ Սահմ. 2-րդ գլուխ ամրագրված բոլոր իրավանորմերը հիմնական իրավունքներ են: Հիմնական իրավունքների կողքին 2-րդ գլուխ կան նաև հիմնական իրավունքների մասին նորմեր (օրինակ՝ Սահմ. 42.1-րդ, 43-րդ, 44-րդ հոդ.) և կազմակերպա-իրավական նորմեր (օրինակ՝ 39-րդ հոդ. 2-4-րդ մասեր), որոնք անհատին սուբյեկտիվ իրավունքներ չեն տալիս: Նրանք ընդամենը թեմատիկ կապ ունեն հիմնական իրավունքների հետ: Այդ հոդվածներում ամրագրված նորմերը չունեն սուբյեկտիվ հանրային իրավունքի որակ, այսինքն՝ քաղաքացիներին չեն լիազորուն, ուստի նրանք այդ նորմերի հիմնավորական պետությանը՝ որպես հիմնական իրավունքների հասցեատեր, որևէ պահանջներկայացնելու հնարավորություն չունեն: Յետևաբար նրանք չեն կարող նաև անհատական դիմում ներկայացնել ՍԴ այդպիսի նորմերի խախտման հիմնավորմամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻԲՐԵԿ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Հիմնական իրավունքների սուբյեկտները

ա) Մարդու իրավունքներ

Հիմնական իրավունքները՝ իբրև սուբյեկտիվ իրավունքներ, լիազորում են նախ մարդկանց (Փիզիկական անձանց): Մարդիկ՝ իբրև հիմնական իրավունքի սուբյեկտներ, բառացիորեն նշվում են առանձին հիմնական իրավունքներում կամ կարող են ենթադրվել դրանց ձևակերպումից: Եթե հիմնական իրավունքի սուբյեկտը բոլոր մարդիկ են, ապա հանդիպում է կամ «յուրաքանչյուր ոք» (ՀՀ Սահմ. 15-րդ հոդ. առաջին նախ., 18-րդ հոդ.) կամ «քոլոր մարդիկ» (ՀՀ Սահմ. 14.1-րդ հոդ.) դարձվածքը: «Ոչ ոք» ժխտական ձևակերպումը ևս (ՀՀ Սահմ. 15-րդ հոդ. Երկրորդ նախ., 17-րդ հոդ. առաջին մաս) նշանակում է, որ հանապատասխան հիմնական իրավունքը պատկանում է բոլոր մարդկանց: Եթե որևէ հիմնական իրավունքում հիմնական իրավունքի սուբյեկտը որոշակիորեն նշված չէ (ՀՀ Սահմ. 14-րդ հոդ., 22-րդ հոդ. Երկրորդ մաս, 32-րդ հոդ. հինգերորդ մաս, 39-րդ հոդ. Երրորդ մաս), այդ դեպքում ևս հանապատասխան հիմնական իրավունքի սուբյեկտը բոլոր մարդիկ են: Այն հիմնական

իրավունքները, որոնց սուբյեկտները բոլոր մարդիկ են, շատ հաճախ բնորոշվում են որպես մարդու իրավունքներ:

Անչափահասների, դեռ չծնված երեխայի (nasciturus) և մահացածի իրավունակության խնդիրներին սույն հոդվածում գիտակցարար չեն անդրադառնում:

բ) Քաղաքացու իրավունքներ

Մի շարք հիմնական իրավունքները լիազորում են միայն քաղաքացիներին (ՀՀ Սահմ. 25-րդ հոդ. Երրորդ մաս, 28-րդ հոդ. Երկրորդ մաս, 30-րդ հոդ. առաջին մաս): Քաղաքացու իրավունքները իրավասուրյեկտությունը կապում են քաղաքացիության փաստի հետ, այսինքն՝ «քաղաքացու իրավունքներ» հասկացությունը ցույց է տալիս պետության քաղաքացիների շրջանակով իրավասուրյեկտության սահմանափակումը:

Օտարերկրացիները կամ ապաքաղաքացիներն իրավունակ են այնքանով, որքանով նրանք կարող են հենվել որևէ հիմնական իրավունքի վրա, որը ՀՀ քաղաքացիության հետ չի կապվում: ՀՀ քաղաքացիության հետ կապված են, օրինակ, Սահմ. 28-րդ հոդ. Երկրորդ մասով, 30-րդ, 30.1-րդ, 30.2-րդ հոդվածներով, 39-րդ հոդ.

Վեցերորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները: Սակայն նույնիսկ եթե որևէ հիմնական իրավունք միայն քաղաքացիներին է լիզորում, միևնույն է օստարերկրացիներին և պետք է տվյալ ոլորտում իրավունքների պաշտպանություն տրամադրվի ընդհանուր ազատության իրավունքի միջոցով (Սահմ. 42-րդ հոդ. Երկրորդ մաս), որը սակայն ավելի մեծ սահմանափակելիության պատճառով համեմատաբար նվազ պաշտպանություն է երաշխավորում:

գ) Իրավաբանական անձինք

ՀՀ Սահմ. 42.1-րդ հոդվածը հիմնական իրավունքներ կրելու ունակությունը տարածում է «իրավաբանական անձանց» վրա: Ըստ հոդվածի բառացի տեքստի՝ նրա գործողության տակ են ընկնում բոլոր իրավաբանական անձինք՝ անկախ հանրային կամ մասնավոր իրավունքին իրենց պատկանելությունից: Իսկ հիմա խնդրում եմ նորից բացեք ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունները (էջ 505): ՀՀ Սահմ. 42.1-րդ հոդվածը մեկնաբանողը հոդվածում ամրագրված «իրավաբանական անձ» հասկացության ներքո հասկանում է միայն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց՝ մեկնաբանելով տվյալ հասկացությունը ՀՀ քաղ. օր.-ի 50-րդ հոդվածի 1-ին կետի օգնությամբ: Սակայն նման մեկնաբանմամբ խախտվում է այն հանրահայտ սկզբունքը, ըստ որի՝ սահմանադրական նորմը չի կարելի մեկնաբանել հասարակ օրենքի միջոցով: Արդյունքում Սահմ. 42.1-րդ հոդվածի գործողության ոլորտից դուրս են մնում հանրային իրավունքի իրավաբանական անձինք: Ակնհայտ է, որ հայկական իրավունքում դեռևս առկա է հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց անքավարար տարրերական խնդիր:

42.1-րդ հոդվածի գործողության ոլորտի ճշգրտումը կարևոր է Երկու տեսանկյունից: Նյութական տեսանկյունից հիմնական իրավունքներ կրելու ունակությունը թույլ է տալիս հենվել հիմնական իրավունքների վրա: Դատավարական տեսանկյունից 42.1-րդ հոդվածը ճանապարհ է բացում անհատական դիմում ներկայացնելու համար:

Մասնավոր իրավունքի իրավաբանական անձինք: 42.1-րդ հոդվածն առանց որևէ խնդրի նախ և առաջ տարածվում է մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց վրա (ՀՀ քաղ. օր. 5-րդ գլուխ),

որոնք գտնվում են մասնավոր անձանց ձեռքում: Սա համապատասխանում է 42.1-րդ հոդվածում ամրագրված իրավանորմի նպատակին. Իրավաբանական անձը, որն իր հետևում կանգնած անհատների անձի զարգացման արտահայտությունն է («անհատական սուբստրատ»), պետք է օգտվի հիմնական իրավունքների ինքնուրույն պաշտպանության հնարավորությունից: Իրավաբանական անձանց իրավունակության միակ նախապայմանն այն է, որ հիմնական իրավունքն իր էռթյամբ կիրառվի լինի նրանց նկատմամբ: Դա այդպես է, եթե հիմնական իրավունքով պաշտպանվող գործունեությունը կարող է իրավաբանացել նաև իրավաբանական անձանց կողմից (այն է՝ կոլեկտիվ ձևով), այսինքն՝ չի կապվում մարդու բնական հատկանիշների (որպեսների) հետ: Օրինակ՝ իրավաբանական անձը կարող է ֆիզիկական անձանց նման ունենալ սեփականություն (Սահմ. 31-րդ հոդ. առաջին մաս), նա կարող է խորականության ենթարկվել (Սահմ. 14.1-րդ հոդ.) և կարծիք հայտնել (Սահմ. 27-րդ հոդ. առաջին մաս), սակայն նա ո՞չ արժանապատվություն ունի (Սահմ. 14-րդ հոդ.), ո՞չ կյանք կամ առողջություն (Սահմ. 15-րդ և 33.2-րդ հոդ.հոդ.), ո՞չ ամուսնանում է (Սահմ. 35-րդ հոդ.), ո՞չ էլ երեխաներ է ունենում (Սահմ. 36-րդ հոդ.):

Հանրային իրավունքի իրավաբանական անձինք սկզբունքորեն հիմնական իրավունքների սուբյեկտ չեն, որովհետև նրանք հանրային իշխանության (այն է՝ պետության) մի մասն են: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետևում կանգնած են ոչ թե ֆիզիկական անձինք, այլ միշտ պետությունը, որը չի կարող լինել միաժամանակ հիմնական իրավունքի և՝ սուբյեկտ, և՝ հասցեատեր (այսպես կոչված կոնֆուզիոն փաստարկ): Նրանք գործում են օրենքով սահմանված իրենց իրավասությունների հիմնա վրա, այլ ոչ թե իրացնում են հիմնական իրավունքներ: Եթե այլ պետական մարմինների կողմից խախտվում են նրանց իրավասությունները, ապա առկա է ոչ թե ոտնձգություն սուբյեկտիվ հիմնական իրավունքների դեմ, այլ սուկ իրավասությունների բախում: Նույնիսկ տեղական ինքնակառավարման «իրավունք», որն ամրագրված է սահմանադրութեան (ՀՀ Սահմ. 11.2-րդ հոդ.) և որի խախտումը կարող է պաշտպանվել սահմանադրական դիմումի միջոցով (ՀՀ

ՈՒՍՈՒՄՆԱՎՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Սահմ. 101 հոդ. առաջին մասի 5-րդ կետ), չումի հիմնական իրավունքի որակ: Նույն կերպ համայնքները սեփականության հիմնական իրավունքի (Սահմ. 31-րդ հոդ.) սուբյեկտ չեն, քանի որ սեփականությունը համայնքի ձեռքում նաև ավոր նախաձեռնողության հիմք չէ և չի կատարում սեփականատիրոցն օգուտ բերելու գործառույթ (նաև ավոր շահի ինաստով): Կարծ ասած՝ Սահմ. 31-րդ հոդվածը պաշտպանում է ոչ թե նաև ավոր սեփականությունը, այլ նաև ավոր անձանց սեփականությունը:

Սակայն այլ է հարցը, երբ հանրային իրավունքի իրավաբանական անձինք հենց կում են դատավարական հիմնական իրավունքների վրա (օրինակ՝ Սահմ. 18-րդ, 19-րդ հոդ.հոդ.), քանի որ սահմանադրական այդ դրույթները ծևական առումով պատկանում են ոչ թե հիմնական իրավունքներին, այլ բովանդակում են դատավարական օրյեկտիվ սկզբունքներ, որոնք գործում են ցանկացած դատավարության համար, ուստի պետք է ծառայեն յուրաքանչյուրին, ով դատավարական նորմերին համապատասխան եղել է դատավարության մասնակից: Հետևաբար հանրային իրավունքի իրավաբանական անձինք դատավարական հիմնական իրավունքների սուբյեկտ են:

Այս դեպքում ևս, երբ հանրային իրավունքի իրավաբանական անձը հիմնական իրավունքներ է պաշտպանում այնպիսի բնագավառում, որտեղ նա պետությունից անկախ է, պետք է ելնել հիմնական իրավունքներ կրելու նրա ուժակությունից: Այս ինաստով հանրային հեռուստատեսությունը և հանրային ռադիոն Սահմ. 27-րդ հոդվածի չորրորդ մասում, իսկ համալսարանները՝ Սահմ. 40-րդ հոդվածում անրագրված հիմնական իրավունքի սուբյեկտ են:

Փաստորեն, հիշյալ բացարիկ դեպքերում անհատական դիմումով ՍԴ կարող են դիմել նաև հանրային իրավունքի իրավաբանական անձինք, որովհետև նշված դեպքերում նրանք կոնկրետ հիշյալ հիմնական իրավունքների սուբյեկտ են, ուստի հնարավոր է նրանց հիմնական իրավունքների խախտում:

Դայլական արդի իրավաբանական գործառության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ վերոհիշյալ բացառությունները ցավոք դեռ չեն գիտակցվում, և դեռևս առկա է այն թյուր պատկերացումը, թե իրավաբանա-

կան անձանց դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել բացառապես ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավաբանական անձի նկարագիր ու կարգավիճակ ունեցող սուբյեկտները կամ դրանց միավորումները, այսինքն՝ միայն նաև ավոր իրավունքի իրավաբանական անձինք (տե՛ս Սահմ. 101-րդ հոդ. 6-րդ կետի մեկնաբանությունը (էջ 976), ինչպես նաև ՍՊՕ-691 որոշումը, որով կարգվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության հայաստանի փոկարար ծառայության աշխատակազմի դիմումի մասով գործի վարույթը այն պատճառաբանությամբ, թե իբր նա չունի իրավաբանական անձի կարգավիճակ):

Այս դիրքորոշումը, թե ՀՀ-ում անհատական դիմում ներկայացնելու իրավունք ունեն բացառապես նաև ավոր իրավունքի իրավաբանական անձինք, միանգամայն անընդունելի է, որովհետև ննան մեկնաբանության դեպքում ոչ միայն իրենց հիմնական իրավունքների պաշտպանության հնարավորությունից կզրկվեն հանրային իրավունքի իրավաբանական անձինք, այլև կստացվի, որ նաև ավոր իրավունքի իրավաբանական անձն անհատական դիմում ներկայացնելու իրավունք կունենա նաև այսպես կոչված վարչական մասնավոր իրավունքի դեպքում, երբ պետությունն իր հանրային-իրավական խնդիրներն իրականացնում է նաև ավոր իրավունքի իրավաբանական անձանց միջոցով (օրինակ, երբ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 100%-ը գտնվում է պետության ձեռքում): Ննան դեպքերում, չնայած նաև ավոր իրավունքի հատուկ կազմակերպա-իրավական ձևին, բաժնետիրական ընկերությունը հիմնական իրավունքների հասցեատեր է և անհատական դիմում ներկայացնելու իրավունք չունի:

2. Հիմնական իրավունքների հասցեատերը

Ըստ ՀՀ Սահմ. 3-րդ հոդվածի երրորդ մասի՝ պետությունն է սահմանափակված (այսինքն՝ կաշկանդված, պարտավորված) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Պետական իշխանությունն էլ ՀՀ-ում իրականացվում է օրենսդրի, գործադիր և դատական իշխանությունների միջոցով (ՀՀ Սահմ. 5-րդ հոդ. առաջին մաս): Նշանա-

կում է՝ Սահմ. 3-րդ հոդ. Եղրորդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների միակ հասցեատերը պետությունն է (օրենսդիրը, գործադիրը և արդարադատությունը), եթևաբար մասնավոր անձինք նույնիսկ բացառության կարգով հիմնական իրավունքների հասցեատեր լինել չեն կարող: Ոչ մի դեր չի խաղում նաև այն հանգամանքը, թե պետությունն անմիջականորեն, թե միջնորդավորված ձևով է գործում (օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կամ մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց միջոցով), կամ մասնավոր-իրավական, թե հանրային-իրավական խնդիրներ է իրականացնում. Համբային իշխանությունը միշտ կաշկանդված է հիմնական իրավունքներով:

Վերևում արդեն տեսանք, որ իրավունքի հասցեատերն այն կողմն է, որի վրա սուրյեկտիվ իրավունքով որևէ պարտականություն է դրվում, և որի կատարումը նրանից պահանջելու հնարավորություն ունի այդ նույն իրավունքի սուրբեկող: Փաստորեն միայն ու միայն պետությունն է, որի վրա Սահմ. 2-րդ գլխում անրագրված հիմնական իրավունքները որոշակի պարտականություններ են դնում, և հիմնական իրավունքների սուրյեկտները հիմնական իրավունքների հիման վրա միմիայն պետությունից կարող են պահանջել որոշակի գործողություն (status positivus և status activus հիմնական իրավունքների դեպքում), անզործություն կամ համբերություն (status negativus հիմնական իրավունքների դեպքում):

Ընդ որում, օրենսդիր իշխանության ներքո հասկացվում է օրենսդիր մարմինը, այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովը, բայց ոչ պարզապես իրավական ակտեր ընդունելու նյութական գործառույթը, որն իրականացվում է նաև այլ մարմինների կողմից: Դատական իշխանության մեջ մտնում են պետության բոլոր դատարանները: Գործադիր իշխանությունը ներառում է պետության այն բոլոր մարմիններն ու ստորաբաժանումները, որոնք չեն պատկանում օրենսդիր և դատական իշխանություններին:

Իշխանության թերի այսպիսի տարանջատումը շատ պարզ է ու հստակ և երեք վեճերի արիթ չի տալիս: Նման մոտեցման դեպքում շատ հեշտ է պատասխանել հաճախ վեճերի արիթ տվող այն հարցին, թե, օրինակ, դատախազությունը իշխանության որ ճյուղին է պատկանում՝ գործադիրին, թե դատականին: Վերոհիշյալ տարանջատումից միանշանակ բխում է, որ դատախազությունը, մեր կարծիքով, պատկանում է գործադիր իշխանությանը, որովհետև այն ո՞չ Ազգային ժողով է, ո՞չ էլ դատարան:

Իշխանության յուրաքանչյուր ճյուղ կաշկանդված է հիմնական իրավունքներով յուրովի: Այդ առանձնահատկություններին սույն հոդվածի շրջանակներում անդրադարձալը նպատակահարմար չեն համարում: Դատականին լուրջ բարդություն է ներկայացնում հիմնական իրավունքներով գործադիր իշխանության կաշկանդվածության հարցը, որովհետև գործադիր միշտ չէ, որ գործում է պետականական ձևերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Epping, Volker: Grundrechte, Heidelberg 2010.
2. Lothar, Michael; Martin, Morlok: Grundrechte, Baden-Baden 2010.
3. Altevers, Ralf: Grundrechte, Münster 2010.
4. Schmidt, Rolf: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2010.
5. Kluth, Winfried: Grundrechte, Halle (Saale) 2010.
6. Detlef, Merten; Papier, Hans-Jurgen (Hrsg.): Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, Heidelberg 2010.
7. Stern, Klaus: Grundrechte-Kommentar, Köln 2010.
8. Kloepfer, Michael: Verfassungsrecht, München 2010.
9. Manssen, Gerrit: Staatsrecht, München 2010.
10. Meyer, Thomas; Vorholt, Udo (Hrsg.): Menschenrechte, universelle Grundrechte und Demokratie, Bochum 2009.
11. Balthasar, Alexander: Grenzen und Gefahren des Schutzes der Grundrechte: fünf Studien, Sramek 2009.
12. Pieroth, Bodo; Schlink, Bernhard: Grundrechte, Staatsrecht II, Heidelberg 2009.
13. Ipsen, Jörn: Staatsrecht II, Grundrechte, Köln 2009.
14. Röhl, Klaus F.: Allgemeine Rechtslehre, Köln 2008.
15. Alexy, Robert: Theorie der Grundrechte, Frankfurt am Main 2006.

ՔԱՂԱՔԱՅՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՊԱՏԽԱՐՎԱԾ ՎԵՍԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Առողջությունն ամեն ինչ չէ,
սակայն առանց առողջության
ամեն ինչ ոչինչ է»:

Սովորատես

Դրաշիկ ԶԻԼԱՎՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

Քաղաքացու առողջությանը պատճառված վնասի համար պատասխանատվության հարցերը միշտ եղել են իրավաբանների ուղարկության կենտրոնում։ Այնուամենայնիվ, առողջությանը պատճառված վնասի բազմաթիվ կողմեր շարունակում են վհաճա-հարույց մնալ։ Սաևնավորապես, դա վերաբերում է «քաղաքացու առողջությանը պատճառված վնասի» հասկացությանը, նրա առանձին տեսակների բնութագրին։ Խնդիրն այն է, որ քաղաքացիական օրենսգրքում կիրառվող բազմաթիվ հասկացություններ, որոնք օգտագործվում են առողջությանը պատճառված վնասն արտահայտելու համար, տարրեր կերպ են մեկնարանվում քաղաքացիական իրավունքի գիտության, բժշկության և հոգեբանության շատ ներկայացուցիչների կողմից։

Սակայն մինչ «քաղաքացու առողջությանը պատճառված վնասի» հասկացության մեկնարանումը անհրաժեշտ է նաև պարզաբանել «առողջություն» հասկացությունը։

Դաշվի առնելով այն համգամանքը, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Քաղ. Օր.) չի սահմանում «առողջություն» հասկացությունը, անհրաժեշտություն է առաջանալուն տալ առողջության բնորոշումը՝ ուսումնասիրելով դատական բժշկությունը, քրեական իրավունքն ու բժշկական գրականությունը։

Պեսոր է նշել, որ անգլերեն «health» (առողջություն) բառը ծագել է անգլերեն «whole»՝ անբողջ, անվնաս բարից, որն ըստ Էլերյան առողջության հոմանիշն է¹։ «Առողջության» ընդհանուր սահմանումը փորձել են տալ դեռ հնագույն ժամանակներից։ Օրինակ, փիլիսոփա, բժիշկ, մաթեմատիկոս Պյութագորասը գտնում էր, որ

առողջությունը ներդաշնակություն է, հավասարակշռություն, իսկ հիվանդությունը՝ ներդաշնակության խանգարում²։ Որոշ գիտնականներ ինչպիսիք են Գ. Կրիժանովսկին, Դ. Ալբոյը, նույնպես իրենց աշխատություններում տվել են «Առողջության» սահմանումը, համաձայն որոնց «Առողջությունը օրգանիզմի չխաթարված ֆունկցիոնալ դինամիկ հոնքեստագի վիճակն է» (Գ. Կրիժանովսկի), կամ «Առողջությունը կամ նորման տվյալ կոնկրետ պայմաններում օրգանիզմի կենսագուծումներության այնպիսի ձև է, որն ապահովում է օպտիմալ վիճակ և միջավայրին աղեկված (համարժեք) գոյություն»³ (Դ. Ալբոյ), Փաստորեն՝ հիմք ընդունելով վերը նշվածները կարելի

¹Տես. <http://yalschool3.edusite.ru/p150aa1.html>:

²Տես. նույն տեղում։

³Տես. Ածո Ա.Դ. Պатологическая физиология, Учебник для медицинских вузов, Москва Триада-х, 2000, էջեր 1-3:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

է սահմանել, որ առողջությունն օրգանիզմի անհատական նորմերի սահմաններում իրագործվող ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեկան վարքային, սոցիալական բարվոր կենսագործունեությունն է⁴:

Քրեական իմաստով առողջությունը կարելի է սահմանել որպես քաղաքացու օրգանիզմի փաստացի ֆիզիկական վիճակը տվյալ պահին՝ մինչև նրա վրա հանցավոր ազդեցության կիրառումը⁵:

Ինչպես պնդում են բժիշկները, «առողջություն» հասկացությունը բնութագրվում է կազմության բազմիմաստությամբ, բարդությամբ և անհամասեռությամբ⁶: Առողջապահության միջազգային կազմակերպության կանոնադրությամբ սահմանվում է, որ առողջությունը լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակն է, այլ ոչ թե հիվանդությունների կամ ֆիզիկական թերությունների բացա-

տեսնում ենք, այս ձևակերպումների մեջ նշված են «առողջության» ուսումնասիրության երեք ինքնուրույն մակարդակներ. կենսաբանական (ֆիզիոլոգիական), հոգեբանական և սոցիալական, որոնցից միայն կենսաբանական առողջության խնդիրը է ըննարկվելու այս հոդվածում:

Բժշկական գրականության մեջ նշվում է, որ ամենաընդհանուր ուրվագծերով կենսաբանական մակարդակի վրա առողջությունը կարելի է բնութագրել որպես վիճակ, որը հակառակ է հիվանդությանը: Այդ դեպքում առողջությունը հստակ սահմաններ չի կարող ունենալ, քանի որ ընդգրկում է տարբեր անցումային վիճակներ: Գիտական մեկնաբանություններից մեկի համաձայն, առողջությունը օրգանիզմի բնական վիճակն է, որը բնութագրվում է լիարժեք հավասարակշռությամբ արտաքին միջավայրի (կենսոլորտի) հետ և հիվանդագին փոփոխությունների բացակայությամբ: Դա պայմանավորված է նրանով, որ իրական կյանքում բացի առողջ մարդկանցից, քիչ չեն նաև ոչ ամբողջովին առողջ կամ հիվանդ մարդիկ: Ուստի, յուրաքանչյուր կոնկրետ քաղաքացի ժամանակի յուրաքանչյուր առանձին միջակայքում ունի առողջության անհատական մակարդակ՝ շատ ցածր կամ բարձր և այլն: Եվ անկախ առողջության որակից, դրան կարելի է վնաս հասցնել: Հետևաբար, քրեական իրավունքում և դատական բժշկությունում առողջություն ասելով հասկանում են քաղաքացու որոշակի օբյեկտիվ կենսաբանական վիճակը, որն առկա է եղել մինչև հանցագործության

**«... Քրեական իմաստով
առողջությունը կարելի է սահմանել
որպես քաղաքացու օրգանիզմի
փաստացի ֆիզիկական վիճակը
տվյալ պահին՝ մինչև նրա վրա
հանցավոր ազդեցության
կիրառումը...»**

կայությունը⁷: Սմանատիա սահմանում տրված է նաև «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, այն է՝ վերարտադրողական առողջությունը նարդու ֆիզիկական, մտավոր և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակն է՝ կապված վերարտադրողական համակարգի, դրա գործառությունների ու կենսունթացների հետ⁸: Ինչպես

ցի ժամանակի յուրաքանչյուր առանձին միջակայքում ունի առողջության անհատական մակարդակ՝ շատ ցածր կամ բարձր և այլն: Եվ անկախ առողջության որակից, դրան կարելի է վնաս հասցնել: Հետևաբար, քրեական իրավունքում և դատական բժշկությունում առողջություն ասելով հասկանում են քաղաքացու որոշակի օբյեկտիվ կենսաբանական վիճակը, որն առկա է եղել մինչև հանցագործության

⁴ Տե՛ս. Գ.Ա. Նավասարդյան, ԵՊԲՀ «Ընդհանուր ախտաֆիզիոլոգիա», Երևան, 2007թ., էջեր 13-16:

⁵ Տե՛ս. <http://imp.rudn.ru/lectures/624/P3.htm>:

⁶ Տե՛ս. Վասիլևա Օ.С., Ֆիլատով Փ.Բ. Փսիխология здоровья человека: эталоны, представления, установки: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. М.: Академия, 2001. էջ 3:

⁷ Տե՛ս. Constitution of the World Health Organization - Basic Documents, Forty-fifth edition, Supplement, October 2006:

⁸ Տե՛ս. ՀՀ օրենք «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», հոդված 2:

իրականացումը: Վերը նշվածը թույլ է տալիս ծևակերպել նաև առողջությանը պատճառված վնասի հասկացությունը քաղաքացիական իրավունքի տեսանկյունից: Առողջությանը պատճառված վնասը քաղաքացու կենսաբանական վիճակի վատթարացումն է այն մակարդակի նկատ-

են քաղաքացու օրգանների և հյուսվածքների անատոմիական ամբողջականության և կենսաբանական ֆունկցիաների խանգարումները արտաքին միջավայրի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և հոգեբանական գործոնների ազդեցության տակ: Կախված վնասող գործոնի բնույթից,

մարմնական վնասվածքները կարող են լինել մեխանիկական, ֆիզիկական (ջերմային, էլեկտրական և այլն), քիմիական (քիմիական այրվածքները): Դիվանդագին վիճակը կարելի է սահմանել որպես նորմայից շեղում, որը կենսաբանական բացասական նշանակություն ունի օրգանիզմի վրա: Այսպիսի հիվանդագին վիճակը կարող է լինել ինչպես մշտական, այնպես էլ

անցումային և շատ կարճատև: Դրանցից են շոկային, կոմային վիճակները, սրտային, շնչառական անբավարարությունները և այլ վիճակներ, որոնք արտահայտվում են օրգանիզմի կենսաբանական ֆունկցիաների խանգարումների տեսքով:

Առողջությանը պատճառված վնասի քանակական բնութագիրը նրա աստիճանն է:

Կանոններում սահմանված է քաղաքացու առողջությանը պատճառված վնասի ծանրությունը դասակարգող հատկանիշները. **ա) ծանր վնասի համար՝** քաղաքացու կյանքին սպառնացող առողջության վնասը կամ առողջությանը հասցված վնասի հետևանքները՝ տեսողության, լսողության, խոսքի կամ մարմնի ցանկացած մասի կամ վերջինիս ֆունկցիայի կորուստը, հղիության ընդհատումը, հոգեկան խանգարումները, թրամանությամբ կամ թունամոլությամբ հիվանդանալը, դեմքի անջնջելի այլանդակումը, ընդհանուր աշխատունակության զգալի կայուն կորուստը ոչ պակաս, քան մեկ երրորդի չափով, մասնագիտական աշխատունակության լրիվ կորուստը, **բ) միջին ծանրության համար՝**

մամբ, որն ունեցել է մինչև հիվանդության առաջացումը, իսկ ահա առողջության վնաս ասելով հասկանում են մարմնական վնասվածքներ՝ օրգանների և հյուսվածքների անատոմիական ամբողջականության կամ դրանց ֆիզիոլոգիական ֆունկցիայի խանգարում կամ հիվանդություններ և ախտաբանական վիճակներ, որոնք ծագում են արտաքին միջավայրի տարրեր ազդակների ազդեցությամբ⁹:

Քաղաքացու առողջությանը պատճառված վնասը կարող է ունենալ որակական և քանակական բնութագրեր: Վնասի որակը (բնույթը) որոշվում է օրգանիզմին պատճառված հիվանդության ձևով: Ուստաստանի Դաշնության դատարժչկական փորձագիտության կանոններում¹⁰ (այսուհետ՝ Կանոններում) առանձնացվել են այդպիսի երեք ձևեր. մարմնական վնասվածք, հիվանդություն և հիվանդագին վիճակ:

Քաղաքացու առողջությանը պատճառված վնասի հնարավոր երեք ձևերից Կանոններում սահմանվել է միայն մարմնական վնասվածքը: Կանոնների 2-րդ կետի համաձայն քաղաքացու առողջությանը պատճառված վնաս ասելով հասկանում

⁹ Տե՛ս. Դատական բժշկություն: Ուս. Զեռնարկ / Ծ.Ա. Վարդամյան:-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2010թ., էջ 143, տե՛ս նաև Բատիչկո Վ.Տ., Սպասարակության օրենսդրությունը 2006 թ. մայիս ամսաթիվ 14/10 թիվում հայտադրությունը և այլն.

¹⁰ Տե՛ս. Постановление Правительства РФ от 17 августа 2007 г. N 522 "Об утверждении Правил определения степени тяжести вреда, причиненного здоровью человека" (с изменениями от 24 марта, 17 ноября 2011 г.)

առողջության երկարատև խանգարումը, ընդհանուր աշխատունակության զգալի կայուն կորուստը ոչ պակաս, քան մեկ երրորդի չափով, գ) թերև վճասի համար՝ առողջության կարճաժամկետ կորուստը, ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստը։ Քաղաքացու առողջությանը պատճառված վճասի համար պատասխանատվության առաջացնան առաջին պայմանը վճասի առկայությունն է։

«...Քաղաքացու առողջությանը պատճառված վճասը կարող է ունենալ որակական և քանակական բնութագրեր...»

Որոշ հեղինակներ, վճաս ասելով, հասկանում են մեկ քաղաքացու ոչ իրավաչափ գործողություններով մեկ այլ քաղաքացու գույքին պատճառված կորուստների դրամական գնահատականը։ Սակայն այս պարագայում Ի.Բ. Նովիցիկին հաշվի չի առնում այն դեպքերը, երբ խոսքը վերաբերում է բարոյական վճասի հատուցմանը, կամ երբ պարտավորության մասնակցի անբարեխորդության հետևանքով մյուս կողմը շահույթ չի ստանում, և բնական է, որ նշված դեպքերում տուժողի գույքին վճաս չի պատճառվում¹¹։

Այլ հեղինակներ, հակառակ նշված տեսակների, վճաս ասելով հասկանում են ոչ միայն գույքի փչացումը, ոչնչացումը, վճասվելը, այլև իրավախախտման ցանկացած բացասական սոցիալական հետևանքը։ Եվ դրանից հետևություն են անում, որ պարտավորության չկատարման հետևանքով պատճառված վճասը դրամական կամ այլ կորուստների ձևով արտահայտված գույքային շահերի խախտվա-

ծությունը է¹²։ Այս տեսակետը նույնպես չի կարելի ծիչտ համարել, քանի որ կորուստներ կարող են առաջանալ ոչ միայն գույքային շահերի, այլև անձնական ոչ գույքային իրավունքների խախտման դեպքում, և չի կարելի ընդհանուր կիրառություն ունեցող պատասխանատվության այդ միջոցի հությունը սահմանափակել գույքային ոլորտն ընդգրկող խախտմաներով¹³։

Առավել ընդգրկուն նոտեցում է ցուցաբերուն Օ. Ս. Ինֆ�եմ՝ վճաս համարելով ոչ թե ցանկացած, այլ միայն այն բացառ առաջ ական հետևանքները, որոնք մեկ անձը կրում է մեկ ուրիշի ոչ իրավաչափ վարուածի հետևանքով¹⁴։ Սակայն այս բնորոշումը ևս չի բացահայտում բացասական հետևանքների բնույթը, չի ընդգրում դրանց կազմը տուժողի կորուստների հետ։

Յիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև Ե.Ա. Ֆլեյշիցի, Գ.Յ. Ղարախանյանի, Ա.Մ. Բելյակովայի կողմից տրված բնորոշումները՝ վճասը կարելի է սահմանել որպես անբարենապատ բացասական հետևանք, որը վրա է հասում օրենքով պահպանվող գույքային իրավունքի կամ ոչ նյութական բարիքի խախտման դեպքում¹⁵։ Կարելի է եզրակացնել, որ «վճաս» ասելով՝ պետք է ենթադրել իրավախախտման այնպիսի հետևանքներ, որոնց արդյունքում վճասվում է քաղաքացու կյանքը կամ առողջությունը, ինչպես նաև առաջանում են այլ բացասական հետևանքներ։

Վճասը լինում է գույքային և ոչ գույքային։ Այն վճասը, որը կարող է գնահատվել դրամական ձևով, գույքայինն է։ Գույքային վճասը կարող է արտահայտվել քաղաքացու առկա գույքը ոչնչացնելու, վճասելու

¹¹ Տե՛ս. Նովիցկի Ի.Բ., Լոնց Լ.Ա. Общее учение об обязательстве. М., 1950, էջ 365:

¹² Տե՛ս. Մալேին Հ.С., Имущество и ответственность в хозяйственных отношениях. М., 1968, էջ 91:

¹³ Տե՛ս. Բարսեղյան Տ.Կ., Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական իիմնահարցերը, Եր. 2006թ., էջ 147:

¹⁴ Տե՛ս. Իօֆֆե Օ. Ը., Обязательственное право. М., 1975, էջ 100:

¹⁵ Տե՛ս. Փլեյշից Ե.Ա. Обязательство из причинения вреда и из неосновательного обращения, 1951, էջ 20, ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երրորդ մաս, դասագիրք բուհերի համար, 2-րդ հրատարակություն, հեղինակային խումբ, Երևան, 2009թ., էջ 14, Բելյակովա Ա. Մ. Իмущество и ответственность за причинение вреда, М., 1979, էջ 7:

(իրական վնաս. քաղ. օր.-ի 17հ), եկամուտից գրկվելու (բաց թողնված օգուտ. քաղ. օր.-ի 17հ), չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելու՝ ներառյալ դեղեր գնելու, բուժվելու, լրացուցիչ սննդի, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, հատուկ տրանսպորտային միջոցներ ծեր բերելու և այլնի հետ կապված ծախսերը, կերակրողին կորցնելու դեպքում առաջացած թաղման ծախսերը¹⁶, որոնք ենթակա են փոխհատուցման:

«...Քաղաքացու առողջությանը պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման առաջին պայմանը վնասի առկայությունն է...»

Անհրաժեշտ է նշել, որ եթե վնասը պատճառվել է գույքին, ապա նման դեպքում բավականին հեշտ է վնասի չափի որոշման մեխանիզմը. սա բացարկում է նրանով, որ գույքը ունի կոնկրետ արժեք, սակայն եթե խոսքը վերաբերում է քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասին, ապա չի կարող կիրարվել վերը նշված քաղաքացիական պատասխանատվության ձևը, քանի որ ինչպես քաղաքացիների կյանքը, այնպես էլ առողջությունը անգահատելի արժեքներ են, որոնք վերականգնել հնարավոր չեն, բացառությանը այն դեպքերի, եթե առողջությունը վերականգնվում է բժշկական միջամտությամ շնորհիվ: Առողջության վնասման դեպքում անհրաժեշտություն է առաջանում պարզելու վնասի չափը, առողջության քայլայնան աստիճանը և այլն: Այնուամենայ-

նիվ, քաղաքացու առողջության վնասումը կարող է հանգեցնել նաև գույքային հետևանքների՝ աշխատունակության կորստի պատճառով աշխատավարձի նվազում կամ կորուստ, առողջության քայլայնան հետևանքով բժշկական ծախսերի: Քաղաքացու առողջությանը պատճառված վնասի տեսակներն են՝ վնասվածքը (առողջության քայլայն), մասնագիտական հիվանդությունը(աշխատունակության նվազում կամ կորուստ), առողջության քայլայնան այլ ձևերը¹⁷:

Նախ անհրաժեշտ է նշել, որ առողջության քայլայնը լինում է երկու տեսակ՝ մշտական և ժամանակավոր

Ինչ վերաբերում է աշխատունակությանը, ապա պետք է նշել, որ աշխատունակությունը աշխատանքային գործունեություն կատարելու ունակությունն է¹⁸: Կախված աշխատանքի

բնույթից, որը կատարում է քաղաքացին, տարբերակվում է աշխատունակության երեք ձև՝ ընդհանուր՝ այսինքն ունակություն կատարելու որևէ աշխատանք սովորական պայմաններում, մասնագիտական՝ ունակություն կատարելու աշխատանք կոնկրետ մասնագիտությամբ, հատուկ՝ ունակություն կատարելու աշխատանք կոնկրետ կլիմայական կամ արտադրական պայմաններում (ստորգետնյա կամ բարձր լեռնային պայմաններու կատարվող աշխատանք և այլն)¹⁹:

Աշխատունակության կորստի աստիճանի չափը, բնականաբար, որոշվում է բժշկական իմնարկի կողմից նշանակված դատարժական փորձաքննությամբ:

Ա. Ս. Խվոստովը իր աշխատությունում սահմանում է, որ մասնագիտական աշ-

¹⁶ Տե՛ս. ՀՀ Քաղ. օր. հիովաներ 1078, 1079, 1080, 1081, 1082, 1083, 1084, 1087:

¹⁷ Տե՛ս. Բերմեզյան Գ. Յ, Արտապայմանագրային պարտավորություններ, Երևան, 2009թ. Էջեր 198-199:

¹⁸ Տե՛ս. Большой юридический словарь. Под ред. д-ра юрид. наук, профессора А.Я. Сухарева. М., 2008, էջ 775:

¹⁹ Տե՛ս. նույն տեղում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

իաստունակություն ասելով պետք է հասկանալ իր մասնագիտությամբ, արհեստով աշխատանքի ունակությունը, որը սահմանվում է նեղ իմաստով: Ընդհանուր աշխատունակություն ասելով պետք է հասկանալ կատարվող աշխատանքի ունակությունը, որը ոչ մի որակավորում չի պահանջում²⁰:

Առօղջությանը վնաս հասցնելու դեպքում տուժողը կարող է մասամբ կամ ամբողջությամբ զրկվել աշխատունակությունից, որն էլ կը մշտական կամ ժամանակավոր բնույթ՝ կախված առողջությանը պատճառված վնասի աստիճանից:

Եթե վնասը չի կարող գնահատվել դրամական ծևով, ապա այն ոչ գույքային է: Վերջինս էլ վրա է հասնում, եթե խախտվում են քաղաքացու ոչ գույքային իրավունքները՝ ցավ և տառապանք, հարմարավետության կորուստ, ակնկալիքների կորուստ կամ այլանդակում²¹, այսինքն պատճառվում է բարոյական վնաս: Պրոֆեսոր Դ. Ռոշերսը ոչ նյութական կորուստները սահմանում է որպես՝ «Կորուստներ, որոնք վնաս չեն պատճառում անձի ակտիվներին, հարստությանը կամ եկամուտներին, և որոնք, հետևաբար, անհնար է ֆինանսապես օբյեկտիվորեն հաշվարկել՝ վկայակրչելով շուկան»²²:

Ավելորդ չի լինի նշել, որ ներկայումս աշխարհի շատ երկրներում տարածված է բարոյական վնասի հատուցման ինստիտուտը և անդրադառնալով Հայաստանի Հանրապետությանը պետք նշել, որ ՀՀ Քաղ. Օր.ով նախատեսված է միայն բարոյական հատուցում պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին վնաս պատճառելու դեպքում: Ասվածը վերաբերում է ՀՀ Քաղ. Օր.-ի 19-րդ հոդվածին, որով սահմանվում է, որ անձի պատիվը, արժանապատվությունը, գոր-

ծարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրապարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերուն ու կարգով: Իսկ ահա «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ ՀՀ Քաղ. Օր.-ի 1087.1 հոդվածն ավելի մանրամասն կարգավորման է ենթարկել Քաղ. Օր.-ի 19-րդ հոդվածի բովանդակության պահանջը: Ուսումնասիրելով վերը նշված հոդվածի բովանդակությունը գալիք ենք եղորակացության, որ օրենսդրության առանձնահատուկ ուշադրության է արժանացրել քաղաքացու պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցմանը, սահմանելով պայման, եթե դա կատարվել է վիրավորանքի կամ զրապարտության միջոցով: Փաստորեն, վերոգրյալից հանգում ենք այն հետևողությանը, որ այլ արտապայմանագրային պարտավորություններից առաջացած բարոյական վնասները ենթակա չեն հատուցման, օրինակ եթե հետաքննության, նախաքննության նարմինների, դատախացության և դատարանի ապօիկինի գործողություններով քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս: Ուստի հաշվի առնելով նման հետևողությունը, կարծում ենք, որ ՀՀ Քաղ. Օր.-ում անհրաժեշտ է բարոյական վնասի հատուցման ինստիտուտի ներդրումը: Բացի այդ պետք է նշել, որ ՀՀ Քաղ. Օր.-ի 1087.1 հոդվածով, ըստ էության, օրենսդրությունը, չնայած այդպես չի անվանվում, սահմանում է բարոյական հատուցում, այնինչ չի սահմանում բարոյական վնասի հատուցման հասկացությունը:

²⁰ Տե՛ս. A.M. Խվոստով. Վозмещение вреда, причиненного здоровью. Минск "Беларусь", 1981 էջեր 34-36:

²¹ Տե՛ս. Cees Van Dam, European Tort Law:- Oxford University Press, 2006, էջեր 322-323:

²² Տե՛ս. S.D. Lindenbergh en P.M. van Kippersluis, Non pecuniary losses, 2009, էջ 246:

²³ Ծանոթություն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է բարոյական վնասի հատուցում, այնինչ չի սահմանում դրա հասկացությունը և հատուցման մեխանիզմները:

ՀԱՆՐԱՅԻՆ՝ ՏԱԽԱՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միքայել ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ

Ցողիկ ԱԶԻՋՅԱՆ

պատմաբան

Հնդեվրոպական հնագույն ժողովորդ համարվող հայերի հիշողությունից ջնջվել է դիցաբանական ժամանակաշրջանի վաղընջական պատկերացումներն ու պատումները: Մեզ հասած չնչին փշրանք-նշխարհները բավարար չեն այդ ավանդապաշտ դարաշրջանի ողջ նկարագրի մասին ավարտուն պատկերացում կազմելու համար, իսկ դրանց վերլուծությունը թույլ է տալիս տուկ ենթադրություններ անել հայ ժողովորդի առասպեկտական վիպաշխարհի և կենսաշխարհի մասին:

Հեթանոսական աշխարհում կարևոր սոցիալական դաս էր քրմությունը, որը, համախմբված լինելով տաճարների շորջ, կազմում էր, այսպես կոչված, քրմական կորպորացիա և հսկայական դեր կատարում երկրի հասարակական, հոգևոր, գիտական, ... մի խորով ողջ մշակութային և տնտեսական կանոքում: Տաճարների կալվածային բոլոր տիրուցներն ու հարստությունները, հետևապես և ողջ իշխանությունը, գտնվում էին քրմապեսի իրավասության տակ:

Դեռևս հին հայկական Արատուա պետությունում իշխանության գլուխ կանգնած էր քրմապետ-արքան, որին, ըստ հավատքի, նշանակում էր «տիեզերքի տիրութի» համարվող մայր դիցուհին¹: Այդպես էլ Արարատյան թագավորության (Ուրարտուի) և հետագա հայկական թագավորությունների գործեր բոլոր արքաները միաժամանակ համարվել են գերազույն քուրմ, որպես Արքի՝ գերազույն աստծոն միակ փոխանորդ երկրի վրա (Արամե, Անուշավան Սոսանվեր): Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցությունը հայոց պատմության հետագա դարերում ունեցել է հետաքրքիր գարգացում: Քանի որ տաճարային սեփականության և արքայական

սեփականության առանձնացման պատմությունը շաղկապված է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բաժանման պատմության առանցքին, ուստի անհրաժեշտ է հակիրծ անդրադարձանալ այդ իշխանությունների տարանջատման պատմությանը:

Պատմության որոշակի ժամանակահատվածում տեղի է ունենում քրմապետարքայի պաշտոնի բաժանումը արքայի և քրմապետի: Այս փուլում, թեև քրմական «իշխանության» գլխում կանգնած էր քրմապետը, սակայն թագավորից հետո երկրորդ՝ քրմապետի պաշտոնը, որպես կանոն, վստահվում էր միայն թագավորի եղբորը կամ թագավորի մի այլ մերձավորի,

¹ Տե՛ս. Kramer S.N. Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, էջ 19-21, Cohen S. Enmerkar and the Lord of Aratta, Ann Arbor, 1973, էջ 123 // Մովսիսյան Ա. Հայաստանը Քրիստոնության առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների) - Եր., 2005, էջ 92:

այսինքն՝ սկզբնական շրջանում արքայական ընտանիքը քրմապետի պաշտոնը պահում էր իր ծեռքում: Այսպես, Երվանդ Դիօքլոս քրմապետը նրա եղբայր Երվազն էր, իսկ Արտաշես Ա-ն քրմապետ դարձեց իր որդի Մաժամին՝ «կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ»²: Ավելի ուշ շրջանում քրմապետի պաշտոնը տրվում է քրմապետական տոհմին (Վահանումիներ): **Տիգրան Մեծի ժամանակից սկսած հայ թագավորները կրում են «արքայից արքա» տիտղոսը և մեծարվում որպես «աստված»՝ Կը կի աստծո որդի:** Սրանով արքայի իշխանությունը գերակայվեց՝ ուժեղացնելով կենտրոնական իշխանությունը, որը տարածվեց նաև տաճարային սեփականության նկատմամբ: Պրոֆեսոր Ստ. Լիսիցյանը իր «Տիգրան Մեծն ըստ դրամների» աշխատության մեջ ապացուցում է, որ Տիգրան Մեծը միաժամանակ և քրմապետ էր. «Տիգրան Մեծի խույրը և նրա վրայի բոլոր պատկերումները մեզ համոզում են, որ նա քուրմ է եղել...»³: Սակայն սա քրմական և թագավորական իշխանությունների նույնականացման վերջին դեպքն էր: Թագավորական կենտրոնական իշխանության թուլացմանը, ֆեռդալների իշխանության առաջացման ու ուժեղացման հետ, հոգևոր՝ քրմական իշխանությունը սկսեց հանդես գալ որպես հզոր քեոնդալ: Այսպիսով, պատմական զարգացման արդյունքում տաճարային սեփականությունը առանձնանալով արքայականից, սկսում է ծեռք բերել ինքնուրույն բնույթ, իսկ արքայական ընտանիքը՝ աստվածայնություն: Տեղի ունեցավ հանրային միասնական սեփականության ծյուղավորում և տրոհում:

Լինելով արքայի առաջին խորհրդատու, քրմապետը դեկավարում էր հեթանոսական պաշտամունքը, հետևում էր կրոնածիսական կարգերը: Կադ շրջանում քրմապետը ուներ անսահմանափակ իշխանություն և ենթարկվում էր միայն արքային: Մնացած քրմերին, ովքեր ենթակա էին քրմապետին, ընտրում կամ կարգում էին

որոշակի ժամանակով, իսկ քրմական ժամանգական (ցմահ) պաշտոնները բացառություններ էին⁴:

Յին Յայաստանում գործել է աստվածային իրավունքը և սովորության իրավունքը: Աստվածային իրավունքը մեկնաբանությունը իրականացնվում էր քրմերի կողմից: Յեթանոսական դարաշրջանում, եթից յուս հսկում-ի և յուս ձիստ-ի, իրավական և կրոնական նորմերի միջև տարբերակում չկար, արդարադատությունն իրականացվում էր արևի աստծո տաճարների քրմերի կողմից:

Տաճարները համարվում էին աստծոն կացարանը, նրա սեփականությունը, որի սպասարկումը վերապահվում էր քրմերին: Քրմերը, ըստ իհն հայ հեթանոսական հավատքի, ճանաչվում էին որպես աստվածների սպասավորներ երկու վրա՝ ի տարբերություն իրեշտակների, որոնք աստվածների սպասավորներ էին երկնքում: Այդ իսկ պատճառով տաճարային սեփականությունը աստվածային էր՝ սուրբ և անձեռնմխելի: Դարերի հոլովույթում սեփականության ձևերի հավասարության սկզբունքի հաստատմամբ, որի արդյունքում սեփականության իրավունքը վերածվեց բացարձակ, անօտարելի իրավունքի և գոյատևեց որպես այդպիսին մինչև պոգիտիվիստների՝ սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգի ծնունդն ու այդ հայեցակարգի առաջին ամրագրումը իրավական ակտերում:

Բնականաբար, տաճարային սեփականությունը աստվածների սեփականություն համարելը իրավական ֆիկցիա էր: **Տաճարային սեփականության կառավարման իրավունքը գտնվում էր քրմական դասի ձեռքում, որը դեկավարում էր քրմապետը:**

² Տե՛ս. Կրկյաշարյան Ա.Ա. Յին Յայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Եր., 2005, էջ130,

³ Տե՛ս. Մելիք-Փաշայան Կ.Վ. Անահիտ դիցուիու պաշտամունքը, Երևան, 1969թ., էջ 120,

⁴ Տե՛ս. Արծրունի Գ. Դիցարան հայոց: Յանրագիտական բառարան, Եր., 2003, էջ 220,

⁵ Տե՛ս. Ըստասան Ա. Գ. Իստորիա Կիլիկիյան արքայության և իր ժամանակակից պատմության (XI-XIV ամ.) (Երևան, 1969), 301,

ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հեթանոսական Հայաստանում տաճարային կենտրոնները խոշոր մշակութային կենտրոններ էին, որտեղ գիտաքրմական կաստան իր ծեռքում էր կենտրոնացրել գիոյք, գրականությունը, դպրոցն ու կրթությունը, քաղաքացիական ակտերի (ծնունդ, ամուսնություն, ընտանիք և ընտանեկան հարաբերություններ) կարգավորումն ու տնօրինումը, իրավական նորմերի սահմանումը, բժշկությունը, գուշակությունն ու աստվածների առջև բարեփոխությունը, մինչև անգամ դատական իրավասությունը, ... մի խոսքով՝ ողջ հոգևոր կյանքը: Ավելին, Դին Հայաստանում, ինչպես և Յին Արևելքի երկներում, զարգացման բարձր մակարդակի վրա գտնվող մի շարք փորձարարական և տեսական գիտելիքներ, ստանալով կրոնական գաղղնիության տեսք, դառնում էին քրմերի և դրանց դասային բացարձիկ սեփականությունը⁶:

Տաճարային կենտրոնները իրենց արտաքին տեսքով, արենստագործական ու առևտրական նշանակությամբ նմանվում էին քաղաքներին: Հայաստանում գոյություն են ունեցել նման տաճարային քաղաքներ: Զարգացման որոշ շրջանում այդպիսի քաղաքներ են Եղել Հայաստանի Երեմնի մայրաքաղաք Արմավիրը, Բագարանը, Դարանաշյաց Անին (Անի - Կամախ) և շատ այլ քաղաքներ: Այսպես, Անահիտ դիցուհու անունով Եկեղեցաց գավառը կոչվել է Անահիտական: Այդ փաստը նշում են թե՝ անտիկ և թե՝ հայ պատմիչները: Վերջիններիս մոտ բացի Անահիտի տաճարից տեղեկություններ են պահպանվել մի շարք այլ տաճարների մասին: Դրանք են Արամագդի տաճարը, Նանեի տաճարը և այլն⁷:

Մեհյանները նաև կրոնապաշտամունքային և տնտեսական կենտրոններ էին, ուր կենտրոնացված էր մեծ քանակությամբ գանձեր ու դաստակերտեր: Այս կրոնական

հաստատությունները ունեին մեծամեծ հողային տիրույթներ, անշարժ ու շարժական գույք, ոսկեղեն ու արժաթեղեն՝ ծեռքերման զանազան եղանակներով: Տաճարները նվիրատվություն էին ստանում ամենքից՝ հասարակ շինականից, ռամիկից սկսած մինչև մեծամեծերն, և մինչև անգամ արքայից արքաները:

Դին Հայաստանում սեփականության իրավունքի յուրահատուկ օբյեկտ էր հողը: Դայ պատմագրության մեջ պատասխական շրջանի Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունների և կացութաձևների վերաբերյալ միասնական կարծիք չկա⁸: Ավատատիրական Հայաստանում թագավորը հանդես էր գալիս միմիայն որպես տնօրին՝ պետության ներկայացուցիչ⁹: Դողը առաջին հերթին պատկանում էր իշխաններին, թագավորի հարազատներին, մեծատոհմիկ և այլ ժառանգական պավագանում, այնուհետև՝ կոլեկտիվ հողատերերին, քաղաքներին, առանձին քաղաքացիներին, ինչպես նաև քրմերին ու տաճարներին: Անշուշտ, այս բոլորի սեփականատիրական իրավունքները հավասար չափով չեն իրականացվում: Ժողովրդական հարստության գլխավոր աղբյուրը հողն էր¹⁰, իսկ հոգևոր՝ քրմական դասը հողի սեփականության իրավունքի, և առհասարակ սեփականության իրավունքի խոշորագույն սուբյեկտներից էր: Բնականաբար, այս սեփականության ձևը կրում էր հանրային բնույթ, ասել է թե՝ հանրային սեփականություն էր:

Ինչպես անահիտական տաճարները, այնպես էլ մյուս բոլոր աստվածներին նվիրված տաճարները ունեցել են հողային լայնարձակ տարածություններ: Դրանք պահպանվել են ընդհուած մինչև քրիստոնեության հաստատումը Հայաստանում, որից հետո ամբողջությամբ անցել են քրիստո-

⁶ Հայունի է նաև, որ գոյություն են ունեցել մեհենական խոշոր արխիվներ: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ ասորի միապետ Բարդածան, օգտվելով Դարանդայաց գավառի Անիի մեհենական արխիվից, հայերենից բարգամել է ինչ-որ հայկական պատմական աշխատություն, որը հետագայում ասորերենից բարգամել է հունարեն // Աբրահամյան Ա. Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Եր.: Հայաստան, 1982, էջ 94-97,

⁷ Տե՛ս. Դայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ.1, Եր., 1971թ., էջ 663,

⁸ Տե՛ս. Գույումջյան Տ.Կ. Դողի սեփականության իրավունքի զարգացման պատմությունը Հայաստանում, իր. գիտ. թեկն. աստենախոս., Երևան, 1999, էջ 12,

⁹ Տե՛ս. Դայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Յ. 1, Եր., 1971, էջ 641,

¹⁰ Տե՛ս. Լեռ Երկերի ժողովածու հատոր Ա, էջ 73,

Անական եկեղեցուն: Այդ մասին է վկայում Ազգաբանգեղոսը, որը նկարագրելով հեթանոսական տաճարների կործանումը, հիշատակում է, որ Օքանց «դաստակերտները, սպասավորներին... հողերով ու սահմաններով հանդերձ նվիրեցին եկեղեցու սպասավորության ծառայությանը»¹¹ կամ «ամբողջ գյուղը դաստակերտներով և սահմաններով հանդերձ նվիրեցին եկեղեցուն»¹²: Տաճարային այդ հողերը (քացի տաճարային ստրուկներից, որոնք աշխատում էին դաստակերտ-ազգարակներում և ունեին հողի վրա նստած ստրուկների կարգավիճակ) մշակվում էին նաև տաճարից կիսակախյալ վիճակում գտնվող գյուղացիների կողմից:

Փոքր Ասիայում, ինչպես Արևելքի մյուս երկրներում, տաճարներն ունեին հողային ընդարձակ տիրույթներ: Խոսելով Կապապադովկիայի Կոմանա քաղաքում գտնվող Մա դիցուիու տաճարի մասին՝ Ստրաբոնը գրում է, որ տաճարին կից կա մեծ հողանաս, որի եկամուտները ստանում է քուրոնը: Այնուհետև հույն աշխարհագրագետը մատնանշում է, որ Վենասյան Զևսի տաճարին առջնթեր Մորիմենա քաղաքում կա «քարեթեր սրբազն հողանաս, որը քրիմին տալիս է տարեկան 15 տաղանդի եկամուտ»¹³:

Խորենացին պատմում է, թե Երվանդ Վերջինի դեմ Արտաշեսի տարած հաղթանակից և թագավորի եղբոր՝ քրմապետ Երվազի սպանությունից հետո, Սմբատ Բագրատունին, «աւար առեալ զգանձսն Երուազայ, և ծառայս անձինս հինգ հարևած, նաև զընտիր գանձուցն մեհենից, բերէ Արտաշիսի: Եւ Արտաշէս պարզէւ Սմբատայ զժառայսն Երուազայ»¹⁴: Սա, ոչ թե շահագործվող ծառաների, հողագործների ազատարումն էր շահագործումից, այլ, պարզապես, մի տիրոջ գերիշխանությունից մյուսի գերիշխանության տակ անցնելը. Շախսինում քրմապետին պատկանող տաճարական հողերի վրա աշխատողներն այժմ արդեն տարվում են աշխատելու սպարապետ

Սմբատին շնորհված հողերի վրա: «Յայն ժամ - գրում է պատմահայրը, - Սմբատայ զժառայսն Երուազայ, զոր գերեացն ի բագարանէ, տարեալ բնակեցուցան ի թիկնաց Մասեաց, ի ոյզ անուն Բագարան կոչելով զծեռակերտն»¹⁵:

Խորենացու վերոհիշյալ վկայությունից հետևում է, որ Յայաստանում տաճարներին պատկանող ընդարձակ հողերի վրա ապրելիս և աշխատելիս են եղել ոչ թե ազատ մարդիկ, այլ ծառաներ, որոնց, որպես սեփականություն, տերը կարող էր տեղափոխել և բնակեցնել այս կամ այն վայրը: Նմանօրինակ դրություն էր նաև Յայաստանի հարևած երկրներում: Ստրաբոնը խոսելով Զելե քաղաքի մասին, որը գտնվում էր իր ծննդավայր Անասիա քաղաքի մոտ, նշում է, թե այստեղ կառուցվել է Անահիտ դիցուիու տաճարը, որին մեծարում են նաև հայերը, որ տաճարային ծառաների թիվը և քրմերի վայելած հարգանքն ու պատիվը թագավորի կողմից նույնափիսին էր, ինչպիսին ինքը նկարագրել է հայերի մոտ Անահիտի պաշտամունքի մասին խոսելիս: Այնուհետև հույն մատենագիրը ավելացնում է, որ պարսից արքաները «հնում Զելեն համարում էին ոչ թե քաղաք, այլ պարսկական աստվածների սրբավայր: Քուրմն ամեն ինչի տերն էր: Այն բնակեցված քաղաքիվ տաճարային ծառաներով և քուրմը շատ հարուստ էր: Սրբավայրի շրջապատում կար ոչ քիչ սրբազն հող, որը պատկանում էր քրիմին»¹⁶: Նույն էր իրավիճակը նաև Յայկական Լեռնաշխարհից հյուսիս-արևելք ընկած երկրներում: Խոսելով Աղվանքում բնակվող ցեղերի մասին՝ Ստրաբոնը դարձյալ գրում է. «Նրանք իբրև աստվածների պաշտում են Արևը, Զևսին և Լուսինը: Մրա տաճարը գտնվում է Իբերիայից ոչ հեռու: Քրմական պարտականությունները կատարում է ամենահեղինակավոր անձը թագավորից հետո: Նա կանգնած է սրբազն հողի գլուխ, որն ընդարձակ է և լավ բնակեցված, ինչպես նաև գլխավորում է տաճարային ծառաներին»:

¹¹ Տե՛ս. Ազգաբանգեղոս Պատմություն հայոց, Երևան, 1977թ., էջ 121,

¹² Տե՛ս. Ազգաբանգեղոս, նշվ. աշխ., էջ 122,

¹³ Տե՛ս. Կրկաշարյան Ս.Ս. նշվ. աշխ., էջ 135,

¹⁴ Նույն տեղում, էջ 134,

¹⁵ Նույն տեղում,

¹⁶ Նույն տեղում, էջ 136

ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Իրերիայի բնակչության չորս դասի բաժանված լինելու մասին Ստրաբոնի հայտնի հաղորդումից պարզվում է, որ իրերիայում և քրնական դասը իրոք խոշոր դեր է ունեցել երկրի քաղաքական կյանքում¹⁷:

Ավատատիրական Հայաստանում սեփականությունը կարող էր լինել անմիջական և միջնորդավորված: Տաճարային քրմերը համեմ էին գալիս որպես անմիջական, մասամբ էլ որպես գերազույն հողատերեր: Յոդի անմիջական տերեր և օգտագործողներ կարող էին համեմ գալ նաև տարբեր անձիք ու համայնքներ: Այսպես, Տարոնի Վահունի քրնական տոհմին պատկանում էր 6 գյուղ, 12298 տուն, 7847 գինվոր և Հաշտեանք գավառը¹⁸: Քրնական դասին պատկանող սեփականությունն իր հերթին առանձնանում էր ընդհանուր սեփականության և քրնական մասնավոր սեփականության: Սեփականության այս երկու ձևերի ժագման աղբյուրները նույն էին և ըստ էնթրյան պաշտպանվում էին հավասարապես: Մյուս կողմից քրնական մասնավոր սեփականությունը անմիջականութեն կախված և պայմանավորված էր ընդհանուր քրնական հանրային (տաճարային) սեփականությամբ: Այլ կերպ ասած՝ մասնավոր քրնական սեփականությունը դիտարկվում էր ածանցյալ հանրային քրնական սեփականությունից:

Ավատատիրական ժամանակահատվածին վերաբերող գրականության վելյուծությունը բերում է այն եզրահանգման, որ պատմության այս ժամանակահատվածում առանձնացվել է հոգևոր սեփականության երկու ձև՝ ընդհանուր (տաճարային) և անհատական (քրնական): Ընդ որում, անհատական սեփականությունը ածանցյալ էր տաճարային սեփականությունից, իսկ տաճարային սեփականությունը պատկանում էր կրոնական՝ քրնական իշխանությանն իր առանձին «աշխատակազմով»:

Տաճարային և քրնական սեփականությունը հիմնականում գոյանում էր ինչպես տրամադրված, նվիրաբերված հողերից, այնպես էլ մեհյանների եկամուտներից: Ավելի մանրամասն տեղեկություն հաղոր-

դում է Լեռն՝ նշելով, որ տաճարը կատարում էր հատուկ ծեսեր, ստանում էր դատվողի ազգականներից տուրքեր և կամավոր նվերներ¹⁹: Այսպիսով, հանրային՝ տաճարային սեփականության իրավունքի ծագման հիմնական հիմքերն էին նվիրատվությունները (այդ թվում՝ թագավորների և իշխանների կողմից), տաճարական ունեցվածքի շրջանառությունից ստացված եկամուտները, պատերազմական ավարներից և գերիններից ստացած խոշոր բաժինները, արդարադատությունից ստացված ծախսները (հարկեր, տուրքեր):

Եղել են արդո՞ք դեպքեր, որ քրնական դասը չընդունի այս կամ այն բարձրաստիճան խավի ներկայացուցչի տաճարներին նվիրաբերած ընծաները: Հայտնի չէ: Սակայն այս ինստիտուտը հավանաբար զուգակցվել է նվիրատվության հետ՝ դիտարկելով որպես քրնությանը, հետևաբար և աստվածներին ոչ հաճելի լինելու ժեստ:

Արտաշես Ա թագավորի գահակալման տարիներին զգալի չափով ընդարձակվում և զարգանում են պետական մասնավոր, դաստակերտային, ազարակային, այդ թվում և տաճարային տնտեսությունները: Յոդային նվիրատվություններ կարող էին անել նրանք, ով սեփականատերն էր այդ հողերի և իրավունք ուներ ազատորեն, ըստ իր հայեցողության, տնօրինել դրանք. իսկ այդպիսի անձնավորություն Հայաստանում, ինչպես նաև Արևելքի մյուս երկրներում, ամենից առաջ հանդիսանում էր ինքը՝ թագավորը: Դու պատճառով էլ տաճարներին, ինչպես նաև առանձին մարդկանց հոդային նվիրատվություններ անուն էին գլխավորապես թագավորները²⁰:

Ընդունված է համարել, որ Ք.ա. 9-6-րդ դարերում հարևան երկրների նման Հայաստանը ևս կաղ ստրկատիրական պետություն էր: Այն ժամանակ, երբ ստրկատիրությունը գերազանցապես զարգացած էր պետության կենտրոնական շրջաններում՝ Վանա լճի ավազանում և Արարատյան դաշտում, ծայրամասերում հասարակությունը դեռևս գտնվում էր տոհմատիրության քայլայնան և սոցիալական շերտա-

¹⁷ Նույն տեղում, էջ 136,

¹⁸ Տե՛ս. ՄԵԼԻՔ-ՓԱՂԱՅԱՆ Կ. Վ. Աշվ. աշխ., էջ 122,

¹⁹ Տե՛ս. Լեռ Երկերի ժողովածու, Առաջին հատոր, Եր., 1966, էջ 70,

²⁰ Տե՛ս. ՄԵԼԻՔ-ՓԱՂԱՅԱՆ Կ. Վ. Աշվ. աշխ., էջ 122,

Վորման անցման շրջանում: Այս էր պատճառը, որ Երկրի տնտեսությունը զարգանում էր անհամաշափորեն²¹:

Յին Յայաստանում ստրկության գոյության հարցը բավականին լուրջ գիտական վեճերի հիմք է հանդիսանում: Ներկայիս պատմական գիտությունն այս վեճի առթիվ վերջնական վճիռ չի կայացրել: Բոլոր դեպքերում տիրապետող է այն կարծիքը, որ Եթե Յայաստանում ստրկություն եղել է, ապա, համենայն դեպք, ոչ դասական ստրկատիրության տեսքով: Ըստ պրոֆ. Խ. Սամվելյանի՝ հայ պատմագետները, կուրորեն հետևելով մեր հին պատմագիրների ավանդին, որոնք այդ ինստիտուտի գոյության մասին պարզորոշ ոչինչ չեն ասում, անտեսել են ստրկության հարցը: Եվ Եթե հին հայ պատմությունը համար լռությանը է անցել այդ հարցի վրայով, այդ դեռ չի նշանակում, որ ստրկությունը բնավ չի գոյացել Յայաստանում²²:

Եղած տվյալների համաձայն՝ Շուրբիա Երկրում²³ ստրկությունը գոյություն ունեցել է: Ի տարբերություն Ասորեստանի՝ Շուրբիան լինելով փոքր Երկիր, զավթողական ճանապարհներով՝ պատերազմների և արշավների միջոցով ստրուկներ ծեռք բերելու հնարավորություն չուներ: Ավելին՝ Ասորեստանից փախած ստրուկները և ասորիները ապաստան էին գտնում հենց Շուրբիայում: Յետևաբար, այս Երկրում ստրկությունը կրում էր նահապետական բնույթը: Մինչեւ Ուրարտուում, ըստ Մելիքիշվիլու, գերի-ստրուկները, նման Ասորեստանի ստրուկների, գրկված էին մաս-

նավոր սեփականությունից²⁴: Նահապետական ստրկության պատմական շրջանից հետո ստրկությունը իր գոյությունը շարունակեց ֆեռդալական Յայաստանում՝ ստանալով առանձնահատուկ բնույթ: Եվ քանի որ հին Յայաստանում արտադրության ծեր կրում էր ֆեռդալական բնույթ, այդ շրջանում (բացառությամբ Տիգրան Մեծի շրջանի) Յայաստանը զավթողական արշավանքներում և պատերազմներում առհասարակ աչքի չէր ընկնում, ավելին՝ պայքարում էր հարևանների դեմ անկախ և կենտրոնացված պետություն ունենալու համար, իսկ արևելքի և արևմուտքի հզոր տերությունների ախտանին համար այն քաղաքական հուսալի պապատան էր: Անշուշտ, նման պայմաններում ստրկությունն այն դերն ու նշանակությունը չուներ և չէր էլ կարող ունենալ, ինչ նահապետական (նախաֆեռդալական) շրջանում կամ պատմական Յայաստանի հարևաններ Պարթևականում ու Հոռոնում:

Գոյություն ունեին հատուկ տաճարային, մեհենական ստրուկներ, որոնք աշխատեցվում էին հոգևոր դասի ծեռքում կենտրոնացված տաճարային և քրմական տնային՝ մասնավոր տնտեսություններում²⁵: Ուրարտական պետության համար, ինչպես և Յին Արևելքի ռազմաստրկատիրական պետությունների համար խոշոր նշանակություն ունեցող պատերազմները մղվում էին ավար և ստրուկներ ծեռք բերելու նպատակով: Արգիշտի Ա-ն իր տասչորս արշավանքների ժամանակ Բիահինա է քշուն

²¹ Տե՛ս. **Մելիք-Բախչյան Ստ.** Տ. Յայոց պատմություն: Յնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը, Երևան, էջ 19:

²² Տե՛ս. **Սամուելյան Խ.** Յին Յայ իրավունքի պատմություն, թ. 1, 1939, էջ 273:

²³ Շուրբիա (շումերական աղբյուրներում Շուրուր, աքքաղական՝ Սուրբարտու, ասորական՝ Վաղ շրջանում հանդիպել է Շուրբարի անվամբ, իսկ ուշ շրջանում Շուրբիա) – Երկիր հին արևելքում (մ.թ.ա XI-VIIդդ.)՝ տեղակայված Վանա լճից հարավ-արևմուտք, Սասնա լեռնային տարածքում, Ասորեստանի և Ուրարտուի միջև: Առաջին անգամ հիշատակվել է Աշշուրերքալի (1076-1059) արծանագրության մեջ: Մենուսա արքայի օրոք Շուրբիա Երկիրը միացվեց Ուրարտուին: Շուրջ հարյուր տարի մնալով Ուրարտուի տիրապետության տակ՝ 714թ. Շ. Ուրարտուից անջատեց Սարգոն Բ-ն, որից հետո շուրջ 40 տարի այն մնաց անկախ: Այս Երկրի համար նովորդ պայքարը ավարտվեց նրանով, որ այն ընդգրկվեց պատմական Յայաստանի կազմում:

²⁴ Տե՛ս. **Մելիքաշվիլի Գ. Ա.** Նекоторые вопросы социально-экономической истории Нахири-Урарту. ВДИ, 1951, N 4. էջ 32,

²⁵ Տե՛ս. Յայ ժողովորդի պատմություն, Առաջին մաս, խմբ.՝ Բ.Ն. Առաքելյանի և Ա.Ռ. Յովհաննիսյանի, Եր., 1951, էջ 51:

ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ավելի քան երկու հարյուր հազար գերի, որոնց ծեռքով շենքեր և ամրոցներ էին կառուցվում, հանքեր մշակվում, ճանապարհներ ու ջրանցքներ անցկացվում: Ստրուկ-ներն աշխատում էին նաև երկրագործության ոլորտում, տնային տնտեսություններում ու հատկապես տաճարային տնտեսություններում: Ստրաբոնը տեղեկություններ է հայտնում, որ հայերը Անահիտ աստվածուհուն նվիրում էին բազմաթիվ կին և տղամարդ ստրուկներ, որոնցով լիքն էին մեհյանները, և դրոնք կրչվում էին տաճարական ստրուկներ: Բացի նրանցից, անահիտական մեհյաններին էին պատկանում շատ դաստակերտեր, գյուղեր, ավաններ, բազմաթիվ հողամասեր, անտառներ և այլը²⁶: Այսպիսով՝ Յայ Յայաստանում ստրուկները նաև հանրային սեփականության իրավունքի օրինակներ էին:

Յին աշխարհում տաճարային սեփականության իրավունքի և առհասարակ սեփականության իրավունքի յուրահատուկ օրինակ էին նաև կենդանիները, դրոնք, ըստ երևույթին, ունեին հատուկ կարգավիճակ, այլ ոչ թե իրի՝ ինչպես գործող օրենսդրությամբ: Եզան, ցուլի, կովի պաշտամունքը անահիտական բարդ համալիրի մի տարրն էր կազմում²⁷: Ինչպես հեռավոր, այնպես էլ մոտավոր անցյալում, հայ ժողովրդի հավատալիքների մեջ կարևոր տեղ են գրավել եզան հետ առնչվող կրոնական հա-

յացքները, քանզի երկրագործությանը զբաղվող բոլոր ժողովուրդների մեջ եզան և ցուլի պաշտամունքը գրավել է առանձնահատուկ տեղ: Յայ ազգի «Յուլյանիկ տուտեմը շուն չեր, այլ եզը հերկող, այլ չուրը երգող և ամպրոպածին փողը եղեգան...»²⁸: Կյունոնը իր «Պոնտական ուսումնասիրություն» աշխատության մեջ վկայում է, որ Երզնկա քաղաքի շրջակայքում, ինչպես Լուկուլլոսի ժամանակ, ազատ շրջում էին գոմեշների նախնիները, որոնք նվիրված էին Անահիտ դիցուհունը²⁹:

Տաճարային սեփականության տնօրինման առանձնահատկությունների մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Տաճարային հանրային սեփականությունը, համարվելով աստվածային սեփականություն, ուներ res publicum գույքի իրավական կարգավիճակ, հետևաբար՝ ենթակա չեր մասնավորեցման կամ օտարման: Մասնավոր քրմական սեփականության տնօրինման սահմանափակ ազատության մասին Ենթադրությունների է համգեցման Կիլիկյան Յայաստանի ժամանակահատվածում հոգևոր դասի անհատական սեփականության իրավական կարգավորման մասին նորմերը: Ըստ Կիլիկյան Յայաստանի գործող օրենսդրության Եկեղեցական-վաճառապատկան հողերը չեն կարող անցնել աշխարհիկ անձանց և հաստատությունների ծեռքը³⁰:

Այսպիսով, ի մի բերելով վերոգրյալը՝ կարելի է պնդել, որ.

- **տաճարային սեփականությունը ուներ հանրային սեփականության բնույթ,**
 - **մասնավոր քրմական սեփականությունը ածանցյալ էր հանրային՝ տաճարային սեփականությունից,**
 - **հանրային՝ տաճարային սեփականությունը տրոհվում էր Երկու ձևի՝ ընդհանուր (տաճարային) և անհատական (քրմական):**
 - **հանրային՝ տաճարային սեփականության իրավունքի օրինակի շրջանակը չափազանց լայն էր,**
 - **հանրային տաճարային սեփականությունը համարվում էր աստվածային՝ սուրբ և անձեռնմխելի սեփականություն:**

²⁶ Տե՛ս. Մելիք-Փաշայան Կ. Վ. Աշվ. աշխ., էջ 119:

²⁷ Տե՛ս. Մելիք-Փաշայան Կ. Վ. Աշվ. աշխ., էջ 102:

²⁸ Տե՛ս. Սևակ Պ. Անլոելի գանգակատուն // Երկերի ժողովածու, Յ. 4, (Պոեմներ), Եր., 1973, էջ 182:

²⁹ Տե՛ս. Մելիք-Փաշայան Կ. Վ. Աշվ. աշխ., էջ 100:

³⁰ Տե՛ս. Սուրիհասյան Ա.Գ. Կիլիկյանի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դդ.), Եր., 1978, էջ 272:

Պետական ինքնիշխանության ժամանակակից հայեցակարգի ԶՈԼՔ

Արթուր ԽԿԻԼԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

Պետական ինքնիշխանության հասկացության և բովանդակության վերաբերյալ իրավաքաղաքական մտքի պատմության մեջ արտահայտված բազմաթիվ տեսակետների, հայեցակարգերի և մոտեցումների բազմազանությունը ու բազմաթիվությունը հրատապ ու արդիական են դարձնում խնդրո հիմնահարցերի հետագոտությունը¹:

Ինքնիշխանությունը սոցիալական որևէ երևոյթի (գոյի) ինքնությունը, անկախությունը և գերակայությունն է: Սոցիալական իրականության մեջ, որպես կանոն, ինքնիշխանության հիմնական սուրյեկտներն են անձը, ժողովորդը (ազգը) և պետությունը, որոնցից յորպաքանչյուրն ունի իր բնորոշ առանձնահատկությունները:

Անձի ինքնիշխանությունը նրա կամքի ազատության և սոցիալական նորմերի սահմաններում ինքնուրույն ու անկախ վարքագիր դրսուրումն է: Անձի ինքնիշխանությունն անսահման ու բացարձակ չէ և չի էլ կարող լինել, որովհետև որպես սոցիալական ու քանական էակ՝ անձն ապրում է որոշակիորեն կանոնակարգված հասարակության մեջ, որտեղ պարտավոր է պահպանել ինչպես գրված, այնպես էլ չգրված սոցիալական նորմերը: Այսինքն անձն այնքանվ է ինքնիշխան, որքանով չի խախտում, ուրիշների ինքնիշխանությունը և սոցիալական նորմերը: Դեռևս հին հռոմեացի նշանավոր իրավաբան Ուլպիանոսն է ասել.

«Իրավունքի պահանջի եռթյունը հետևյալն է. ապրել ազնիվ, ոչ մեկին վնաս չհասցնել, յուրաքանչյուրին տալ իրեն հասանելիքը»²:

Ժողովորդի (ազգի) ինքնիշխանությունն ազգի օրգանական քաղաքական հատկությունն է, նրա անքաղաքան, անօտարենի և բնական հատկանիշը: Ժողովորդի ինքնիշխանությունը պայմանավորված է իր գոյության փաստով: Ժողովորդի ինքնիշխանության դրսուրման քաղաքական - իրավական ձևերը կարող են տարբեր լինել՝ անկախ պետականություն, ինքնավարության տարբեր աստիճաններ և այլն: Ժողովորդի ինքնիշխանության իրացման դասական եղանակը ինքնորոշման իրավունքն է, որը

¹ Տե՛ս. Doch K. Der Souveranetatsbegriff von Bodin bis zu Friedrich dem Grossen. Berlin. 1897; Mourenbrecher F. Die regierenden Fürsten und die Souveränität. Munich, 1839, Laski H. The Foundations of Sovereignty. L., 1931; Jouvenel B. Sovereignty. An Inquiry into Political Good. N. Y., 1957; Vyrynen R. Sovereignty, Globalization, and Transnational Social Movements. In: International Relations of the Asia-Pacific. 2001. N 4; Дорогин В. А. Суверенитет в советском государственном праве. М., 1948; Шевцов В. С. Суверенитет Советского государства. М., 1972; Манелис Б. Л. Проблема суверенитета и ее значение в современных условиях. Ташкент, 1964; Безуглов А. А. Суверенитет советского народа. М., 1975; Проблемы суверенитета в Российской Федерации. М., 1996, Марченко М. Н. Проблемы общей теории государства и права: учебник в 2-х томах. Том 1. Государство 2-е изд., перераб и доп. М., 2007, с. 453-466; Левин И. Д. Суверенитет. Санкт-Петербург. 2003; Пастухова Н. Б. Проблемы государственного суверенитета. М., 2006.

² Տե՛ս. Диگեստ Յուստինիան. Избранные фрагменты / в переводе и с примечаниями И. С. Петерского/. М., 1984, с. 25.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

յուրաքանչյուր ազգի անօտարելի և բնական իրավունքն է³: Ազգերի ինքնորոշման իրավունքը մարդու կոլեկտիվ հիմնարար իրավունքներից է, որի շնորհիվ ինքնորոշվող ազգը որոշում է իր ճակատագիրը: Ըստ այդ իրավունքի՝ «Յուրաքանչյուր ժողովուրդ (ազգ) իրավունք ունի ազատորեն տնօրինել իր ծակատագիրը ինքնորոշումներուն առաջարկել իր ազգային պատմության միջամտության լուծել իր ներքին զարգացման և կարուցվածքի բոլոր հարցերը, իր հայեցողությամբ ընտրել այլ ժողովուրդների և պետությունների հետ հարաբերվելու ցանկացած ձևը»⁴: Ժամանակակից սահմանադրականությունը և միջազգային իրավունքը երաշխավորում են ժողովուրդների և ազգությունների իրավահավասարությունն ու ինքնորոշումը, տնտեսական ու սոցիալական ազատ զարգացումը առանց որևէ միջամտության⁵:

Ազգերի ինքնորոշման դասական և արդյունավետ տարրերակը անկախ, ինքնիշխան պետականությունը յուրաքանչյուր ազգի հասարակական կյանքի կազմակերպման, կանոնակարգման, բնականու զարգացման և անվտանգության ապահովման իրավաքաղաքական հեմայունն է: Պետական ինքնիշխանության հավաքության և նրա բովանդակության վերաբերյալ տեսակետները բազմաթիվ ու բազմազան են⁶: Ընդհանրապես, ինքնիշխանության հիմնահարցը պետության գոյության հա-

մար առանձնահատուկ նշանակություն ունի: Խնդրո հիմնահարցի նշանակությունը նաև նրանում է, որ ինքնիշխանությունը, լինելով իրավական կատեգորիա, ներառում է սոցիոլոգիական-քաղաքագիտական և տնտեսական երանգները⁷: Նշված երանգները ինչպես նկատեցինք պատմական

«...Անձի ինքնիշխանությունը նրա կամքի ազատության և սոցիալական նորմերի սահմաններում ինքնուրույն ու անկախ վարքագծի դրսուրումն է...»

տարրեր դարաշրջաններում պետական ինքնիշխանության իրական բովանդակության վրա ունեցել են հստակ և էական ազնեցություն, ինչը նաև կանխորոշել է ինքնիշխանության տեսական հայեցակարգի ձևակիրման ու զարգացման հիմնական ուղղությունը:

Բազմադարյան զարգացման ընթացքում պետական ինքնիշխանության հայեցակարգը պարունակում է նրա հասկացողության վերաբերյալ բազմաթիվ սահմանումներ: Օրինակ. **Ելինեկը** պետական ինքնիշխանությունը դիտարկում էր որպես պետության «իրավական ինքնորոշման բացարկի ունակություն»: «Միայն ինքնիշխան պետությունը, - նշում էր նա, - կարող է իր կողմից սահմանված և ճանաչված իրավական սահմաններում

³ Ազգերի ինքնորոշման իրավունքի սասին մանրանասն տե՛ս. Շեվցով В.С. Национальный суверенитет: Проблемы теории и методологии. М.. 1948; Безуглов А.А. Суверенитет советского народа. М., 1975.

⁴ Տե՛ս. Курс международное право. Т. 2, М., 1989, с. 169.

⁵ Տե՛ս. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1996թ. միջազգային պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետը, որտեղ մասնավորապես նշված է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք»: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:

⁶ Տե՛ս. Левин И.Д. Суверенитет. М., 2003; Проблемы суверенитета в Российской Федерации. М., 1994; Грохальски С. Государства в решении современных глобальных проблем /Международно - правовые аспекты/. Автореф. докт. дисс. М., 1998; Котов А. К. Государственный суверенитет Республики Казахстан: политическо - правовой анализ становления и проблемы национально - государственного развития: Автореф. докт. дисс. Алматы, 1994.

⁷ Տե՛ս. Грохальски С. նշվ. աշխ., էջ 24:

կատարյալ ազատությամբ ծևավորել իր իրավասության նորմատիվ բովանդակությունը»⁸: Ինքնիշխան պետական իշխանությունը, նրա կարծիքով, նշանակում է «անկախ և գերազույն իշխանություն, որը չի ճանաչում իրենից ավելի բարձր իշխանություն»⁹: Անգլիացի նշանավոր միջազգայնագետ Լ. Օպենհեյմի կարծիքով, պետական ինքնիշխանությունը «բարձրագույն իշխանություն է, որը կախյալ չէ ոչ մի երկրային իշխանությունից»: «Ինքնիշխանությունը բառիս բուն իմաստով, - պարզաբանում է Օպեն-

հայրենական և ռուսական իրավաբանական գրականության մեջ: Այսպես՝ իրավագիտության դոկտոր Վ. Նազարյանը գտնում էր. «սահմանադրությունն իրավաբանական կապ է հաստատում ազգի (ժողովրդի) և նրա պետության սուվերենության միջև, պաշտոնապես ամրագրում է պետական սուվերենության ստորադաս, ծառայական դերն ազգային սուվերենության նկատմանը, որն սկզբունքային նշանակություն ունի երկրում ժողովրդավարական քաղաքական-իրավական ռեժիմի հաստատման համար: Ազգային և պետական սուվերենության միջև եղած կապը կանխորոշված է ազգ (ժողովրդ) - պետություն հարաբերակցությամբ, որն ամեն մի պետության սահմանադրության առանցքն է¹²: Ինչպես պետության բոլոր լիազորությունների միակ աղբյուրը ժողովուրդն է (ազգը), այնպես էլ պետական սուվերենության

**«...ժամանակակից
սահմանադրականությունը և
միջազգային իրավունքը
երաշխավորում են ժողովուրդների և
ազգությունների
իրավահավասարությունն ու
ինքնորոշումը, տնտեսական ու
սոցիալական ազատ զարգացումը
առանց որևէ միջամտության...»**

հեյնը, - Ենթադրում է «լիակատար անկախություն ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ նրանից դուրս»¹⁰:

Ամերիկան սոցիոլոգիական բառարանում պետական ինքնիշխանությունը մեկնաբանվում է որպես «պետության մենաշնորհը իր իրավագորության սահմաններում օգտագործելու պետական իշխանությունը»¹¹:

Պետական ինքնիշխանության հասկացության և նրա բովանդակության վերաբերյալ համանման տեսակետներ կան նաև

ծավալը և բովանդակությունը պայմանավորված են ազգային սուվերենությամբ»¹³:

«Ինքնիշխանությունը, - նշում է Ի. Լևինը, - պետության լիիշխանությունն է իր տարածքում և անկախությունը այլ պետություններից»¹⁴: Ըստ Ա. Կոտովի «Ինքնիշխանությունը պետության հատկություն, հատկանիշ կամ սկզբունք չէ: Ինքնիշխանությունը հենց պետական իշխանությունն է որակապես լիիրավ և գործառնությամբ՝ ինքնուրույն»¹⁵:

⁸ Տե՛ս. Ելլինեկ Գ. Общее учение о государствстве., 1908. с.363.

⁹ Տե՛ս. Նույն տեղը, էջ 347:

¹⁰ Տե՛ս. Оппенгейм П. Международное право. Том 1, Полутом 1, М., 1948, с.130.

¹¹ Տե՛ս. Dictionary of Sociology and Related Sciences. Totowa /New Jersey/. 1988, էջ 304.

¹² Տե՛ս. Վլադիմիր Նազարյան. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կոնցեպցիան. Երևան. 1992, էջ 12-13:

¹³ Տե՛ս. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. Խմբ. պրոֆ. Ն.Այվազյան, Երևան, 2003:

¹⁴ Տե՛ս. Левин И.Д. Суверенитет. М., 2003, с. 71; Шевцов В.С. Государственный суверенитет. М., 1979, с. 5.

¹⁵ Տե՛ս. Котов А. К. Государственный суверенитет Республики Казахстан: политическо-правовой анализ становления и проблемы национально - государственного развития: Автореф. докт. дисс. Алматы. 1994, с.28.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Բավարարվենք բերված օրինակներով և արձանագրենք, որ դրանցում, պետական ինքնիշխանության մասին եղած ընդհանրություններով հանդերձ, կան նաև տարածայնություններ հետևյալ առումներով։ ինքնիշխանությունը պետության, թէ՝ պետական իշխանության հատկությունն է, այն բաժանելի է, թէ՝ անբաժան, անսահմանափակ է, թէ՝ սահմանափակ պետական ինքնիշխանության և ազգային ինքնիշխանության հարաբերությունը, պետական ինքնիշխանությունը խոչընդոտում է պետությունների ինտեգրմանը գլոբալիզացիայի արդի դարաշրջանում թէ՝ ոչ և այլն։ Մեր կարծիքով, անկախ նրանից, թէ ինչպես է հասկացվում պետական ինքնիշխանությունը և նրա բովանդակությունը, մեթոդաբանական տեսանկյունից անհրաժշտ է քննարկել խնդրությունը համար երկու առումով ծևական - իրավաբանական և փաստացի։ Դետևելով տրամաբանության կանոններին առաջին տեսանկյունից պետք է դիտարկել ինքնիշխանությունը՝ որպես պետականական երևույթ կամ կատեգորիա, իսկ երկրորդը ենթադրում է խնդրությունը քննարկումը նրա նյութական-առարկայական բովանդակության տեսանկյունից, որպեսզի համակողմանի պատկերացում կազմենք այդ բարդ երևույթի մասին։ Զևական - իրավաբանական առումով ինքնիշխանությունը պետության գլխավոր ու էական հատկություններից է, առանց որի վտանգվում է բուն պետության գոյությունը։ «Բնական իրավունքի տեսությունը, - նշում է Գ. Ելինեկը, արձանագրում է պետության բնականութիւնը, որի իշխանությունը բնութագրվում է ինքնիշխանության էական հատկանիշով»¹⁶։ Ա. Կոտորված իրավացիութեն նշելով, որ պետական ինքնիշխանության իմացությունը ելակետային սահմանագիծ է նոր կարգի պետությունների հու-

թյունը հասկանալու համար, այնուհանդերձ, ինքնիշխանությունը վերագրում է ոչ թե պետությանը, այլ պետական իշխանությանը¹⁷։ Նման տեսակետը փաստարկված չէ և արդարացիորեն քննադատվում է գրականության մեջ, քանի որ պետական իշխանությունը, որպես պետության անբաժան հատկանիշ, կարող է դրսկորպել ինչպես լիիրավ իշխանության, այնպես էլ սահմանափակ իշխանության ձևով։ Սակայն իր եւլումը պետական իշխանությունն ինքնին օժտված չէ ինքնիշխանությամբ, այլ հանձինս համապատասխան պետական մարմինների, որոնք, օժտված լինելով որոշակի լիազորություններով, իրականացնում են պետական իշխանությունը։ Պետական իշխանությունն իրականացնող երեք հիմնական ճյուղերը

«...Պետական ինքնիշխանությունը բացառապես ամբողջ պետության անբաժան հատկանիշն է, այլ ոչ թե նրա առանձին մասերի, ներառյալ նաև պետական իշխանությունը...»

օրենսդիրը, գործադիրը և դատականը, ինքնին երբեկցէ օժտված չեն պետական ինքնիշխանությամբ։ Դետևաբար, պետական ինքնիշխանությունը բացառապես ամբողջ պետության անբաժան հատկանիշն է, այլ ոչ թե նրա առանձին մասերի, ներառյալ նաև պետական իշխանությունը։

Ժամանակակից սահմանադրական դոկտրինայում և պրակտիկայում, ինքնիշխանությունը որպես ամբողջ պետության անբաժան և էական հատկանիշ, շատ հաճախ նշվում է երկրի հիմնական օրենքում։ Օրինակ, Իռլանդիայի Սահմանադրությունում ամրագրված է. «Իռլանդիան ինքնիշխան, անկախ և ժողովրդավարական պետություն է»¹⁸։ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1 -ին հոդվածի

¹⁶ Տե՛ս. Կոնստитуциии государств Европейского Союза. М., 1999, с. 326; Նաև Պորտուգալիայի Սահմանադրությունը և այլն /նույն տեղը, էջ 521/։

¹⁷ Տե՛ս. Ելлиնեկ Գ. Общее учение о государстве, с.355.

¹⁸ Տե՛ս. Կотов А. К. Государственный суверенитет Республики Казахстан... с.16, 28, 31.

համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», այսինքն պետական ինքնիշխանության միակ կրողը Հայաստանի Հանրապետությունն է, այլ ոչ թե նրա առանձին մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք օժտված են միայն իշխանական լիազորությամբ:

Պետությունն իր ինքնիշխանությամբ կոչված է առավել բարենպաստ պայմաններ ապահովել ժողովրդի (ազգի) տնտեսական, քաղաքական և սոցիալ - մշակության արժանապատիվ կյանքի համար, այսինքն ժողովրդի ինքնիշխանության իրականացնան համար: Ուստի, պետական ինքնիշխանության ժավալը միշտ էլ ենթակա է որոշակի փոփոխման, այն կարող է սահմանափակվել կամ ընդլայնվել կապված ժողովրդի ինքնիշխանության իրականացնան համար և ազգի առջև ծառացած խնդիրներին առավել ճիշտ ու արդյունավետ լրիցումներ տալու համար¹⁹:

Այսպիսով, պետական ինքնիշխանությունը բացարձակ և անսահման չէ. նրա սահմանափակ բնույթը պայմանավորված է ոչ միայն ժողովրդի ինքնիշխանությամբ, այլև պետությունների միջազգային հանրության գոյությամբ, որի անդամ պետությունները, անվերապահորեն ընդունելով միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի գերապատվությունն իրենց ազգային օրենսդրության նկատմանք, դրանով իսկ կամովին սահմանափակում են իրենց ինքնիշխանությունը որոշակի ոլորտներում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ «անսահմանափակ և բացարձակ պետական ինքնիշխանության» տեսական հայեցակարգը երբեկեց իրականություն չդարձավ և չէր էլ կարող դաշնալ, քանի որ պետությունների «անսահմանափակ և բացարձակ» ինքնիշխանության պայմաններում անհնար է ապահովել ինչպես ներպետական կայուն ժողովրդավարական հաստատությունների և ինստիտուտների բնականոն գործառնությունները, այնպես էլ անհնար է ապա-

հովել միջազգային անվտանգության համակարգը, միջազգային իրավակարգը և միջազգային օրինականությունը, առանց որոնց հնարավոր չէ քաղաքակիրթ աշխարհի գոյությունն ու զարգացումը:

Պետությունների ինքնիշխանությունը սահմանափակված է ոչ միայն միջազգային իրավական ակտերի գերապատվությամբ և ստանդանած պարտավորություններով, այլև տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցելով, համարաշնային կամ դաշնային պետական միություններում ընդգրկվելով:

Սահմանադրական զարգացման պրակտիկայում, ինչպես նշում է պրոֆեսոր Չիրկինը, դաշնային պետությունների և նրա սուբյեկտների ինքնիշխանության վերաբերյալ գոյություն ունի երկու տեսակետ, եթե դաշնությունը իիմնված է պետությունների միության վրա, ինքնիշխանությամբ կարող են օժտված լինել (իհարկե, տարբեր ծավալով ու բովանդակությամբ) և միութենական պետությունը, և նրա սուբյեկտները, իսկ եթե դաշնությունը կազմված է «ինքնավարության» իիմունքների վրա, ապա պետական ինքնիշխանությամբ օժտված է միայն դաշնությունը²⁰:

Այսպիսով, պետական ինքնիշխանությունը ծևական-իրավաբանական առումով ամբողջ պետության անբաժան և եական հատկանիշն է, որի տարածքային գերակայությունը ներպետական հարաբերություններում սահմանափակվում է Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով, իսկ արտաքին հարաբերություններում միջազգային իրավական նորմերով ու սկզբունքներով:

Պետական ինքնիշխանությունը փաստացի առումով ներպարում է պետական ինքնիշխանության նյութական-առարկայական բովանդակությունն ու ծավալը, որը պայմանավորված է տվյալ պետության քաղաքական - իրավական կարգավիճակով, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և օբյեկտիվորեն գոյություն ունեցող այլ գործուներով:

¹⁹ Տե՛ս. Վլադիմիր Նազարյան. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կոնցեպցիան, էջ 12-13:

²⁰ Տե՛ս. Կիրքին Վ.Ե. Современное федеративное государство. М., 1997, с. 43 44.

Իրավունքի աղբյուրները գլոբալացման պայմաններում

Տիգրան ԹՈՐՈՍՅԱՆ
Հայցորդ

Հասարակական-քաղաքական վերափոխումները կապված անցյալ դարավերջում Հայաստանի համաշխարհային սոցիալ-տնտեսական և մշակութային տարածության մեջ ինտեգրման գործընթացի հետ, ազդեցին նաև պետության ողջ համակարգի վրա: Առավել խոր բարեփոխումների ենթարկվեցին իրավունքի և օրենսդրության համակարգերը: Իրավական կարգավորման բովանդակության խոր փոփոխությունները չեն կարող չանդրադաշտայի նաև նրա ձևի վրա: Օժոված լինելով հարաբերական ինքնուրույնությամբ, ձևը որպես բովանդակության արտաքին գոյության և դրսնորման եղանակ, ձևափոխվում, նորացվում է բայ բովանդակության ու նրա գոյության կրնկրեալ պայմանների փոփոխման: Փիլիստիայական այս դրույթը բովանդակության ու ձևի որպես ամենայն իրականության փոխապակցված կողմերի մասին, ձիչու է նաև իրավական կատեգորիաների իրավունքի և նրա ձևերի (աղբյուրների) վերաբերյալ:

Հայաստանի՝ այս ուղղությամբ հասարակական զարգացումը պայմանավորող առավել ընդհանուր գործոնը գլոբալացման պայմաններին են, որոնք նաև ուղղակի ազդեցություն են ունեցել ազգային իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգի վրա: Այս գործընթացները հանգեցրին ինչպես ազգային իրավունքի համար նոր աղբյուրների առաջացմանը, այնպես էլ նախկինում գոյություն ունեցող աղբյուրների ձևափոխմանը և նրանց դերերի վերաբաշխմանը:

Միջազգային հանրության հետ ազգային հասարակությունների խորացող փոխգործակցության պայմաններում իրավական զարգացման որոշիչ միտումն է դառնում ներպետական և միջազգային իրավունքի ավելի սերտ փոխգործակցությունը: Ներպետական իրավունքի հանդեպ միջազգային իրավունքի գերակայության ճանաչումը, ինչպես նաև միասնական, մեկ համալիրի մեջ քաղաքացիների իրավունքների դատական պաշտ-

պանության միավորումը առաջ բերեցին Հայաստանի համար իրավունքի նոր աղբյուրների (ձևերի) օգտագործման: Այդպիսիք են, օրինակ, միջազգային (վերագգային) նախադեպերը և միջազգային պայմանագրերը (համաձայնագրերը): Գլոբալացման գործընթացները, պայմանավորված նրանով, որ մարդկությունն արտադրության ինդուստրիալ ձևերից անցավ բարձր տեխնոլոգիական ձևերի, հանգեցրին նաև հասարակության կառավարման համակարգերի լուրջ փոփոխման: Այսպես, ինչպես նշում է Ֆ. Ֆուկույաման, «20-րդ դարի վերջում մենք տեսնում ենք, որ բյուրոկրատական հիերարխիան անկում է ապրում, իսկ նրա տեղը գրավում են փոխգործակցության պակաս պաշտոնական, ինքնակազմակերպվող ձևերը»¹: Կենտրոնացված տոտալիտար պետություններին փոխարինելու են գալիս հասարակության կառավարման ժողովրդավարական սկզբունքներ կիրառող պետություններ: Կարելի է վիճել, թե որքան արդ-

¹ Տե՛ս. Ֆուկույամա Փ. Վելիկու բարձրացում. Մ., 2003, ս. 266.

յունավետ են աշխատում այդ սկզբունքները, սակայն, այնուամենամիվ, իշխանությունն այդ պետություններում ստիպված է թույլ տալ բնակչության այս կամ այն աստիճանի քաղաքական մասնակցության: Բացի այդ, իշխանությունը այդ «նոր ժողովրդավարություններում» ենթարկվում է ուժեղ ճնշման, որն ուղղված է իրավասությունների ապակենտրոնացմանը:

Դամանման գործընթացներ են բնորոշ նաև կորպորատիվ կառավարման համակարգի համար: Խոշոր, հիերարխիկ կենտրոնացված ընկերությունները զիջում են իրենց դիրքերը ավելի փոքր, սակայն ավելի արագ և դիմանմիկ մրցակիցներին:

Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետները պնդում են, որ 21-րդ դարում հիերարխիկ մեծ կորպորացիաներն իրենց տեղը զիջելու են կազմակերպման մեկ այլ ձևի՝ ցանցերի, ապակենտրոնացված կազմակերպությունների գործողությունների համակարգման նոր ձևերի: Այդ խորը փոփոխությունների պատճառը կայանում է նրանում, որ հիերարխիկ, կենտրոնացված կազմակերպությունները, այդ թվում նաև պետությունները, անզոր են բավարարել սրբնացորեն բարդացող ժամանակակից աշխարհի ինֆորմացիոն պահանջնությունը²: **Սոցիալական մեծ կառույցների կառավարման և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ գիտելիքները արդեն անհնար է կենտրոնացնել մեկ տեղում և պետք է փոխանցվեն ներք:**

Նշված օրինաչափությունները չին կարող չշղափել իրավական ոլորտը, որում նույնական նկատելի են կարգավորման ապակենտրոնացում և ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում կարգավորման դիսպոզիտիվ ձևը, իհմնված մարդկանց և կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու նրանց համաձայ-

նության վրա³: Այդ իսկ պատճառով, իրավունքի ձևերի (աղբյուրների) զարգացման ժամանակակից միտում է դարձել մարդկանց, կազմակերպությունների ու պետությունների միջև հարաբերությունների կարգավորման պայմանագրային ձևը: Նորմատիվ պայմանագրիը ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում պրակտիկայում, հայտնվում են նորմատիվային պայմանագրերի նոր, ազգային իրավական համակարգին ոչ բնորոշ տեսակներ, զարգացում են ապրում նաև նախկին ձևերը: «Հասարակության և պետության զարգացմանը համընթաց իրավական պայմանագրերի կիրառման ոլորտի ընդլայնումը, ինչպես նաև պայմանագրային օրինաստեղծության գործընթացի արագացումը ընդհանուր առնամբ իրենից ներկայացնում է անշուշտ առաջադեմ երևույթ, - նշում է Ա. Մ. Մարչենկոն: - Տեսական և գործնական առումով դա նշանակում է պետության մեջ աշխարհի որոշակի սահմանափակում ազգային իրավաստեղծության ոլորտում և այդ գործընթացի մեջ այլ, ոչ պետական սուբյեկտների ներառում»⁴:

Փոփոխման են ենթարկվում նաև իրավունքի այլ աղբյուրները: Սոցիալական իրականության բարդացումը և միաժամանակ դրա դիմանմանը ու հարափոփոխականությունը, ինչպես նաև ապակենտրոնացումը կանխութեցին նորմատիվ ակտի որպես իրավունքի աղբյուրի (ձևի) էական փոփոխում: Այսպես, Ա. Վ. Բոշնոն համարում է, որ 20-րդ դարի վերջին տասնամյակին և 21-րդ դարավագրին բնորոշ է նորմատիվ ակտի այնախի հատկանիշների թուլացումը, ինչպիսիք են՝ նորմատիվությունը, գոյության տևողությունը, համընդիմարությունը⁵: Այդ փոփոխությունները կրում են օրենկուիվ բնույթը:

Արդի դարաշրջանը բնորոշվում է գիտության աներևակայելի արագ զարգացմանը: Իր ժագման պահից կատարելով

² Նույն տեղում, էջ 266:

³ Տե՛ս. Գլոբաлизация и развитие законодательства (очерки) / Отв. ред. Ю. А. Тихомиров, А. С. Пиголкин. М., 2004, С. 34.

⁴ Տե՛ս. Марченко М. Н. Источники права. М., 2995, с. 289.

⁵ Տե՛ս. Бонно С. В. Формы права: теоретико-правовое исследование: Автореф. дисс. ... д-ра юрид. Наук. М., 2004, с. 5.

իմնականում աշխարհայացքային գործառույթ, **գիտությունն այժմ դարձել է տնտեսական զարգացման գործոն:** Այսօր գիտությունն սկսում է հանդես գալ որպես սոցիալական որոշակի ուժ, անմիջականորեն առնչվելով հասարակական զարգացման և հասարակության կառավարման գործընթացների հետ: Գիտական նվաճումների արդյունքները կիրառվում են սոցիալական ու տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, մշակութային գործընթացների կառավարման համար: Աս պայմաններում իրավական կյանքում չի կարող չաճել նաև իրավաբանական գիտության (որևէ դիմումի) դերը:

Որպես գիտական իրավական գաղափարների, հայեցակարգերի համակարգ, որը իմնական է իրավունքի սկզբունքների վրա և համապատասխանում է հասարակության ու պետության պատմական զարգացման կոնկրետ պայմաններին, իրավաբանական դրկտրինը ներառում է այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ուսմունքը, փիլիսոփայական-իրավական տեսությունը, իրավագետ գիտականների կարծիքները, առավել հեղինակավոր հետազոտողների գիտական աշխատությունները: Գիտնականների կողմից դրկտրինը դիտարկվում է որպես իրավունքի օժանդակ աղբյուր (ծև): Այն մարմնավորվում է այլ ձևերի կաղապարի մեջ և հանդես է գալիս որպես իրավունքի բոլոր աղբյուրների հավաքական նախապատկեր: Դրկտրինական աղբյուրը կարող է լինել նաև օրինակ, իրավագիտությունը կամ իրավական դրկտրինը (իսկ այդպիսի փորձեր գրականության մեջ եղել են): Սեղ մոտ են Վ. Դորկինի դիրքորոշումը, որն օժտում է ՌԴ-ի Սահմանադրական դատարանի որոշումները հատուկ նախադեպային և նախաիրավաբանական (արեյուդիցիալ) հատկություններով: Այս առունով ՌԴ-ի և ՌԴ-ի Սահմանադրական դատարանի որոշումները, դրանցում պարունակվող իրավական դիրքորոշումներով հանդերձ, հանդիսանում են հատուկ տեսակի նորմատիվ ակտեր, որոնք ունեն որոշակի նախադեպային և պետության հատկություններ և հատուկ տեղ են գրավում իրավունքի աղբյուրների ընդհանուր համակարգում:

⁶ Տե՛ս. Բօշնո Ս. Վ. Ֆормы российского права. М., 2004, с. 88., Վասիլև Ա.Ա. Правовая доктрина как источник права: вопросы теории и истории. М., 2009.

⁷ Տե՛ս. Ստեփանով Վ. Գ. Правовая позиция: общетеоретические и прикладные аспекты: автореф. дисс. ... канд. Юрид. Наук. Н. Новгород, 2003, с.16.

անմիջական աղբյուրի դեր:

Դոկտրինի իրավակազմից դերը առավել վառ կերպով դրսւորվել է ՀՀ-ի սահմանադրական դատարանի գործունեության մեջ: Դրա պրակտիկայի հետ է կապված իրավական նոր երևույթ՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման առաջացումը: Հետագայում այս կատեգորիան ձեռք է բերել ավելի լայն նշանակություն: Մասնավորապես, այսօր երբ խոսք է գնում մարդու իրավունքների հարցերով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների մասին և այդ կատեգորիային աշխատում են տալ ընդհանուր գիծ, իրավական բնույթը⁷:

Ինչ է ներկայացնում իրենից իրավական այդ ֆենոմենը, գիտնականների շրջանում դեռ չկա դրա միասնական ու միանշանակ ընկալում, ընդ որում դա վերաբերվում է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեությանը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, կարծում ենք, որ տվյալ կատեգորիան ունի իր սեփական բովանդակությունը և չի նույնացվում այլ, համանաման իրավական երևույթների հետ, ինչպիսիք են, օրինակ, իրավագիտությունը կամ իրավական դրկտրինը (իսկ այդպիսի փորձեր գրականության մեջ եղել են): Սեղ մոտ են Վ. Դորկինի դիրքորոշումը, որն օժտում է ՌԴ-ի Սահմանադրական դատարանի որոշումները հատուկ նախադեպային և նախաիրավաբանական (արեյուդիցիալ) հատկություններով: Այս առունով ՌԴ-ի և ՀՀ-ի Սահմանադրական դատարանի որոշումները, դրանցում պարունակվող իրավական դիրքորոշումներով հանդերձ, հանդիսանում են հատուկ տեսակի նորմատիվ ակտեր, որոնք ունեն որոշակի նախադեպային և պետության հատկություններ և հատուկ տեղ են գրավում իրավունքի աղբյուրների ընդհանուր համակարգում:

թյունը», - գրում է Վ. Դորիկինը⁸: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես և մարդու իրավունքների հարցերով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, օժտված լինելով ինչպես գիտական, այնպես էլ նորմատիվ-իրավական բնույթով, իրենցից ներկայացնում են նորմատիվ-իրավական հատուկ երևույթներ, իսկ դրանք պարունակող որոշումները հանդիսանում են իրավունքի աղբյուրներ:

Անգլոսաքսոնյան և Եվրոպական իրավական համակարգերի մերձեցումն՝ պայմանավորած հնտեղացիոն գործընթացներով, իրենց հերթին բերում են իրավունքի աղբյուրների ունիվերսալացման: Բազում տասնամյակների բանավեճերի առարկա հանդիսացող հարցը՝ ազգային իրավական համակարգի մեջ իրավական նախադեպի փոխառնան և ներմուծնան մասին, այսօր, միջազգային դատական հանրության մեջ Հայաստանի դատական համակարգի ինտեգրման կապակցությամբ ծեռօք է բերում փաստական իհմքեր:

Գրականության մեջ նշվում է, որ ողջ դատական պրակտիկայի դերի աճ է նկատվում հետխորհրդային դատական համակարգում: Կարծում ենք, որ կոնկրետ դատական գործերի լուծնան գործընթացում դատական պրակտիկայի աճող նշանակությունը կապված է հասարակական հարաբերությունների, մեր ողջ կյանքի սրբնաթաց բարդացման հետ: Նորմատիվ-իրավական ակտն օժտված է բացառիկ հատկություններով, սակայն նա կրում է ընդհանուր, վերացական բնույթը և չի կարող նախատեսել կենսական կոնկրետ իրավիճակի բոլոր նրբերանգները, իսկ գործերի բանակը և բարդությունը դատարանում աճում է օրըստօք: Այդ իսկ պատճառով կոնկրետ գործի քնննան ընթացքում անհրաժեշտ է օրենքի կոնկրետացում յուրաքանչյուր առանձին գործի առանձնահատկություն-

ների վերաբերյալ, և միաժամանակ, օրենքի միասնական կիրառում բոլոր դատարաններում: Նման դրություն կարող է ապահովել միայն դատական պրակտիկան: Բացի այդ, դիմանմիկորեն զարգացող աշխարհում իրավունքը կարող է ուղղակի չհասնել հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքին, ինչը կարող է հանգեցնել բացերի առաջացմանը: Այդ պայմաններում և դեպքերում ևս անհրաժեշտություն է ծագում օգտագործել նախադեպը որպես իրավունքի աղբյուր: Դա է պատճառը, որ ռումանոգերմանական իրավական համակարգի երկրություն աճում է դատական պրակտիկայի դերը: Այդ մասին դեռ 20-րդ դարի երկրորդ կեսին գրել է Ռենե Դավիդը: Նա առաջարկում է ուշադրություն դարձնել այնպիսի գործոնի վրա, ինչպիսին է դատական պրակտիկայի հավաքածուների և տեղեկատվությունների բանակի շարունակական աճը, որանց կատարելությունը և պաշտոնական բնույթը: «Այդ իրավունքները և տեղեկատվությունները գրվում են ոչ իրավունքի պատմագետների և ոչ էլ դրանց ընթերցողների հաճույքի համար: Դրանք ստեղծվում են գործող իրավաբանների համար, իսկ դրանց դերը բացարկում է միայն նրանով, որ դատական պրակտիկան բարի բուն իմաստով հանդիսանում է իրավունքի աղբյուր»⁹:

Դրա հետ մեկտեղ դատական պրակտիկան որպես իրավունքի աղբյուր (ձև) դիտարկվող հայեցակարգն ունի ոչ քիչ թվով լուրջ հակառակորդներ, որոնք առաջ են քաշում բազմաթիվ և տարաբնույթ փաստարկներ՝ տվալ հայեցակարգի դեմ: Սակայն, այդուհանդերձ, գտնում ենք, որ դատական նախադեպը՝ շատ դժվարությամբ, աստիճանաբար ամրապնդվում է ազգային իրավունքի աղբյուրների համակարգում և ծեռօք է բերում որակական նոր հատկությունների ու նշանակություն:

⁸ Տե՛ս. Зорькин В. Д. Прецедентный характер решений Конституционного суда Российской Федерации // Российская юстиция. 2004, N 12, с. 5.

⁹ Տե՛ս. Давид Р. Основные правовые системы современности / Пер. с фр. В. А. Туманова. М., 1988, с. 131, 137.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանցավորության դեմ՝ համատեղ ուժերով.....	2
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Եվրոպայի խորհրդի փորձագետին.....	3
Բարեփոխումների նոր հայեցակարգ.....	3
ՀՀ գլխավոր դատախազն ու Մեծ Բրիտանիայի դեսպանը քննարկել են համագործակցության հարցեր.....	4
Կզարգացվեն փոխգործակցության մեխանիզմները.....	4
ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների համակարգով խորհուրդն անհանգստություն է հայտնել	5
ՀՀ նախագահի հրամանագրով.....	6
Դոկտորական ատենախոսությունների պաշտպանություն.....	7
Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում.....	7

ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Արմեն ԽԱՎԱՏՈՒԹՅԱՆ Հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության զարգացման հիմնական ուղղությունները.....	8
---	---

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՕՐԵԼ

Վարդաճ ՍՈՒՐԱԴՅԱՆ Իրավաբանական ազատականության ըմբռնումը իրավաբանական տիպարանության տեսանկյունից.....	14
--	----

ԴԱՏԱՄԵՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՐԱԾՈՒՄ

Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ Քրեական արդարադարձության սկզբունքների համակարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով.....	19
--	----

ՏԵՍՎԿԵՑ

Շուշան ԽՄՐԱՅԵԼՅԱՆ Քրեականական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ.....	26
---	----

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նազելի ՍՈՒԹԻԱՍՅԱՆ ՀՀ ֆինանսական գործունեության տնտեսական և իրավական մեթոդները և դրանց կատարելագործման հիմնախնդիրները.....	30
--	----

ՈՒՍՈՒՄՆԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ

Գոռ ՀՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը կամ ինչ է ասում մեզ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը	36
--	----

ԵՐԵՎԱՆԸՐԴ ԳԻՏԱԿԱՆ ՀԱԲԻՌ

Յրաշիկ ԶԻԼԱԿՅԱՆ Քաղաքացու առողջության եվ դրան պատճառված վնասի հասկացությունը.....	42
--	----

ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Միքայել ԽԱՎԱՏՐՅԱՆ, Ցողիկ ԱԶԻՋՅԱՆ Հանրային՝ տաճարային սեփականությունն ու տնտեսությունը Հին Հայաստանում.....	48
---	----

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր ԻԿԻԼԻԿՅԱՆ Պետական ինքնիշխանության ժամանակակից հայեցակարգի շուրջ.....	55
--	----

ՀՐԱՄԱՆԱԳՈՒՄ

Տիգրած ԹՈՐՈՍՅԱՆ Իրավունքի աղբյուրները գլոբալացման պայմաններում.....	60
--	----